Luq
939

№ 978.
Ш. 5
п 4.
№ 943.

2012 2011-08

ՂԱԲՈՒԲՆԵԱՑ

ԹՈՒՂԹ ԱԲԳԱՐՈՒ

Լսկ
939
սկ
31 AUG 2007

ԼԱԲՈՒԲՆԵԱՅ

ԴԻՒԱՆԱԳԻՐ ԴՊՐԻ ԵԳԵՍԻՈՅ

ԹՈՒՂԹ ԱԲԳԱՐՈՒ

ՅԵՂԵԱԼ ՅԱՍՈՐԻՈՅՆ Ի ՁԵՌՆ Ս. ԹԱՐԳՄԱՆՉԱՅ

№ 978 ж
943
БИБЛІОТЕКА
ВОСТОЧНЫХ КЛАССОВЪ
ЛЕНИНГРАДСКАГО ИНСТИТУТА
ЖИВЫХЪ ЯЗЫКОВЪ.

ԼՈՒՍԱԲԱՆԵԱԼ

Ի Ս. ՂԱԶԱՐ Ի ՎԱՆՍ ՄԽԻԹԱՐԱՅ

Ի ՎԵՆԵՏԻԿ

1868

18934
939-2012
α (4844-50)

БИБЛІОТЕКА
СПЕЦІАЛЬНЫХЪ КЛАССОВЪ
ЛАЗАРЕВСКАГО ИНСТИТУТА
ВОСТОЧНЫХЪ ЯЗЫКОВЪ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Զուգակից ժամանակաւ առաքելական արանց և հարանց, և քան զյոլովս 'ի նոցունց հնագոյն, այլ առաջին յետ նոցա ըստ դասակարգութեան պատուոյ և ընծայութեան յեկեղեցի. էն գործք և թուղթք Աբգարու թագաւորի Եդեսիոյ՝ զոր նախնիք մեր համարին ոչ միայն Հայոց թագաւոր՝ այլ և 'ի զարմէ Արշակունեաց, վեցերորդ 'ի Վաղարշակայ Ա. իսկ Աբգարիք՝ յայլմէ տոհմէ ասեն և առանձինն Ուռհայի դաւառապետ կամ թագաւոր, և զպայազատութիւն տոհմին տեւեալ բաւեալ ցամ Ցեառն 217։ Խնդիրք և քննութիւնք վաւերականութեան գործոց Աբգարու և թղթոցն գրելոց 'ի նմանէ առ Փրկիչ մեր Քրիստոս՝ 'ի կենարար տնօրէնութեանն իւրում, և սորա պատասխանի առ Աբգար, և Դատաւակին՝ (կամ անձեռագործ պատկերին) բերելոյ յԵդեսիա՝ 'ի նուիրակացն Աբգարու, այս ամենայն յեկեղեցական պատմութիւնս նախակարգեալ Ճառին, առաւել կամ նըւազ ընդունելութեամբ հեղինակացն. յորոց բազումք քան զսակաւս միաբանին ասել զնոսին՝ եթէ ոչ սրբազանաւ այլ գոնեա պատմական ստուգութեամբ հա-

ւաստիս. և յառաջնոց անտի դարուց քրիստոնէութեան մինչև ցմերս իսկ՝ գտանին գրեալք անընդհատ աւանդողք և ընդունողք նոցին անբերկբայապէս, և պատուողք թղթոցն յիշեցելոց՝ իբրև սրբազանից տըչութեանց, մինչև որպէս զպահպանակս կամ գրապանակս գրել և կրել զնոսին յանձինս իւրեանց. և այս ոչ միայն յարևելս, այլ և 'ի ծագս արևմտից Անգլիա [1]։ Մեր ոչ են կամք և խնդիր աստանօր վասն ստուգութեան և որպիսութեան իրացդ, այլ աղբերաց պատմութեանն՝ յորմէ առեալ է ամենայն եկեղեցական պատմչաց, Եւսեբեայ և այսր, որ համարի առաջին յիշատակող դորին, վասն կորստեան երիցագունից քան զինքն գրչացն բանից Հեգեսիպպեայ, Աբիրիկանու, և այլոց։ Բայց 'ի վերայաբանութիւնս ինչ սրբոց արևելից որք գրեալ են յասորի լեզու՝ յերկրորդ դարու Քրիստոսի, և 'ի սկիզբն ևս դարուն՝ լինին յիշատակք գործոց Աբգարու և Թադէի, որպէս ամենեցուն ծանօթք յայն կողմանս։ Տերտուղիանոս նոցին մերձաւորն ժամանակաւ՝ 'ի խօսսն վասն քրիստոնէից ջատագովութեանն՝ բասրէ զՀռովմայեցիս, վասն ծերակուտին քննութեամբ ընդունելոյ զաստուածս 'ի պաշտօն, նովին գրեալթէ բանիւք՝ զոր ընթեռնումք 'ի թղթին Աբգարու առ Տիբեր կայսր, և համարիմ զայս ոչ անծանօթ լեալ այնմ Ճարտար հեղինակի։ Աբդիաս Բաբելոնացի, թէ և թերուղիղ և անվաւեր գրիչ, այլ կարի քաջ հին այր [2], յիշէ 'ի գործս Թովմայի առաքելոյ զառաքումն եղբօր նորին Թադէի 'ի նմանէ առ Աբգար՝ ըստ գրով խոստմանն Քրիստոսի։ Եւ յեկեղեցւոջ մերում 'ի հին տօնացոյցս՝ որ ըստ կարգադրութեան Ս. Սահակայ Պարթևի՝ 'ի 23 դեկ-

1 Գիւրբդոն, յէջ 154–5 գրոցն՝ զոր զկնի յիշելոց եմք։

2 Մի յ'ՀԲ աշակերտաց կոչէ զինքն. այլ զի յիշին 'ի գիրսն հեղինակք կրսերք ժամանակաւ, համարի և ինքն հաւաքող գրոցն ոչ երիցագոյն քան զ'Գ դար։

տեմքեր ամոյ այսպէս գրի և պատուիրի. Տօն «Ադդէի հայրապետի Եդեսիայ քաղաքի, աշակերտին Թադէոսի. և ընթեռնուն զԹուղթն Աբգարու և զգիրս նորին». և յայտ է թէ սուրբ և իմաստուն հայրապետն մեր ոչ յԵւսեբեայ ինչ ուսաւ զգործս Աբգարու, այլ յիւրմէ նախնոյն՝ 'ի Գրիգորէ Լուսաւորչէ, և սա իսկ 'ի հարցն Աստուծոյ ընկալաւ զաւանդութիւն տօնին, որպէս և զայլ բազում կարգս եկեղեցւոյ և զընթերցուածս սուրբ գրոց՝ յեկեղեցւոյ անտի արևելից 'ի դրացւոյ աշխարհիս մերոյ, յորմէ և առաջին մուտք քրիստոնէութեանն եղեն 'ի Հայս. և կարգք պաշտամանց նորոց օրինացս կանխագոյն և անդորրագոյն ծաւալեալ էին անդ, և պատուով ընկալեալք լինէին 'ի մերայոցս, ոչ միայն 'ի գրիգորեան դարու այլ և ցկէս Ե դարու և անդր ևս. մինչև թարգմանչաց մերոց նախապատուեալ զյունական դպրութիւն և զեօթանասնից թարգմանութիւն՝ տակաւ ուծացան յԱստուծոյ։ Յիշատակ տօնահրաման գրոցդ՝ ոչ միայն զհին ծանօթութիւն թղթոցն Աբգարու յայտ առնէ, այլ և զմեծ և զսրբազան վարկ նորին, մինչև 'ի կարգի նուիրական մատենից հրամայել զընթերցուածն յեկեղեցւոջ, ոչ մի անգամ այլ և երկիցս՝ յայլում ինչ աւուր տօնականի [1]։

Իսկ ո՞ արդեօք հեղինակ կամ հաւաքող գործոցս և թղթոց Աբգարու. զայդ կիսամանեայ ուսանիմք յԵւսեբեայ, որ 'ի քարտէս դիւանաց Եդեսիոյ քաղաքի ասէ գտեալ զայնոսիկ, այլ և 'ի յոյն բան յեղեալ յառաջնոց քան զինքն հետաքննից արանց, զոր և ինքն յերիւրէ 'ի վերջին գլուխ Ա. հատնելոց թեանն և յառաջին գլուխ Բի իւրումն եկեղեցական պատմութեան [2]։ Ա.յլ առաւել ևս տեղեակ և ծանօթ առնէր զմեզ խնդրոյս՝ բազմահմուտն և բազմախոյզ

1 Տես յէջ 12 'ի ծանօթութեան։

2 Տես զբանս Եւսեբեայ 'ի Յաւելուածս գրոցս։

յետ Եւսեբեայ յարեւելեան Հարս՝ մերս անմահ Ե-
բախտեաց արժանաւոր քերդողահայր և պատմահայր,
Մովսէս Խորենացի. որ 'ի ՆԳ. գլ. Բ՝ գրոց պատմու-
թեանն Հայոց յականէ յանուանէ նշանակէր զՀեղի-
նակ թղթոցն Աբգարու, այսպէս ասելով, ըստ այժ-
մեան օրինակաց գրոցն. «Ղերուբնայ որդի Ափշադա-
բայ դպրի՝ գրեաց զամենայն գործս՝ որ ինչ յաւուրս
Աբգարու և Սանատրկոյ, և եդ 'ի դիւանին յԵդե-
սիայ»։ Յորմէ անեղկբայ հաւաստի զի՝ սա ինքն էր
աղբիւր բանիցն ընդօրինակելոց յԵւսեբեայ, յորոց
Հոխագոյնս փոխաբերեաց ինքն Խորենացի յիւրումն
պատմութեան, շարահիւսելով զպատՀէնս հնգեցուն
թղթոցն որ յԱբգարէ կամ առ Աբգար. և զայն ևս
յայտ առնելով, որպէս է գուշակել 'ի կարգէ բանիցն,
և որում վկայ նախայիշեալ տօնացոյցն, զի յառաջ
քան զիւր պատմագրելն յեղեալ էր յասորւոյն 'ի մեր
լեզու պատմութիւնս այս գործոց Աբգարու. և յստա-
կութիւն իսկ հայերէն շարագրութեանն հաւատար-
մացուցանէ զայս։ Արդ 'ի վկայութենէ անտի Խորե-
նացւոյ ցարդ [1] զանուն ևեթ Ղերուբնայ դպրի Եդեսիոյ
գիտեաք, և համարիմք 'ի կարգի կորուսեալ գրչաց.
մինչև դէպ եղև մեզ յամի 1852 'ի քննութեան հայե-
րէն ձեռագրաց մեծի մատենադարանին Բարիզու՝ հան-
դիպել յերկաթագիր Հառընտրի կամ Տօնամակի
(գրելոյ հաւանօրէն յ'ԺԲ դարու) այսմ Թղթոյ Աբգա-
րու. յորոյ վերջաբանէն ուսաք զի նոյն սա է յիշեալն
'ի պատմահօրէս մերմէ՝ դիւանագիրն Եդեսիոյ, ուստի
և Եւսեբեայ սատարեալն էր. և զի ստոյգ անուն հե-
ղինակին (կամ 'ի Խորենացւոյ կամ լաւ ևս յընդօրի-
նակողաց գրոց նորին սխալ ընթերցեալ) ոչ էր Բ այլ Ռ
տառիւ արտասանելի. իսկ առաջին ձայնաւոր տառ ա-

1 Ի յետնոց հեղինակաց մերոց միայն Մխիթար Այրիվանեցի թուէ 'ի շարակարգի պատմչաց մերոց յետ Տատիանու և յառաջ քան զՄար Աբաս՝ սխալ գրութեամբն Ղէրուբիա։

նուանն անստոյգ մնայ, 'ի չորիս հարեալ հնչմունս. քանզի առ 'ի չգոյէ ձայնական տառից յասորի գրութեանն (ܐܒܓܕ) զառաջինն Ղ՝ որբուրբևեա գրեալ է 'ի թղթիս յայսմ, յետոյ Ղ՝ որբուրբևեայ, Գիւրջդոն ընթեռնու Լ՝ աբուրբևա, իսկ առ Խորենացւոյ Ղ՝ երուբնայ. արդ առ 'ի հաստատ ունել մեզ զկոչումն ինչ, քանզի գոյ և 'ի պատմութեան ասա նման սմին այլ անուն՝ Ղ՝ աբբուռ, և զի վերջ անուանն և 'ի թղթի ասա և առ Խորենացւոյ կակղեալ ինն յանգի եաւ կամ այ, և զի սկզբան տառն է Լ՝ ըստ բնագրին՝ հաւանիմք ասելի Լ՝ աբուրբևեայ։

Յետ մեռասան ամաց ('ի սկիզբն 1863 ամի) ետ հարց զմեզ անգղիացի վարդապետն Գիւրջդոն՝ բազմահմուտ ասորագէտն, եթէ գուցէ՞ 'ի դպրութեան մերում վաղնջուց ինչ պատմութիւն հաւատոյն Աբգարու, զոր իւր գտեալ էր յասորի լեզու 'ի հին ձեռագիրս բերեալս 'ի վանորէից Նիտրիոյ յանապատին Եգիպտոսի՝ յանգղիացւոյ ոմանց. և մեր գիտացեալ զի սոյն իսկ թուղթս Աբգարու է, և անշուշտ բնագիր նորին գտեալն 'ի նմանէ, ծանուցաք նմա, որպէս և յիշէ ինքնին 'ի ծանօթութիւնս գրոց իւրոց (յէջ 166), և սպասէաք հրատարակելոյ նորին. որում ձեռն արկեալ նորա ոչ ժամանէր յամբոկ գործոյն, մահուն 'ի վերայ հասեալ 'ի միւսում ամի (1864), որ ոչ սակաւ զեղջ հասոյց բանասիրաց ընդ կորուստ այնքանոյ հմտի և զգօնի առն. ապա բարեկամ նորա Վ. Վրայթ վարդապետ փիլիսոփայութեան և մի 'ի պահապանաց ձեռագրաց Բրիտանիական մուսէոնի, աւարտէ զտպագրութիւնն 'ի նմին ամի, յօրինեալ և կանխաբան տեղեկութիւն վասն գիւտի գրոցս և թարգմանութեան և վարուց և վաստակոց թարգմանչին [1]. յորմէ 'ի վերայ

1 Խորագիր գրոցն է. Ancient Syriac Documents relative to the earliest establishment of Christianity in Edessa and the neighbouring countries, from the year after our Lord's Ascension, to

հասաք զի անդստին 'ի 1848 ամէ նշմարեալ էր Գիւ-
ըրդոնի զգործս զայս յերկուս ասորի մատեանս նա-
խայիշեալս, զորոց զմի գրեալ համարի գրեալթէ յա-
ռաջ քան զԺամանակ մատենագրութեան Խորենա-
ցւոյ, այն է 'ի սկիզբն Ե դարու, զմիւսն 'ի Զ դարու.
բայց երկոքին ևս անկատարք. առաջինն թերատ 'ի
սկզբանէ, թուղթ մի միայն, զորոյ նշանակեմք զտեղի
սկզբանն յէջս հայերէն թարգմանութեանս. իսկ եր-
կրորդն բազում ուրեք պակասաւոր. որպէս թէ եր-
կոցուն միանգամայն հաղիւ հաւասարել կիսոյ հայե-
րէն թարգմանութեանս, որ անթերի գոլով՝ պա-
տուականագոյն ընծայի ընդ զտեղի բնագրին, այս-
ինքն ասորւոյն, զոր Գիւրըդոնն հրատարակեաց հան-
դերձ անգղիարէն թարգմանութեամբ. և յորում ընդ-
այլս 'ի բանից՝ պակասէ բովանդակ Պատմութիւնն
Պատրոնիկեայ կամ Աւրաջնոյ գիւտի Խաչին. որոյ ա-
ւանդութեանն հնութեան վկայէ և Խորենացի, և սա-
հակեան հին տօնացոյցն, որպէս նշանակեսցի 'ի կարգի
բանիցն 'ի ծանօթութեան [1]: Երկասիրութիւն Գիւրը-
դոնի անագան ուրեմն եհաս 'ի ձեռս մեր մինչ պատրաս-
տեալ էաք զՀայերէն թարգմանութիւնս 'ի տպագրու-
թիւն, և բազդատեալ ընդ անգղիականին (ոչ գիտելով
մեր զասորի դպրութիւն) գտաք գրեալթէ բառ առ բառ
հաւասար մերումն, և հաստատեցաք ընդ հմտութիւն
երկոցուն ևս թարգմանչացն, մերոցս ասեմ նախնեաց
և անգղիացւոյն. նշանակեցաք և զտեղիս ուր և ցոր
վայր պակասէ բնագիրն. սակաւ ինչ և 'ի ծանօթու-
թեանց նորին օգտեցաք, մեր իսկ յառաջագոյն պատ-
բաստեալ գոլով որ ինչ մերոյ ոճոյս Ճահ թուէր. բա-
զում ուրեք միաբան գտեալ 'ի տեսութիւնս, և ուրեք
յերկբայս ոչ գտեալ աւելի տեղեկութիւն, որպէս

the beginning of the fourth century, և այլն. London, 1864. Այս գիրք են որ 'ի ծանօթութիւնս սակաւ յիշեսցի յանուն Գիւրըդոնի:

1 Տես յէջ 11:

յաշխարհագրական անուանն ինչ[1]։ Գիւրըդոնի յա-
րեալ է յառաջ և յետոյ Թղթոցն Աբգարու, որ 'ի
նմա վարդապետութիւն Թադէի կոչի, զԵւսեբեայ գը-
լուխ պատմութեան Աբգարու յեկեղեցական գրոց,
և զԽորենացւոյ պատմութիւնն Աբգարու, զոր և մեր
արդէն նման իմն օրինակ պատրաստեալ էր 'ի տիպ, է
ինչ որ զկնի գրոցս 'ի Յաւելուածս, և է որ 'ի ծանօ-
թութիւնս. յոր յարեցաք և զմիւս օրինակ թարգման-
նութեան Պատմութեանն Պատրոնիկեայ խաչին, զոր
ունէաք առ մեզ 'ի հնագիր Ճառընտրի միում։ Ի մա-
տենի իւրում ընծայէ անգղիացին և այլ ևս հատու-
տիր բանս զԹադէէ կամ զԱբգարու, յեղեալ յա-
սորւոյն, և զվկայաբանութիւնն Բարսեմեայ եպիսկո-
պոսի Եդեսիոյ, Շարբիւլայ, և զԱբիբայ սարկաւագին.
որոց միոյն վերջաբան հաստատեաց զկարծիս մեր, զոր
և չէր ինչ դժուարին գուշակել, վասն ժամանակի վե-
րըստին յարդարման կամ 'ի լոյս ընծայման գրոցն Լա-
բուբնեայ. յոր արժան համարիմ արդ մատչել սակա-
ւաբան տեսութեամբ։

Անգղիացի թարգմանն ողջմտութեամբ ընդունի
զհարազատութիւն և զհնութիւն Թղթոյս Աբգա-
րու կամ զԱրդապետութեանն Թադէի (որ Ադդէոս
գրի յԱսորին և Ադէ 'ի մերումս), բաց 'ի յայտնի է-
կամուտ բանից ինչ. և վկայութիւն նախնեաց մերոց
և Եւսեբեայ ցուցանէ զի անտարակոյս ընթեռնուին
նոքա զայս գործ՝ որպէս գրուած ժամանակակից դի-
պացն. և մեք այնպէս ընդունիմք մեծագոյն մասամբ.
այսինքն է, համարիմք զի մեծ մասն գործոյս անայլայ-
լակ արտադրութիւն և փոխադրութիւն է բանից Լա-
բուբնեայ, և ժամանակակից նորին դիւանագրաց. զոր
թուին ինձ հաւաստել թուականք աւուրց և ամսոց
ըստ դիւանական հրահանգաց, պարզութիւն ոճոյ բա-
նիցն, ամենևին անկողմնատար և դատաստանական իմն

1 Տես յէջ 11։

հանդարտութեամբ վկայութիւն տալով լսելեացն և տեսելոց իրաց. վասն որոյ և զյետին գովասանական բանս[1] զքրիստոնէից ժամանակին Աբգարու՝ Եկամուտ և յետնագիր համարիմ։ Են դարձեալ և այլ ուրեք բանք ինչ յայտնապէս Եկամուտք, զորոց 'ի ծանօթութիւնս ազգ առնեմք[2]։ Բայց գլխաւոր քան զամենայն են յիշատակք գրոց Նորոց կտակարանաց, որք ըստ մերումն մինչև ցարդ ընկալեալ եկեղեցական պատմութեան՝ չև ևս էին գրեալք 'ի հոգեկիր արանցն՝ յաւուրս վարդապետութեանն Թադէի և հաւատոցն Աբգարու. և թէպէտ զմահ սորա իբր 10 ամաւ անցագանեն Աւորիք ըստ Եդեսացւոց ժամանակագրութեան, այսինքն փոխանակ յ36 ամին Քրիստոսի՝ ըստ մեզ՝ 'ի 45 նորին ասեն, սակայն և յայնժամ իսկ չէին ընծայեալ մատեանք նորոց օրինացս՝ բայց 'ի Մատթէոսեան աւետարանէն. ապա յայտնապէս յետոյ մուծեալ են անուանք գրոցդ 'ի բանս վարդապետութեան Թադէի. բայց զի և ոչ շատ յետոյ ուրեմն, վկայէ և այն՝ զի բայց 'ի թղթոց Պօղոսի (և այն առանց անուան թէ ո՛ր և քանի) ոչ յիշին և ոչ միոյ այլոյ առաքելոյ թուղթք, և ոչ աւետարանք յանուանէ. մանաւանդ զի և 'ի յիշելն ուրեմն եթէ Յովհաննէս առաքեալ[3] ետ բերել Յեփեսոս զգործս Առաքելոց, յանկագոյն էր զէթ անդ յիշել և զաւետարան նորին, եթէ գրեալ էր այն։ Իսկ եթէ իցեն ինչ նմանութիւնք աւետարանական բանից 'ի վարդապետութեան Թադէի, որպէս և են իսկ[4], սակայն են և բանք ընծայեալք Քրիստոսի՝ ոչ ամենևին համակարգք բանից աւետարանչացն[5]. և չէ անդէպ ասել՝ թէ բաղում ինչ 'ի տէրունական բանիցն 'ի մտի ունէին առաքեալքն և աշակերտքն (յորոց և մերս Թադէ կամ Ադէ) և քարոզէին և ուսուցանէին, մինչ չև

1 Ցէջ 47, 48։
2 Որպէս յէջ 43։
3 Տես յէջ 43։
4 Տես յէջ 22, 23, 42։
5 Տես յէջ 20, 45։

էր չորից աւետարանչայն գրով արձանացուցեալ զնոսին. նա և 'ի վարդապետութեան Պօղոսի յայտնապէս յիշի բան ասացեալ 'ի Քրիստոսէ՝ որ և ոչ 'ի միում աւետարանացն գտանի [1]։

Խորենացի վկայէ վասն Լաբուբնեայ գրեալ զամենայն գործս Աբգարու և Սանատրկոյ. իսկ պատմութիւնս այս ունի միայն զԱբգարուն, մանաւանդ թէ զՀաւատոցն Աբգարու, 'ի մերում թարգմանութեան կոչեցեալ Թուղթ Աբգարու, որպէս թէ Պատմութիւն, կամ ըստ արևելեան ոճոյ՝ Աբգար–Նամակ. Ճահագոյն ևս արդեօք յասորին կոչի Վարդապետութիւն Ադէի, քանզի և այն իսկ է նիւթ բանիցն. և թէպէտ ընծային 'ի սմա և թուղթք ինչ Աբգարու և Տիբերեայ, բայց այլ գործք նորա ոչ յիշին։ Եւ 'ի հակառակէն՝ նորագոյն ինն և օտարոտի 'ի մերս կարծեաց և գիտութենէ գտանի յասորի բնագրին, որպէս և 'ի կարգի բանիցն 'ի ծանօթութիւնս կրկնեմք յիշել [2], զի ուր մերս յաւարտ բանից վարդապետութեանն՝ ասէ վասն Թադէի զԱդէ կերպասագործ կարգել փոխանակ իւր Յեղեսիայ, և երթալ յարևելս 'ի քարոզութիւն, ասորին ասէ հիւանդանալ նմա զմահու հիւանդութիւն և մեռանել, և զյուղարկն յարևելս՝ 'ի յուղարկաւորութիւն մահուն փոխէ, այլ և զտեղի գերեզմանին նշանակէ. բայց զյաջորդել Ադդէի և զբնաբեկ կատարած նորին սրով՝ յորդւոյն Աբգարու՝ նման մերոյս և մերոց պատմչաց ունի։ Եւ զի առաքեալս այս կամ աշակերտ՝ Թադէոս կոչեցեալ 'ի Հայոց և 'ի Յունաց, Ադդէուս կոչի յԱսորւոց, յորոց և 'ի թարգմանութեան մերում Ադէ, և նորա աշակերտեալն և յաջորդ Յեղեսիա՝ գոգջիր յարանուն՝ Ադդէ ըստ մեզ, և Ագգէոս յասորի բնագրին, և սորա ևս աշակերտ լինել Թադէոսի ուրումն ասէ ոմն 'ի նոցին յԱ-

1 « Երանելի է մանաւանդ տալն քան առնուլն ». — Գործք. Ի. 35։
2 Տես 'ի ծանօթ. յէջ 45–8։

սորոց[1]. դարձեալ և Թադէի աշակերտ Զակքէոս ոմն յիշի առ մեզ, յայսքան համաձայնութենէ անուանց երևի շփոթութեան սպրդել'ի պատմութիւնս գործոց և բանից վարդապետութեան նոցին. մանաւանդ երկոցուն առաջնոցն առ մեզ հոմանուանց, Թադէի կամ Ադէի և Ադդէի. և Թերևս երկրորդիս, այսինքն խոյրարար հայրապետին վարդապետութեան մասն իցէ ընծայեալն'ի գիրս յայս ընդ բանից աշակերտին Քրիստոսի։ Բայց'ի մեծի զանազանութեան աստ պատմականի ասորւոյն և մերոյս թարգմանութեան, որոց մին մեկնիլ նմա ասէ յԵդեսիոյ և երթալ յարևելս, միւսն մեկնիլ'ի կենաց աշխարհիս, օրէն իցէ արդեօք երկմտել, և բնագրին հետևելով՝ վեր'ի վայր առնել զամենայն հաւատս եկեղեցական պատմութեան ազգիս մերոյ՝ որ'ի սկզբանցն մինչև ցայժմ, և փոխանակ Թադէի եղբօրն Թովմայի և աշակերտին Քրիստոսի՝ զայլ ոք համարել եկեալ'ի Հայս՝ առ Սանատրուկ, և աշակերտեալ զնա նախ'ի Քրիստոս և ապա ընդ դրստեր նորին Սանդխտոյ նահատակեալ յԱրտազ. — զայդ չկարեմք առնուլ յանձն. և զի'ի սկզբանէ բանից Թղթոյս մինչև ցայն վայր յուղարկմանն՝ ամենևին հաւասար գտանեմ զերկոսին տուչութիւնսն, և զոր յետ այնր՝ զՀայերէն թարգմանութիւնս յար և միաբան մերոյ հնաւանդ պատմութեան՝ յորոյ վերայ հիմնեալ էն և հաւատք առաքելանման հարց մերոց Գր. Լուսաւորչի և զարմից նորին, ոչ խղճեմ խարդախեալ ասել զասորին, թէ և հնագիր յոյժ իցէ օրինակ գրչութեանն. քանզի, որպէս և խուն մի վերագոյն նշանակեցաք, սպրդեալ էն'ի գործս յայս և այլ եկամուտ բանք. որպէս հանդերձ այլովքն՝ ողջոյն իսկ Պատրոնիկէայ պատմութիւնն, որ եթէ և ստոյգ իցէ, ոչ զուգի ժամանակի քարոզութեանն Թադէի և Աբգարու, այլ յետոյ ուրեմն եղեալ, զկնի 45 թուականին, յորում նախ եմուտ եկաց Պետրոս առաքեալ'ի Հռովմ։

1 Տես յէջ 6, ծան. 2։

Իսկ որ յաւարտ գրոցս ասի Փղոտի (կամ Պալուտայ) աշակերտին Ադդէի հայրապետի 'ի Սրապիոնէ եպիսկոպոսէ Անտիոքայ առնուլ ձեռնադրութիւն՝ 'ի ժամանակակցէ Զէփիրինոս Հռոմայ հայրապետի, 'ի սկիզբն Գ դարու, այն յայտնապէս սխալ, խառնակ և թերի գրութիւն է. զոր ստուգէ և ուղղէ վերջաբան վկայաբանութեան Շարբիւրայ եպիսկոպոսի, որպէս տեսցի 'ի ծանօթութիւնս 'ի կարգի պատմութեանն. և հաւաստեսցի նովին՝ զի զգրուածս զայս Լաբուբնեայ քաղեալ և գաղափարեալ է 'ի դիւանաց անտի Եդեսիոյ՝ անծանօթի ուրումն մեզ յանուանէ՝ յառաջ քան զԵւսեբեայ ժամանակս, 'ի սկիզբն Գ դարու, յորում կեայր Բ ոմն Փղոտ (Պալուտ) հայրապետ Եդեսիոյ, որ էառն զձեռնադրութիւն 'ի Սրապիոնէ յիշեցելոյ. և թերևս նոյն այր եմոյծ 'ի շարս վարդապետութեան Թադդէի զանհարազատ ինչ բանս զոր 'ի վերդ յիշեցաք և զոր 'ի ծանօթութիւնս։

Եւ արդ յայսմ ամենայնէ գոյ մեզ գլխաւորել, եթէ Թուղթս այս Աբգարու մնասամբ՝ այլ ոչ բոլորովին իսկագիր գործ իցէ Լաբուբնեայ դպրի և դիւանագրի Եդեսիոյ, ժամանակակցի առաքելոցն և աշակերտացն Քրիստոսի. և ամենայն եկամուտ բանքն 'ի սմա՝ ոչ զօրեն 'ի դերև հանել ոչ զվաստակ այնքանոյ հնոյ և հաւատարմի առն, և ոչ զպարծանս հայերէն դպրութեանցս, որ ընդ ոչ սակաւս 'ի հնաւանդ և առ այլս կորուսեալ սոփերաց գրոց՝ գանձեալ պահեցին և հասուցին մեզ և զայս, որ ոչ զվարկպարագի սոսկ հնութեան, այլ զքրիստոնէական հնութեան և զաղբերաց նորին վարդապետութեան՝ ունի շնորհս. որով և համարիմք հաճոյական ինչ պարգև ընծայաբերել սովաւ քրիստոսասէր բանախնդրաց, հմտից և անհմտից։ Յայս սակս յօժարեցաք իսկ յեղուլ զսա և 'ի փառնկ բարբառ, առ 'ի ճաշակ և 'ի քննութիւն զգաստիցն արևմտեայց։

ԹՈՒՂԹ ԱԲԳԱՐՈՒ

ԹԱԳԱՒՈՐԻ ԵԴԵՍԵԱՑ ՔԱՂԱՔԻ

ՈՐ Է ՅԱՍՈՐԻ ԼԵԶՈՒ ՈՒՌՀԱՅ

ՈՐԴԻՈՅ ՄԱՆՈՎԱՅ

Յամին երեքհարիւրերորդի քառասներորդի Թագաւորութեանն Յունաց[1], *'ի Թագաւորութեան Տիբերեայ կայսեր Հռովմոյ, յորժամ Թագաւորեաց Աբգար*[2] *որդի Մանուայ արքայի 'ի Միջագետս Ասորւոյ*

1 Թուական Սելևկիացւոց, որ սկսանի յառաջնոյ ամէ ձմրի ոլոմպիադի, այն է 311 ամ յառաջ քան զհասարակ Թուականն Քրիստոսի:

2 Մանուագայն և ԺԴ 'ի կարգի Թագաւորաց Եդեսիոյ, որք գրեալ թէ առ հասարակ կոչին Աբգար և Մանուա. զԱբգար ասուցաբանեն ոմանք յարաբացի ձայնէ Ապգար, Էպգէր, մեծ և ընտիր, և ոմանք յասորւոյն կաղ. իսկ պատմահայրն մեր Խորենացի ասէ զսա 'ի հայկականէս Ա-ՈՒԳ ԱՐ, զոր ոչ կարացեալ օտարաց ուղղախօսել՝ Աբգար կոչեն: Նա և այլ պատմիչք մեր համարին զնա պայազատ Արշակունեաց Հայոց, որդի Արշամայ որդւոյ եղբօր Տիգրանայ մեծի. և այս հաճոյ Թուի հանդերձ այլովք՝ և անգղեացի Թարգմանչի գրոցս. Ատրնք փոխանակ Արշամայ՝ Ո-ՀԱՄ կամ Ո-ՀԱՄ ասեն, և իմանան Ա-ՀԱՄ, վասն սիրեալ հիւանդութեան թիանալոյ նորա. յիշէ և մերս պատմութիւն զախտանալ նորա յարևելս ուրկութեամբ իմն: (Խոր. Բ. ԻԸ.)

Հին ժամանակագրութիւն Եդեսացւոց յասորի լեզու՝ ցուցանէ իբր յ'135 ամի յառաջ քան զՔրիստոս զսկզբնաւորութիւն Թագաւորութեան կամ պետութեան Ուռհայի և զվախճանն յ'217 ամի Քրիստոսի. վասն որոյ հաւանագոյն Թուի Ատրւոց քան Հայոց լինել սմա Թագաւոր. բայց Թերևս հաւանելի ևս է ասել զնա ըստ Խորենացւոյն Թոռն եղբօր Տիգրանայ, և վասն նուաճման երկրին մերոյ 'ի Հռովմայեցւոց՝ և կացուցանելոյ նոցա անդ այլ Թագաւոր՝ սորա սիրեալ կողմանց միջագետաց և Ուռհայի, և ըստ սովորութեան ամբանց տեղւոյն կոչեցեալ Աբգար, ըստ դիպաց յաջողեալ և անուան հօրն՝ Արշամայ՝ զուգաձայնեալ Ո-ՀԱՄայ ասորի ձայնի:

յԵդեսեայ քաղաքի. զկնի երեսուն և երկու ամսոյ՝ [1]
որ օր ԺԲ էր Տրեայ ամսոյ [2], առաքեաց Աբգար արքայ զՄարիհաբ [3] և զՇամշագրամ [4] զգլխաւորս և ըզպատուականս Թագաւորութեանն իւրոյ, և զԱնան հաւատարիմ իւր [5] ընդ նոսա, հանդերձ թղթովք 'ի քաղաքն որ կոչի Ելեւթերոպոլիս, և յասորի լեզու Բեթքուբրին [6], առ մեծ և պատուական Սաբինոս Եւստորգեայ [7], որ էր հազարապետ կայսեր, և էր իշխան Ա-

1 Այսինքն է 32 ամ թագաւորութեան Աբգարու, սկսելոյ յ'երկրորդում ամի ծննդեան Քրիստոսի, կամ երկու ամաւ յառաջ քան զՀասարակ թուականն:

2 Երկոտասանն տրեայ ամսոյ Հայոց՝ ըստ անկայուն տումարի՝ զուգի 27 աւուր փեպրուարի ամսոյ Հռովմոց՝ յայնմ յիշեալ տարւոջ. իսկ ըստ հաստատուն տումարի՝ 20ի աւուր նոյեմբերի ամսոյ. սակայն որպէս և զկնիգ տեսցի՝ ամիսք Հայոցս 'ի գրի սատ զուգեալ են ընդ Հռովմոցն և ընդ Ասորւոց միանգամայն, ընդ սկզբանն յանուսարի Հռոմոց և Երկրորդի Քեանունի Ասորւոց (և Տաճկաց) հաշուելով զսկիզբն մերոյ արաց ամսոյ. որով ասատանօր ԺԲն տրեայ է 12 նոյեմբերի և 12 Թշրին Երկրորդի ամսոյ:

3 Յօրինակին Ռաբիհաբ գրի սատանօր, բայց ուղղագոյն զկնի Մարիհաբ, որպէս և առ Խորենացւոյ, որ և ծանուցանէ լինել զնա բգեաշխ Աղձնեաց, և 'ի կոչմանէն Մաբ (Տէր) յայտ է ասորի լինել, մանաւանդ թէ ասորեստանիկ 'ի զարմէ Սենեքերիմեանց, որք ժառանգութեամբ ստացան զտիրութիւն կողմանցն այնոցիկ 'ի Հայկազանց մերոց: Ի վերջ կոյս պատմութեանս կոչի սա որդի Բարշամշայ:

4 Եւ զսա նահապետ Ապահունեայց ասէ լինել պատմիչս մեր: Գիւրըգոն ընթեռնու Շեմշգրամ, այլ ուղղագոյն թուի Շամշիգրամ՝ քանզի գտանի առ Սարասբոնի գրեալ Σαμψικεράμος Սամֆոնիգերամոս, նախարարն կամ արքայն Եմեսացւոց, ոչ շատ երկցագոյն ժամանակաւ քան զԱբգար. և զի աշխարհ իշխանութեան նորա կոչէր Ապամէա, մարթի Խորենացւոյ շփոթեալ ընդ Ապահունեայց. զի անդէպ իսկ էրևի հայկական աշխարհին ասորի ունել նահապետ. այն զի և առ Բարդածանայ ասորւոյ յիշի Շամշիգրամ ոմն յեռանագոյն:

5 Անան հաւատարիմ թագաւորին՝ կոչի և սուրհանդակ նորա 'ի Խորենացւոյ, որպէս և Ռուփինոս կոչէ Cursor, և թուի լինել դիւանապետ արքունի:

6 Առ Խորենացւոյ Բեթքուբին, ծանօթ և Պտղոմեայ այսու անուամբ Βαυτογαβρα կամ Βαιτγαυργ, յասորի լեզու թարգմանի Տուն Հակայից, թերևս զի մերձ էր 'ի Գէթ 'ի հայրենիս Գողիադոս. յետոյ առ իշխանութեամբ Հռովմայեցւոց կոչեցաւ Ելեւթերուպոլիս (աղատ քաղաք). այժմ գեօղ ևեթ է, այլ զհին անունն կրէ Պէյթ-Ճէպրին, ընդ մէջ Ասկալոնի և Եբրոնի:

7 Խորենացի կոչէ Մառինոս որդի Սատրգեայ. և թուի յսմանց Յուլ. Մարինոս բարեկամ Տիբերեայ կայսեր և յետոյ սպանեալ 'ի նմանէ: Ցիշատակի առ նովաւ և Սաբինոս Մաւսորիոս օրէնագէտ: Յանվաւեր գիրս կամ յաւետարան մանկութեան Քրիստոսի՝ յասորի լեզու՝ Սաբինա կոչի վերակացու կողմանցս Ասորւոց, և մինչև յԵփրատ

սրուց և 'ի վերայ Փիլիպեցւոյ և Պաղեստինացւոյ. և տարան նմա զթուղթս վասն արքունի իրայց։ Եւ իբրև չոգան նոքա առ նա, ընկալաւ զնոսա խնդութեամբ և մեծարանօք, և եղէն առ նմա աւուրս քսան և հինգ. և գրեաց նոցա թուղթս փոխանակ թղթոցն՝ զոր բերին նմա, և առաքեաց զնոսա անդրէն առ թագաւորն Աբգար։

Եւ եղեալ նոցա 'ի նմանէն՝ գնացին դէպ ուղիղ ընդ Հանապարհ՝ որ երթայր յԵրուսաղէմ։ և տեսեալ նոցա զբազմութիւն մարդկանն որք գային 'ի հեռաստանէ զի տեսցեն զՔրիստոս. քանզի էր եղեալ համբաւ ըստ քանչելեացն ընդ 'ամենայն աշխարհն. գնացին և նոքա ընդ նոսա, Մարիհաբ և Շամշագրամ և Անան՝ հաւատարիմք արքային։ Իբրև մտին յԵրուսաղէմ, նոյն ժամայն տեսին զՔրիստոս, և ուրախ եղէն մեծապէս հանդերձ ժողովրդովն որ ընդ նոսա։ Եւ տեսանէին և զՀրեայսն ժողովեալս ժողովս ժողովս, և խորհէին թէ զինչ արասցեն ընդ նմա. և տրտմեալ յոյժ և խռովեալ Հրեայքն, զի տեսանէին յոյժ զբազմութիւնն մարդկանն իւրեանց՝ որք խոստովանէին 'ի նա։ Եւ լեալ նոցա յԵրուսաղէմ աւուրս տասն, և գրեաց Անան հաւատարիմ արքային՝ զամենայն զոր ինչ ետեսն զոր առնէր Քրիստոս, և զամենայն զոր ինչ միանգամ արարեալ նորա յառաջագոյն մինչ չև երթեալ էին նոքա անդր։ Եւ գնացեալ անտի եկին յՈւռհա քաղաք, և մտեալ նոցա առաջի Աբգարու թագաւորի տեառն իւրեանց՝ ետուն նմա զպատճէն թղթոցն զոր բերին անտի։ Եւ զկնի ընթեռնլոյ զթուղթն, սկսան պատմել առաջի թագաւորին զամենայն ինչ զոր տեսին՝ զոր առնէր Քրիստոս յԵրուսաղէմ։ Եւ ընթերցեալ Անան առաջի նորա զամենայն որ ինչ միանգամ գրեաց և եբեր 'ի տուն իւր. և լուեալ զսոյն Աբգարու արքայի, զարմանայր մեծապէս և ասէր ցպէտս և ցիշխանս իւր՝ որ կային առաջի նորա. Այս զօրութիւնքս չէն մարդ-

գէտ ասի իշխել նորա նաև յետ համբարձման Տեառն մերոյ։ — Սիմ. Մետափրաստէս ասէ՝ Անանայ պաշտօնեի Աբգարու յերթալն յԵգիպտոս առ կուսակալ տեղւոյն և մտերիմ Աբգարու՝ անցանել ընդ Պաղեստին և հանդիպել Քրիստոսի, և յետ դարձին յԵգիպտոսէ դալ և պատմել տեառն իւրում զգործս Քրիստոսի։

կան այլ Աստուծոյ. քանզի չէք ոք 'ի մարդկանէ որ կարէ յարուցանել զմեռեալս, բայց միայն Աստուած։ Կամեցաւ ինքնին երթալ 'ի Պաղեստինէ, զի աչովք իւրովք տեսցէ զՔրիստոս և զամենայն զնշանսն զոր առնէր. և վասն զի չէր իւր իշխանութիւն աշխարհն Հռովմոյ՝ ընդ որ ինքն երթալոց էր, զտեղի կալաւ, զի մի պատճառք ինչ լինիցին թշնամութեան։

Գրեաց այնուհետև թուղթ, և տայ տանել առ Քրիստոս 'ի ձեռն Անանայ հաւատարմի։ Եւ գնացեալ նորա յՈւռհայէ որ օր չորեքտասան էր արեգ ամսոյ, և մըտեալ նորա յԵրուսաղէմ որ օր երկոտասան էր ահկի ամսոյ, չորեքշաբաթի օր [1]. և գտեալ նորա զՔրիստոս 'ի տան Գամաղիէլի քահանայապետին [2] Հրէից, և ընթերցեալ զթուղթն առաջի նորա, զոր գրեալ էր այսպէս. «Աբգար Արշամայ [3], առ Յիսուս բժիշկ

1 Արեգ՝ ըստ վերոյնշանակեալ համարողութեանդ՝ է մարտ ամիս, և 12ն ահկի է 12 ապրիլի, որ արդարև յայնմ ամի (որ է 30 հասարակ թուականին Քրիստոսի) հանդիպի յօր չորեքշաբաթի։ Մ. Խորենացի աւանդէ յաւուր Ծառավերաց մտից Տեառն յԵրուսաղէմ հանդիպեալ դեսպանաց Աբգարու՝ Քրիստոսի, յայս ձգելով զբան աւետարանին Յովհաննու, ԺԲ. 20-3։

2 Ոչ քահանայապետ, այլ վարդապետ օրէնսուսոյց ասի Գամաղիէլ 'ի Ս. Գրոց։

3 Փափագելի էր ստանօր ունել զբնագիրն 'ի քննութիւն անուանս, զորմէ և 'ի յառաջաբանիս. քանզի թէպէտ առ Եւսեբեայ ըստ թարգմանութեան մերում ամին նման գտանի գրեալ Արշամայ, այլ յասորին է Ուշամա, և հաւանագոյն թուի. քանզի և 'ի հայումս ոչ ասի որդի Արշամայ, և ոչ իսկ է սովորութիւն թագաւորացս ըզհարցն անուանս վարել 'ի վերնագրի թղթոց և հրովարտակաց իւրեանց։ Սակայն և Ռուփինոս հին թարգման Եւսեբեայ՝ Ուֆանայ որդի ասէ. Uchanis filius. Խորենացի գրեաթէ բան առ բան գաղափարէ զայն թուղթ այսպէս. «Աբգար Արշամայ իշխան աշխարհի, առ Յիսուս փրկիչ և բարերար, որ երևեցար աշխարհի Երուսաղեմացւոց, ողջոյն։

» Լուեալ է իմ վասն քո և վասն բժշկութեանդ, որ լինին 'ի ձեռս քո առանց դեղոց և արմատոց. զի որպէս ասի, տաս դու կուրաց տեսանել և կաղաց գնալ և զբորոտս սրբել, և զայս պիղծս հանես, և որ միանգամ չարչարեալ են երկար հիւանդութեամբք՝ բժշկես. դու և զմեռեալս յարուցանես։ Եւ իբրև լուայ վասն քո զայս ամենայն, եդի 'ի մտի իմում մի յերկուց ասել. կամ թէ դու աստուած իցես, իջեալ յերկնից գործես զայդ. կամ թէ որդի իցես դու Աստուծոյ և զայդ առնես։ Արդ վասն այնորիկ գրեցի ես առ քեզ ապաչել զքեզ, զի աշխատ լիցիս և եկեսցես առ իս և բըժշկեսցես զհիւանդութիւնս՝ զոր ունիմ ես։ Նա և լուայ զի Հրեայք արանչեն զքէն և կամին չարչարել զքեզ. բայց քաղաք մի փոքրիկ և գեղեցիկ է իմ, և բաւական է մեզ երկոցունցս »։

» մեծ [1], որոյ երևեալ յերկրիդ Հրեաստանի՝ի քաղա-
» քիդ յԵրուսաղեմ, ողջոյն։ Տէր լուայ վասն քո և
» վասն բժշկութեանցդ քոց զոր առնես. զի ոչ դեղովք
» և արմատովք բժշկես դու՝ այլ բանիւ. զկոյրս լուսա-
» ւորես, զկաղս գնացուցանես, զբորոտս սրբես, և խը-
» լից լսել տաս. զդևս հալածես, զմեռեալս յարու-
» ցանես, և զամենայն չարչարեալս և զախտաժետս
» բանիւ բժշկես։ Եւ իբրև լուայ ես զայսպիսի մեծա-
» մեծ սքանչելիս զոր առնես դու, եդի՝ի մտի իմում
» և հաւատացի թէ աստուած ես դու և որդի Աս-
» տուծոյ, որ ի՝ջեր յերկնից և առնես զայդ ամենայն։
» Վասն այսորիկ գրեցի առ քեզ աղաչանս դալ քեզ
» առ իս, զի երկիր պագից քեզ, և բժշկեսցես զիս՝ի
» ցաւոց և՝ի հիւանդութենէ իմմէ, որպէս հաւատա-
» ցի՝ի քեզ։ Եւ զայս ևս լուայ, եթէ Հրեայքդ տըր-
» տընջեն զքէն և հալածեն զքեզ և կամին կորուսա-
» նել զքեզ. քաղաք մի է իմ փոքրիկ և վայելուչ [2] և
» բաւական է երկոցունց մեզ բնակել՝ի սմա խաղա-
» ղութեամբ »։

Եւ ընկալեալ Յիսուսի զթուղթն՝ի տան քահանա-
յապետին Հրէից, ասէ ցԱնան հաւատարիմ աղքային [3].
Երթ և ասա Տեառն քում, որ առաքեացն զքեզ առ
իս. «Երանի՛ է քեզ զի հաւատացեր յիս, մինչ չև տե-
» սեալ քո զիս, զի այսպէս գրեալ է վասն իմ [4], զի
» որք տեսանեն զիս ոչ հաւատան, և որք ոչ տեսա-
» նեն՝ հաւատասցեն։ Եւ զի գրեցեր դու առ իս գալ
» ինձ առ քեզ, վասն որոյ առաքեցայ ես յաշխարհ,
» կատարեալ է ամենայն. այսուհետև վերանամ ես

1 Վայելչագոյն Թուի բՅԻԼՔ կոչումն Յիսուսի յԱբգարէ՝ որ խընդրեր զբժշկին յախտէն, քան ՀՐԻՒ, որպէս գրի առ Եւսեբեայ և Խորենացւոյ։

2 Եդեսիա քաղաք, զորմէ ասէ Խորէն. Բ. ԻԼ։

3 Վայելչագոյն ևս է բնագրիս պատմութիւն, ասէն Յիսուսի ցԱնան, կամ բերանացի նուիրակութիւն նորա, քան գրէն գիր Թէպէտ և՝ի ձեռն Թումայի, ըստ Եւսեբեայ և Խորենացւոյ և այլոց, վասն որոյ և այնքան վէճք և անհաւանութիւն աստուածաբանից, և ընդ անվաւերս և օտարս՝ի Ս. Գրոց համարիլ Թղթոյն, վճռով Գէլասիու պապի յամին 494։ Աղբիւրս այս ամենայն այլոցն պատմութեանց բաւնայ զերկբայսն և զնէթ. ոչ գրէ և ոչ գրել տայ Քրիստոս, այլ պատգամ առաքէ։

4 Ըստ Փաբրիկիոսի ակնարկէ՝ի բանս Եսայեայ, Զ. 9. ԾԲ. 15։

» առ Հայր իմ՝ որ առաքեացն զիս. և յորժամ վերա-
» ցայց առ Հայր, առաքեցիս առ քեզ մի յաշակերտաց
» իմոց, զի բժշկեսցէ զքեզ և զամենայն ժողովուրդդ
» քո որ ընդ քեզ. և դարձուցէ զքեզ 'ի կեանսն յա-
» ւիտենականս։ Եւ քաղաքդ քո օրհնեալ լիցի, և
» թշնամի մի ևս տիրեսցէ դմա յաւիտեան »։

Եւ լուեալ զայս ամենայն Անան՝ զոր ասաց ցնա Յի-
սուս, առեալ նկարեաց զպատկերն Յիսուսի ընտիր դե-
զովք, քանզի արուեստաւոր թագաւորին էր [1]. և բե-
րեալ մատոյց Աբգարու թագաւորի տեառն իւրում։
Եւ իբրև ետես Աբգար թագաւոր զպատկերն Յիսու-
սի, ընկալաւ զնա մեծաւ ուրախութեամբ և եդ զնա
պատուով 'ի սենեկի իւրում յապարանս իւր։ Եւ պատ-
մեաց նմա Անան զամենայն ինչ զոր լուաւ 'ի Յիսուսէ։

Եւ յետ վերանալոյ Քրիստոսի յերկինս առ Հայր
իւր, Թովմաս մի յերկոտասանից առաքեաց առ Աբ-
գար թագաւոր զԱդէ առաքեալ, այն որ մի յիւթա-
նասուն և յերկուցն էր [2]. և իբրև եկն Ադէ յՈւռհա

1 Հանգոյն բանի թղթոյն Քրիստոսի և զնդիրս անձեռագործ պատ-
կերին կամ զդերահաչակ Դատաստանին լուծանէ հնագոյն պատմիչս,
նկարէն և ձեռագործ ցուցեալ զայս պատկեր. բայց զի են և այլ աւան-
դութիւնք անձեռագործ պատկերի Քրիստոսի, օտար յԵդեսացւոյս,
և զի զնոյն խակ զնկարեալն յԱնանայ արժան է օրհնեալ համարել 'ի
կենդանատուէն, ոչ սորայս պատիւ նուազէ, և ոչ այլոցն՝ որք 'ի Գէ-
նուա կամ 'ի Հռոմ և այլուր, փոխագրեալք յԵդեսիոյ կամ 'ի Կ.
պոլսէ, շատ է թէ ցուցցի հնութիւն նոցին հաւատաւոր։

2 Ս. Հերոնիմոս զԹադէոս առաքեալ Հայոց և Ասորւոց համարի
մի յերկոտասանից, զանուանեալն Դեբէոս և Յուդա Յակովբեան.
բայց ըստ յոլովից հաւանութեան Թադէոս մեր որ և Ադէ ըստ Ա-
սորւոց, յեօթանասնից է և արդանդակից եղբայր Թովմայի, որ Եր-
կուրեակն թարգմանի (զի ընդիկ անուն Յուդա էր). առ մեզ Ադդէ
կոչի աշակերտն Թադէի և յաջորդ Եդեսիա, որ յառաջ մեռաքսա-
գործ էր և խոյրարար թագաւորին, ըստ դիպաց զուգանուն գտեալ
վարդապետին՝ կամ առ 'ի նմանէ խակ ընդ ձեռնադրութեանն և զա-
նուն ժառանգեալ. յոր մարթ է ձգել զբան Խորենացւոյն (Բ. ԼԳ.)
« Զիսոյրարար ոմն մեռաքսագործ մկրտեալ, և անուն կոչեցեալ Ադ-
» դէ »։ Երկոքին ևս յայսմ պատմութեան թղթոյս Աբգարու 'ի հա-
յումն Ադէ գրին միով դայիւ. խակ յասորին (ըստ Գիւրջոնի) աշա-
կերտն Քրիստոսի Ադդէ կոչի, և նորին աշակերտն Սգգէ։ Միխայէլ
Ասորի պատմիչ զերկոսին ևս Թադէոս՝ և որ յերկոտասանից և որ
յեօթանասնից՝ դասէ ընդ քարոզս տեառարանին 'ի Հայս։ Նորա-
գոյնս իմն ևս ասէ այլ ոմն ասորի սուղ ինչ կրսեր ժամանակաւ քան
զկաթուղիկոսն պատմիչ, այն է Սողոմոն եպիսկոպոս (Ասսեմանի Գ.
309. — Գիւրջոն 164.) եթէ աշակերտն Քրիստոսի կոչիւր Ադդէոս,

քաղաք, և եմուտ նա 'ի տուն Տուբեայ որդւոյ Տուբեի[1] Հրեի, որ էր յաշխարհէն Պաղեստինացւոյ. և լուր եղև վասն նորա ընդ ամենայն քաղաքն։ Մտեալ մի 'ի նախարարացն Աբգարու թագաւորին, որում ա նուն էր Աբգիու որդի Աբգուայ[2] 'ի գլխաւորաց քաղաքին, որ էր ամթոռակից թագաւորին՝ առաջի նորա, և ասէ. Ահաւասիկ հրեշտակ ոմն եկեալ մտեալ է ասա, մինթ նա՞ իցէ սա՝ վասն որոյ առաքեաց առ քեզ Յիսուս, եթէ յղեցիս առ քեզ մի յաշակերտաց իմոց որ բժշկեսցէ զքեզ։ Եւ իբրև լուաւ Աբգար արքայ վասն Ադէի և վասն նշանացն զոր առնէր և բժշկութիւնս մեծամեծս, ած զմտաւ իւրով և հաւատաց 'ի սրտի իւրում, թէ Աստուածն նա է՝ վասն որոյ առաքեացն առ նա Յիսուս, թէ յորժամ վերացայց յերկինս առ Հայր իմ, առաքեցից առ քեզ զմի յաշակերտաց իմոց, որ բժշկեսցէ զքեզ։ Եւ յղեալ Աբգարու թագաւորի կոչեաց զՏուբիա և ասէ ցնա. Լուայ ես եթէ այր մի զօրաւոր մտեալ է 'ի տուն քո. արդ ած զնա առ իս, զի գտանիցի ինձ յոյս բարի առողջութեան, որով բժշկեցայց 'ի ցաւոց իմոց։

Եւ կանխեալ Տուբիայ 'ի վաղիւն և առեալ ընդ իւր զԱդէ առաքեալ՝ տարաւ զնա առ թագաւորն։ Եւ գիտէր ինքն Ադէ 'ի սրտի իւրում թէ կարող եմ զօրութեամբն Աստուծոյ կատարել զամենայն կամն նորա։ Եւ իբրև եմուտ նա առ Աբգար թագաւոր, մինչ դեռ կային նախարարքն և իշխանքն և մեծամեծք առաջի նորա, և 'ի մտանելն նորա առ նա՝ տեսիլ զարմանալի երևեցաւ Աբգարու յերեսաց Ադէի. և 'ի նմին ժամու

սորին աշակերտ մետաքսագործն՝ Ադդէոս, և սորին աշակերտ երրորդ ոմն՝ Թադէոս, երկրին ևս նահատակեալք 'ի Հերովդեայ որդւոյ Աբգարու. բայց յասորի թարգմանութեան Եւսեբեայ Թադէոս գրի ըստ մերումն՝ եղբայրն Թովմայի։ — Առ մեզ յիշի և Դադէ կամ Դադիու ոմն աշակերտ Թադէի կատարեալ 'ի Փոքր Սիւնիս, ուր Ճանաչի ցարդ Դադի վանքն։

1 Յեւսեբեայ թարգմանութեանն գրի «Առ Տուբիայ որդւոյ Տուբիայ». անուանք՝ որք յիշեցուցանեն զտոհմն Տոմբիթայ։

2 Սեմական ազանց անուանք 'ի Ճահ կողմանց Միջագետաց, ուր նստէր Աբգար, բայց յիշին զայսու ժամանակաւ և 'ի Տակիտեայ համանուն պաշտօնեայք և իշխան Պարթևաց և Հայոց։ (Տարեգր. 9. 1,8, 1,6.) Խորենացի (Բ. 1,4) կոչէ զայս Աբգիու «իշխան քաղաքին» և պատուական յամենայն տանն արքայի»։

իբրև եսես Աբգար զտեսիլն՝ անկաւ առաջի նորա և երկիր եպագ նմա. և զարմացան ամենեքեան որ կային առաջի նորա, զի նոքա ոչ տեսանէին զտեսիլն՝ որ երևեցաւ Աբգարու։ Յայնժամ ասէ Աբգար ցԱդէ. Ճշմարիտ ասա ինձ, եթէ արդարեւ դու ես աշակերտ Յիսուսի զորաւորին որդոյն Աստուծոյ, որ առաքեացն առ իս և ասէ, թէ յղեցից առ քեզ մի յաշակերտաց իմոց որ շնորհեսցէ քեզ բժշկութիւն և կեանս։ Ասէ ցնա Ադէ. Քանզի յառաջագոյն հաւատացեր դու 'ի նա, վասն այսորիկ առաքեաց զիս առ քեզ. եթէ հաւատասցես 'ի նա բոլորով սրտիւ քով, զամենայն զոր ինչ խնդրեսցես՝ եղիցի քեզ։ Ասէ ցնա Աբգար թագաւոր. Այսպէս հաւատացի 'ի նա, զի Հրեայքն որ խաչեցին զնա՝ կամեցայ երթալ զօրօք իմովք և սատակել զնոսա. և վասն թագաւորութեան Հռովմոց արգելայ. քանզի ուխտ խաղաղութեան կացուցեալ էր 'ի միջի մերում, ընդ իս և ընդ Տիբերիոս կայսր, որպէս հարցն մերոց առաջնոց[1]։ Ասէ ցնա Ադէ առաքեալ. Տէր մեր Յիսուս Քրիստոս իբրև կատարեաց զկամն հօր իւրոյ՝ համբարձաւ առ ծնօղն իւր, և նրս-

1 Յանկագոյն են այս բանք՝ թագաւորաց Եդեսիոյ քան Հայոց, որոց դեռ այն ինչ մոռեալ էր ընդ հարկաւ Հռովմայեցւոց։ — Յանվաւեր գիրս մանկութեան Յիսուսի, որոյ հին ձեռագիր ասորի իբր 'ի Զ դարու գրեալ պահի 'ի Բրիտանիական մատենադարանի, ասի այսպիսի ինչ. Եւ իբրև լուաւ արքայ Աբգար եթէ մահու խաչի դատեցան Հրեայք զՔրիստոս, տրամեցաւ յոյժ. և յարեաւ Աբգար խաղաց գնաց մինչև յԵփրատ գետ, քանզի կամէր երթալ աւերել զԵրուսաղէմ։ Այլ իբրև եհաս յեզր գետոյն Եփրատայ, խորհեցաւ 'ի սրտի իւրում և ասէ. Եթէ անցից ընդ գետս այս՝ եղիցի թշնամութիւն ընդ իս և ընդ կայսր Տիբեր։ Ապա գրեաց Աբգար գիր և առաքեաց առ Սաբինա կուսակալ. և Սաբինա առաքեաց առ Տիբերիոս կայսր։ Եւ էր պատճէն թղթոյն Աբգարու առ կայսր Տիբեր ըստ այսմ օրինակի։ « ՑԱբգարէ թագաւորէ Եդեսիոյ քաղաքի, խաղաղութիւն բազմասցի » մեծութեան քում, Տէր մեր Տիբերիոս։ Զի մի զբարեսցի ընդ իս փա- » ռաւորութիւնդ քո, ոչ անցի ընդ Եփրատ գետ. քանզի կամիմ եր- » թալ և աւերել զԵրուսաղէմ փոխանակ զի սպան զՔրիստոս բժիշկ » իմասուն։ Բայց քանզի դու թագաւոր ես մեծազօր և տիրես 'ի » վերայ ամենայն երկրի և 'ի վերայ մեր, առաքեսցես դատ առնել » ինձ 'ի բնակչաց Երուսաղեմի։ Գիտուն լիցի փառաւորութեանդ քում, » զի փափագեմ առնել ինձ իրաւունս 'ի խաչահանուացն այնոցիկ »։

Նման է թուղթս առաջնոյ թղթոյն Աբգարու առ Տիբեր՝ զոր Խորենացի ընծայէ, և զոր յետոյ ուրեմն տեսցես 'ի կարգի պատմութեանս։

տեալ նորա ընդ նմա 'ի փառս յաւիտենից, յորում էր խոկզբանէ։ Աբքայ ասէ. Եւ ես հաւատամ 'ի նա և 'ի հայրն նորա [1]։ Առաքեալն ասէ. վասն զի հաւատացեր սրտի մտօք՝ դնեմ զձեռն իմ 'ի վերայ քո յանուն նորա՝ յոր հաւատացերն։ Եւ նոյնժամայն եդ ըզձեռն 'ի վերայ նորա. և բժշկեաց զնա 'ի հարուածոց ցաւոցն որ էր 'ի նմա 'ի բազում ժամանակաց։ Եւ զարմացեալ Աբգարու և սքանչացեալ մեծապէս, թէ որպէս լուեալն էր նորա վասն Յիսուսի, թէ որպէս բըժշկեր բանիւ առանց դեղոց [2] յանուն Յիսուսի Քրիստոսի։

Եւ Աբգիսու որդի Աբգէի՝ իբրև ետես զի բժշկեցաւ Աբգար թագաւոր, մատոյց զոտս իւր առ նա, զի պատագրոս էր. և եդեալ զձեռն իւր 'ի վերայ նորա և բժշկեաց զնա. և այլ ոչ եղև 'ի նմա նոյն ցաւ. նոյնպէս և յամենայն քաղաքին առնէր նշանս մեծամեծս և զօրութիւնս, և բժշկէր զամենայն ցաւս և զհիւանդութիւնս նոցա. և նշանս և զօրութիւնս եցոյց նոցա։ Ասէ ցնա Աբգար թագաւորն. Արդ այսուհետև գիտեմք ամենեքին զի զօրութեամբ և անուամբն Յիսուսի Քրիստոսի առնես դու զամենայն զսքանչելիսս զայսոսիկ. և ահա զարմացեալ եմք ընդ ամենայն գործս քո. աղաչեմք զքեզ զի պատմեսցես մեզ վասն գալըստեանն Քրիստոսի, թէ զիա՞րդ եղև, և վասն փառաւորեալ թագաւորութեան նորա և վասն սքանչելեացն զոր առնէր, զոր լուաք մեք, զորս քո տեսեալ հանդերձ այլովք ընկերովք քովք։

Ասէ ցնա Ադէ առաքեալ. Ես ոչ դադարեմ 'ի քարոզելոյ, զի վասն այսորիկ առաքեցայ այսր, ասել և ուսուցանել ամենեցուն, որ միանգամ կամին հաւատալ իբրև զքեզ։ Արդ հրաման տուր վաղիւ և ժողովեա առ իս զամենայն քաղաքս, և սերմանեցից 'ի սմա զբանն կենաց՝ զոր քարոզեմ առաջի քո վասն գալստեանն Քրիստոսի, թէ զիա՞րդ եղև, և յաղագս Հօր առաքչի նորա, թէ վասն է՞ր և կամ ո՞րպէս առա-

1 Ասսի սկսանի ասորի հին ընագիրն տպագրեալ 'ի Գիւրբդոնէ, խորագրաւ, Վարդապետութիւն Ադդէի առաքելոյ։

2 Յաւելու ասորին, որպէս և բանն իսկ պահանջէ. « Ըստ այսմ Ն Ադդէոս (Թադէոս) առանց իրի՞ դեղոց բժշկեաց յանուն Յիսուսի »։

քեաց զնա, և յաղագս զօրութեան նորա և զսրմանալի գործոց իւրոց, և վասն փառաւորեալ խորհրդոյ նորա զոր խօսեցաւ յաշխարհի, և վասն Ճշմարիտ քարոզութեան նորա, թէ ոչպէս և վասն էր փոքրկացոյց զանձն իւր, և խոնարհեցոյց զբարձրութիւն աստուածութեան իւրոյ 'ի մարդկութիւնս մեր՝ զոր առ և խաչեցաւ կամօք իւրովք և էջ 'ի մեռեալս և խրամատեաց զցանկն, զոր երբեք ոչ էր խրամատեալ, և կեցոյց զմեռեալս մահուամբ իւրով. և իջեալ ինքն միայն և ելեալ հանդերձ բազմօք առ հայր իւր փառաւորեալ, այն որ ընդ նմա էր 'ի սկզբանէ՝ միով աստուածութեամբն բարձրելոյ։

Եւ հրամայեաց Աբգար թագաւոր տալ Սդէի առաքելոյ արծաթ և ոսկի և պարգևս բազումս։ Այէ ցնա Սդէ. Զիաւրդ կարասցուք առնուլ զոր ինչ ոչ է մեր. զի ահա որ ինչ մերն էր թողաք ըստ պատուիրանին Տեառն. զի առանց քսակի և մախաղի բարձեալ մեր զխաչ 'ի վերայ ուսոց մերոց, հրամայեաց մեզ քարոզել զաւետարանն ընդ ամենայն տիեզերս. այն որ ամենայն աբարածք խնացան և չարչարեցան 'ի խաչելութեան նորա, որ եկն փոխանակ մեր 'ի փրկութիւն ամենայն մարդկան։ Եւ պատմեաց նա զամենայն ինչ առաջի Աբգարու թագաւորի և առաջի ամենայն իշխանաց և նախարարաց նորա, և առաջի Աւգոստինեայ մօր Աբգարու և Շղամաթեայ [1] դստեր Միհրդաթայ կընոջ Աբգարու, զամենայն նշանսն և զսքանչելիսն Տեառնէն զոր առնէր նա, և զաստուածեղէն զօրութիւնս նորա, և զվերանալ նորա առ Հայր իւր յերկինս. և թէ ոչպէս առնէր նա զօրութիւնս մեծամեծս իշխա-

1 Ի պատմութեան մերում ոչ յիշատակի անուն մօր Աբգարու. իսկ որ տատ Աւգոստինէ՝ եթէ պատուոյ կոչումն և եթէ բնիկ անուն՝ ցուցանէ դյարբերութիւն Եդեսացւոց թագաւորին ընդ Հոռովմոց, զոր անդէպ թուի ունել մերոյս Արշամայ համարելոյ հօր Աբգարու։ — Իսկ անուն կնոջ Աբգարու կամ առաջնոյն 'ի կանանց՝ Հեղինէ լսի առ Խորենացւոյ (Բ. ԼԵ.) և այն առեալ թուի 'ի Յովսեպոսէ որ այդպէս կոչէ զկին թագաւորին Ադիաբենայ, և Խորենացի նոյն համարի ընդ Աբգարու։ Գիւրըգոն Շաֆոն ընթեռնու, և մարթ է ասել այլազգ ևս ընթեռնուլ՝ առ 'ի չգոյէ ձայնաւոր տառից 'ի գրութեան բնագրին։ Հայր նորա Միհրդատ թուի 'ի Պարթևաց տոհմէ. յիշի զկնի և յաւագ իշխանս Աբգարու Միհրդատ ոմն։

նութեամբ բազմաւ 'ի ժամ վերանալոյն իւրոյ. և զի նովին զօրութեամբ բժշկեաց և զԱբդիու զորդի Աբդէի զերկրորդ թագաւորութեան նորա. և եցոյց նոցա՝ թէ զիաւրդ յայտնելոց է նա 'ի վախճան ժամանակաց և 'ի կատարած ամենայն աշխարհի, և 'ի յարութիւն կենդանութեան՝ որ պատրաստեալ է ամենայն մարդկան. և որոշումն լինելոց է 'ի մէջ գառանց և ուլոց և 'ի մէջ հաւատացելոց և անհաւատից։ Եւ ասէ ցնոսա Աղէ. Վասն զի դուռն կենաց անձուկ է, և ճանապարհն ճշմարտութեան նուրբ է, վասն այսորիկ սակաւք են հաւատացեալք. և քանզի յանհաւատն հանգիստ է սատանայի, վասն այսորիկ բազումք են սուտք որ խաբեն զտեսողս. այլ եթէ ոչ էր վասն բարիոք կատարածի որ լինելոց է մարդոյ հաւատացելոյ, ոչ ինչանէր ՏԷր մեր յերկնից, և ոչ գոյր 'ի ծնունդ և 'ի չարչարանս մահու, և ոչ առաքէր զմեզ[1], զի լիցուք մեք քարոզիչք և աւետարանիչք նորա, զոր տեսաք և լուաք 'ի նմանէն. զի որպէս առնէր և ուսուցանէր համարձակութեամբ քարոզեմք յայտնի առաջի ամենայն ուրեք, զի մի՛ լիցուք զլացողք ճշմարիտ աւետարանի նորա։ Եւ ոչ եթէ այս միայն՝ այլ և որ ինչ եղև յանուն նորա զկնի վերանալոյ նորա՝ ցուցանեմք և քարոզեմք ամենեցուն։ Աւրդ ասեմ առաջի ձեր իրք ինչ՝ որ եղևն առ մարդս որք իբրև զձեզդ հաւատացին, եթէ Քրիստոս նա է որդի Աստուծոյ կենդանւոյ[2]։

1 Պակասէ դարձեալ ասորի բնագիրն։

2 Աւանդութիւնս այս Պատրոնիկեայ թէպէտ և հին՝ օտարամուտ է 'ի պատմութեանս կամ 'ի քարոզութեան Թադէի, որ եղև յառաջքան զերթալ առաքելապետին 'ի Հռովմ, յորմէ ասի աշակերտեալ և միրտեալ Պատրոնիկեայ։ Մեկնիչ Ճառի խաչին (Բարձրացուցեաց՝ Դաւթի Անյաղթի) յիշատակէ զդէպս զայս. «Յայսոսիկ աւուրս հաւատաց Պատրոնիկէ կինն Կղօդեայ՝ բանիւ սուրբ առաքելոյն Պետրոսի, և մեծաւ յուսով գնաց 'ի Հռովմէ յԵրուսաղէմ, ուսանելոք և դասելոք... Եւ խնդրէ մասն ինչ յառաքելոյն 'ի կեցուցիչ խաչէն. և առեալ գնաց 'ի Հռովմ։ Եւ ըստ պայազատութեան քրիստոնէութեանն Ժառանգէ Հռիփսիմէ և Գայիանէ, որք էին յազգէ Պատրոնիկեայ երկոքին»։ Յիշէ և պատմահայրս մեր Խորենացի 'ի Ճառի Ճանապարհորդութեան Հռիփսիմեանց, վկայելով զլինելն նորա 'ի զարմէ Աւգոստեայ կայսեր, և զարկանել Գայիանեայ 'ի պարանոց սանուն «խաչ զՍ. Յակովբայ՝ զմածեալն տէրունական արեամբն, 'ի կենաց փայտէն հատեալ, վասն խնդրոյն Պատրոնիկեայ տիկնոջ»։ Հնագոյն ևս վկայութիւն միանգամայն և սրբազան վարկումն աւանդութեանս՝ և

ԿԻՆ Մի Պատրոնիկէ[1] անուն՝ Կղաւդիանոսի կայսեր կին, զոր արարեալ Տիբերեայ Թագաւորի երկրորդ Թագաւորութեանն իւրոյ, իբրև երթայր նա տալ պատերազմ ընդ Սպանիացիս[2] ոյք ապստամբեալ էին 'ի նմանէ. կինս այս մինչդեռ էր Պետրոս 'ի Հռովմ քաղաքի, մի յաշակերտացն Յիսուսի, որ էր գլուխ ամենեցուն[3], տեսեալ սորա զնշանս և զսքանչելիս և զզօրութիւնս մեծամեծս և զարմանալիս զոր առնէր յանուն Քրիստոսի, ուրացեալ զհայրենի կռապաշտութիւնն յորում էր, և զպատկերս հեթանոսականս՝ որոց երկիր պագանէր, առ Տէր մեր Յիսուս Քրիստոս հաւատայր և երկիր պագանէր, փառաւորելով ընդ այնոսիկ ոչք զհետ շրջէին Պետրոսի և մեծարէր զնա պատուով մեծաւ։ Եւ զկնի այսոցիկ կամեցաւ նա և զԵրուսաղէմ տեսանել և զտեղիսն ուր եղեն մեծամեծ զօրութիւնք Քրիստոսի։ Եւ յարուցեալ փութա-

գրութեանս՝ նշանակի 'ի հին ոճնացուցի՝ որ Ս. Սահակայ ասի կարգած. 'ի ԺԱ մարերի (17 մայիսի) հրամայէ 'ի ոճնի «Գիւտ Խաչին, » յԱբգարու Թուղթն զՊատրոնիկէն գիտ և ընթերցիր». վասն այսորիկ և ուրոյն առանձին գասնի պատմութիւն գիւտի խաչիս գրեալ 'ի Ճառընտիրս, յորոց 'ի հին և յերկաթագիր օրինակէ ուրեմն արժան համարիմ գաղափարել զկնի 'ի յաւելուածս ծանօթութեանս զբովանդակն, որ ոչ միայն ուրեք ընծայէ զանազանութիւնս բանից սակաւս, այլ և համօրէն զատ թարգմանութիւն թուի. և ունի խորագիր ևս այսպէս. «Սրբոյ առաքելոյն Թադէոսի Պատմութիւն » յաղագս առաջին գիւտի սուրբ Խաչին, որ յաւուրս Յակովբու ա» ռաքելոյն, 'ի ձեռն Թագուհւոյն Պատրոնիկեայ, որ էր կին Կղաւ» դեայ կայսեր Հռովմայ»։

1 Յօրինակի միում Խորենացւոյ պատմութեանն Հռիփսիմեանց՝ Պարիզեցիոյ գրի։

2 Յայտնագոյն ևս ասէ միւս օրինակ մերոյ Ճառընտրիս վասն Կղաւդեայ երթալ տալ պատերազմ ընդ Սպանիացիս, մինչ Տիբերիոս կայսր մեկուսացեալ 'ի Հռովմայ Նասէր 'ի Կաբրէա կղզւոջ։ Պատերազմն Սպանիացւոց որ յիշատակի ասա և զկնի 'ի Թղթին Տիբերեայ առ Աբգար՝ անծանօթ է 'ի պատմութեան Հռովմոց. բայց թուի ակնարկել 'ի հարստահարութիւն աւագ և Ճոխ որերոյն Սպանիացւոց և Գաղղիացւոց զոր ասէր առնել Տիբեր (Սուետոն. 'ի Տիբեր, խթ)։ Պատմէ և Տակիտոս (Տարեգր. Զ. ԺԹ) զնմանէ՝ զՄարիոս Ճոխագոյն այր Սպանիացի գահավէժ արարեալ ընդ տարպէական վախս և գրաւեալ զոսկեհանս նորա։ Որում համաձայն զրուցէ և մերս Թովմա Արծրունի, (Ա.) եթէ «Տիբերիոս... տայր պատերազմ ընդ Սպա» նիացիսն վասն ոսկեհան տեղեացն»։

3 Նշանակելի բան ընդ հնագոյն վկայութիւնս հարց վասն գլխաւորութեան Պետրոսի առաքելոյ։

պէս գնայ 'ի Հռովմ քաղաքէ և եկն յԵրուսաղէմ, ինքն և երեք որդիք իւր և մի դուստր կոյս[1]։ Եւ 'ի մտանելն նորա յԵրուսաղէմ էլ ամենայն քաղաքն ընդ առաջ նորա, և ընկալան զնա պատուով մեծաւ իբրև զդժխոյ և զտիկին ամենայն աշխարհին Հռովմոց։ Այլ Յակովբոս որ էր մեր առաջնորդ և հրամանատար յեկեղեցւոջն որ շինեալ էր յԵրուսաղէմ, իբրև լուաւ թէ վասն ինչ իրաց եկեալ է նա անդր, յարուցեալ եկն և նա անդր. և մտեալ առ նա, զի ինքեալ էր նա յապարանս մեծ թագաւորին Հերովդէի. և իբրև ետես զնա կինն՝ ընկալաւ զնա մեծաւ ուրախութեամբ՝ որպէս զՍիմոնն Պետրոս. և ցուցեալ նորա նմա զզօրութիւնս բժշկութեանցն զոր առնէր՝ որպէս և զՊետրոս։

Եւ ասէ ցնա. Ցոյց ինձ զԳողգոթա, ուր խաչեցաւն Քրիստոս, և զխաչափայտն՝ զորմէ կախեցաւն 'ի Հրէից, և զգերեզմանն ուր եդեալն էր զնա։ Այսէ ցնա Յակովբոս. Ձայդ իրս զերեսին՝ զոր կամի տիկնութիւնդ քո տեսանել, ընդ իշխանութեամբ Հրէից է, և նոքա իշխեն և ոչ տան մեզ թոյլ երթալոյ յաղօթս 'ի Գողգոթայ, և ոչ 'ի յարութիւնն, և ոչ զխաչափայտն կամին տալ ցմեզ. և ոչ եթէ զայս միայն առնեն, այլ և հալածելով ևս հալածեն զմեզ, զի մի ևս աւետարանեսցուք և քարոզեսցուք յանուն Քրիստոսի և բազում անգամ 'ի բանդ ևս արգելուն զմեզ։ — Իբրև լուաւ զայս թագուհին՝ հրաման ետ և ածին առաջի նորա զՈնիա որդի Անանայ քահանայի և զԳողգոնիա որդի Կայիափայ և զՅուդա որդի Աբաթասաղովմայ զգլխաւորս և զհրամանատարս Հրէից. և ասէ ցնոսա. Տուք 'ի ձեռս Յակովբայ և ընկերաց իւրոց զԳողգոթա և զՅարութիւնն և զխաչափայտն Քրիստոսի, և մի ոք արգելուցու զդոսա պաշտել անդ ըստ սովորութեան պաշտամանն իւրեանց։ Ձայս ասացեալ յքահանայսն, յարուցեալ գնայ տեսանել զտեղիսն զայնոսիկ, յանձնեալ Յակովբայ և ոքք ընդ նմայն էին։

Եւ յետ այսորիկ մտեալ նորա 'ի գերեզմանն և գր-

[1] Միւս օրինակն (տ. Յաւելուած Բ) ասէ և այլ ևս դստերս ունել, այլ միս այս միայն երևի լինել կոյս։

տեալ՝ի ներքս երիս խաչափայտս, մի Տեառն մերոյ, և երկուս աւազակացն որք խաչեցանն ընդ նմա։ Եւ նոյն ժամայն՝ի մտանելն նորա մանկամբք իւրովք՝ի գերեզմանն, ՝ի նմին ժամու անկաւ դուստր նորա կոյս և եհան զոգին, առանց ցաւոց և հիւանդութեան, և առանց ոչինչ պատճառանաց մահու։ Եւ իբրև ետես դժխոյն, եթէ յանկարծակի մեռաւ դուստր նորա, ծունր եդ և կայր յաղօթս՝ի ներքս՝ի գերեզմանին, և ասէր յաղօթելն իւրում այսպէս. Աստուած, որ ետուր զանձն քո՝ի մահ փոխանակ արարածոց, և ելեր՝ի խաչ՝ի տեղւոջս յայսմիկ վասն փրկութեան ամենայն մարդկան, և եղար՝ի գերեզմանիս յայսմիկ զի կեցուցես զամենեսին որ իցեն՝ի գերեզմանս, և յարեար իբրև զԱստուած և կենդանարար ամենայնի, և յարութեամբ քով յարուցեր ընդ քեզ զբազումս. և արդ Տէր Աստուած ամենայնի, լսիցեն հեթանոսք և Հրեայք խաչահանուանքն քո և ոտնհար կայցեն, և հեթանոսք մոլորեալք՝ յորմէ ուրացայ ես՝ի կռոց և՝ի դրոշելոց և յերկիւղէ դից հեթանոսութեան նոցա, և ուրախ լիցին այսպն առնելով զիս, և ասիցեն. Այս ամենայն որ եղև նմա՝ յաղագս ուրանալոյ նորա յաստուածոցն զոր պաշտէրն և երկիր պագանէր, և խոստովանեաց՝ի Քրիստոս զոր ոչն գիտէր, և երթեալ նորա պատուել զտեղւոյն խաչելութեան և զգերեզման նորա։ Տէր, և եթէ ես չեմ արժան, թէ լուիցես խնդրուածաց իմոց, վասն զի երկիր պագի արարածոց քոց փոխանակ քո, դու Տէր խնայեա վասն անուան քո երկրպագելոյ, զի մի հայհոյեսցի այժմ միւսանգամ, որպէս հայհոյեցաւն՝ի խաչելութեան քում։

Զայս իբրև ասաց յաղօթսն իւր և չարչարանօք հառաչէր, գոչելով առաջի ամենեցուն որք անդն էին։ Մատուցեալ առ նա երեց որդի նորա և ասէ ցնա. լուր ինձ մայր իմ, զոր ասեմն առաջի թագաւորութեանդ քո. ինձ այսպէս թուի՝ի խորհուրդս իմ թէ այս մահ՝ որ յանկարծօրէն եհաս՝ի վերայ քեռս իմոյ, ոչ ընդունայն ինչ եղև, այլ իմն նորասքանչ և մեծ զարմանալիք. զի փառաւորեսցի սուրբ մեծ անուն Քրիստոսի և ոչ եթէ արհամարհեսցի, վասն սորա որ կարծեցին՝ որք լսան զայս։ Այնուամենայնիւ մնեալ եմք մեք՝ի գերեզ-

մանս, և գտաք աստ երիս խաչափայտս. և ոչ գիտեմք ո՞ր իցէ խաչն յորում խաչեցաւն Քրիստոս. արդ այսուհետև քեռս իմոյ մահուամբ՝ կարող եմք տեսանել և ուսանել թէ ո՞ր է խաչն Քրիստոսի. քանզի ոչ անփոյթ առնէ Քրիստոս վասն այնոցիկ որ հաւատան 'ի նա և խնդրեն զնա։ Յայնժամ թագուորին Պատրոնիկէ թէպէտ և դառնացեալ էր յանձն իւր 'ի ժամուն յայնմ, նայեցեալ նա խնամութեամբ 'ի մտի իւրում, տեսանել թէ արդաւ՞ իցէ զոր ասաց որդի նորա. և մատուցեալ առ 'ի ձեռն մի 'ի խաչափայտից անտի և եդ 'ի վերայ դատերն իւրոյ, որ անկեալ կայր առաջի նորա. և սկսեալ ասել այսպէս յաղօթսն իւր. Քրիստոս որ ցուցեր զօրութիւնս մեծամեծս և զարմանալիս 'ի տեղւոջս յայսմիկ, որպէս լուաք և հաւատացաք, եթէ քո է Տեառն խաչս այս, և 'ի սմա տապրածեցեր զձեռս քո, և զսմանէ կախեցար 'ի յանդուգն և 'ի ժպիրհ մարդկանէ, յայտնեա զզօրութիւն մեծութեան աստուածութեան քո. որ առեր զմարմին և եղեր մարդ և չարչարեցար և խաչեցար. և արդ կենդանացի դուստր իմ Եւ փառաւորեսցի անուն քո 'ի դառնալ ոգւոյ սորա 'ի սմա. և ամաչեսցեն խաչահանունքն քո, և ուրախ լիցին երկրպագուքն քո։

Եւ անսացեալ նորա իբրև ժամ մի յետ ասելոյն զայս, առ 'ի բաց զխաչն 'ի դիոյ անտի, Եւ եդ 'ի վերայ նորա զմիւս ևս խաչն. և սկսեալ նորա դարձեալ ասել յաղօթսն իւր այսպէս. Աստուած, որ յակնարկել քում արարան ամենայն արարածք և հրամանաւ քով հաստատեցան ամենայն յաւիտեանք. Աստուած, որ կամիս ընդ կեանս ամենայն մարդկան՝ ոչ քեզ և ոչ անփոյթ առնես զաղաչանս այնոցիկ ոչ խնդրեն զքեզ, եթէ քո է տէր խաչս այս՝ յայտնեա զզօրութիւնս մեծութեանց քոց որպէս սովոր ես, զի յարիցէ դուստր իմ և կեցցէ, և յամօթ լիցին Հրեայքն խաչահանունքն և հեթանոսք որք երկիր պագանեն կուռս փոխանակ քո, և գոհացին զքէն հաւատացեալք և ճշմարիտք, 'ի բանալ զբերան իւրեանց յօրհնութիւնս քո, յանդիմանն այնոցիկ որ ուրանան զքեզ։

Եւ անսացեալ նորա իբրև ժամն երկուս, յետ այսորիկ 'ի բաց առ և զայն ևս խաչ 'ի դատերն իւրմէ։

Եւ առեալ նորա զերրորդ խաչն և եդեալ 'ի վերայ դատերն իւրոյ, և մինչդեռ կամէր ամբառնալ զաչս իւր 'ի վեր և հայել յերկինս և բանալ զբերան իւր յաղօթս, նոյնժամայն իսկ և իսկ յական Թօթափել 'ի մերձենալ խաչին 'ի դիակն՝ դուստրն իւր կենդանացաւ կանգնեցաւ յանկարծակի, և յարուցեալ փառաւորէր զԱստուած, զի խաչիւն իւրով կեցոյց զնա։ Ապա իբրև ետես տիկինն Պատրոնիկէ, թէ զփաղդ յանկարծակի յարեաւ դուստր նորա՝ զարհուրեալ դո զացեալ յոյժ և փութացեալ անկանէր 'ի վերայ երեսաց իւրոց և փառաւորէր զՅիսուս Քրիստոս՝ յոր հաւատացն, և առաւել ևս հաստատէր 'ի հաւատն, թէ արդարև որդի Աստուծոյ կենդանւոյ է նա։

Այլ զնա որդին իւր. Տեսէր տիկին, եթէ այս այսպէս չէր լեալ այսօր, թերևս ոչ գիտացեալ՝ թողուաք մեք զխաչն Քրիստոսի՝ որով եկեաց քոյրս իմ, ընկալեալ պատուէաք զմի 'ի խաչից աւազակաց սպանողաց. ահա այսուհետև տեսաք եւ անխտիր վստահութեամբ ուրախ եղեաք յոյժ. և Աստուած որ զայս արար՝ սովիմք փառաւորեցաւ [1]։

Եւ առեալ նորա զխաչն Քրիստոսի՝ ետ ցՅակովբոս զի պահեսցէ մեծաւ պատուով. և հրամայեալ նորա զի շինեսցէ շինուած մեծ և երևելի 'ի վերայ Գագաթանն ուր խաչեցաւն Քրիստոս, և 'ի վերայ գերեզմանին յորում եդեալն էր զնա, որպէս զի պատուեսցին տեղիքն այնոքիկ, և լիցին ժողովրդանոցք պաշտաման։ Ապա իբրև ետես տիկինն զամենայն մարդիկ քաղաքին զի ժողովեցան 'ի տեսիլ մեծի սքանչելեացն, հրամայեաց նա՝ զի առանց զսքաւղելոյ և առանց պատուոյ թագաւորութեանն երթիցէ դուստրն նորա յայտնապէս յապարանսն՝ ուր իջեալն էր, որպէս զի ամենայն որ տեսանիցէ զնա փառաւորեսցէ զԱստուած։

Բայց ժողովուրդքն Հրէից և բազմութիւնք հեթանոսաց որք ուրախ եղեն և ցնծացան 'ի մահուան դրստերն նորա՝ յոյժ տրտմեցան 'ի յարութեան նորա. այլ կամէին ևս թէ չէր իսկ լեալ այս, զի տեսանէին զբա-

[1] Այսպիսի ինչ նշան և փորձ պատմի և առ դիւտիւ խաչին առ Հելենէաւ մարբ Կոստանդիանոսի մեծի։

զումն յաղագս այսր իրաց հաւատացեալս 'ի Քրիս-
տոս, առաւել և տեսանէին զբազմութիւնն նշանաց
որ լինէին յետ վերանալոյ նորա քան զոր լինէին յա-
ռաջ քան զվերանալ նորա։ Եւ ընդ հեռաւոր աշ-
խարհս եհաս համբաւ մեծամեծ նշանաց առաքելոցն
ընկերակցացն իմոց՝ որք աւետարանեն զՔրիստոս. և
եղև խաղաղութիւն մեծ եկեղեցւոյն որ յԵրուսաղէմ՝
և 'ի քաղաքս որ շուրջ զնովաւ են. և որք ոչ տեսին
զայս՝ յորժամ լսէին առաւել փառաւորէին զԱս-
տուած։ Եւ յելանել տիկնոջն յԵրուսաղեմէ և գնալ
'ի Հռովմ քաղաք, յամենայն քաղաքս ուր և հասա-
նէր նա, նեղէին և պնդէին ամբոխ մարդկանն տեսա-
նել զդուստրն նորա։ Եւ իբրև եմուտ նա 'ի Հռովմ
քաղաք՝ պատմեաց առաջի Կղաւդիոսի կայսեր զամե-
նայն իրսն որ ինչ միանգամ եղեն։ Եւ իբրև լուաւ
Կղաւդիոս կայսր, հրամայեաց հալածել զամենայն
Հրեայսն յաշխարհէն Իտալիացւոց, և ընդ ամենայն
տեղիսն պատմէին զիրս սքանչելեացս այսոցիկ։ Այլ
և առաջի Սիմոնի Վիմի պատմեաց տիկինն զիրսն որ
եղեն։

Արդ զամենայն ինչ զոր առնէն ընկերք իմ առա-
քեալք՝ առաջի ամենայն ուրուք քարոզէն, զի լուի-
ցեն ամենեքին որ ոչն գիտեն զոր ինչ առնէ Քրիստոս
'ի ձեռն մեր յայտնապէս. զի փառաւորեսցի անուն
նորա յամենայն ումեքէ։ Արդ զայս ամենայն զոր պատ-
մեցի առաջի ձեր, զի 'ի միտ առնուցուք և հաւատայ-
ցեք եթէ որքան մեծ է անուն Քրիստոսի որք հաւա-
տան 'ի նա Ճշմարտութեամբ։ Այլ Յակովբոս առաջ-
նորդ եկեղեցւոյն Երուսաղեմի, որ ինքն իսկ աչօք ի-
րովք ետես զիրս զայս, գրեաց և ետ տանել ընկերաց
իւրոց առաքելոցն ամենեցուն յաշխարհս և 'ի քաղաքս
ուր և շրջէին 'ի նոսա։ Եւ նոքին իսկ առաքեալքն ըն-
կերակիցք նորա՝ գրեն և ցուցանեն նմին իսկ Յակով-
բու զամենայն ինչ զոր առնէ Քրիստոս 'ի ձեռն նոցա,
և ընթեռնուն և պատմեն առաջի ժողովրդեանն։

Եւ իբրև լուաւ զայս ամենայն թագաւորն Աբգար
և Շրջամանթէ դուստր Մեհրդանթայ կին[1] նորա, և

1 Յօրինակին ԻՆՆ։

939-2012 (4844-50)

Փոկրեա և Աբեթշեմեայ և Շամշագրամ և Աբդիու և Ազի և Բարքաղաբայ [1], հանդերձ այլովք ընկերօք իւրեանց՝ուրախ եղեն յոյժ և փառաւորէին զԱստուած ամենեքին՝ խոստովանելով 'ի Քրիստոս։ Ասէ Աբգար թագաւոր ցԱդէ առաքեալ. Կամիմ ես թէ զամենայն զոր լուաք մեք 'ի քէն հանդերձ այլովք՝ առաջի ամենայն քաղաքիս ասասցես յայտնապէս և լուիցեն ամենայն ոք զքարոզութիւն աւետարանին Քրիստոսի՝ զոր ուսուցանես դու, և հանգիցուք և հաստատեսցուք 'ի վարդապետութեանդ քում զոր ուսուցանես դու մեզ. և 'ի միտ առեալ բազմաց թէ յիրաւի հաւատացի ես 'ի Քրիստոս թողթովն իմով զոր առաքեցի ես առ նա, և իմասցին ամենեքին թէ Աստուած է նա և Որդի Աստուծոյ, և դու Ճշմարիտ և հաւատարիմ աշակերտ ես նորա, և զփառաւորեալ զզօրութիւն նորա արդեամբք ցուցանես առաջի ամենեցուն որք կամին հաւատալ 'ի նա։

Եւ զկնի աւուրն այնորիկ հրամայեաց Աբգար թագաւոր Աբդուայ որդւոյ Աբդէի՝ որ բժշկեալ էր 'ի դառն ցաւոց ոտից իւրոց, զի առաքեսցէ քարոզս կոչել զամենայն քաղաքն, և ժողովեսցի ամենայն քաղաքն արք և կանայք 'ի տեղի մի կոչեցեալ Բեթբաբայ, անդոյր տեղի տանն Աւիդեայ որդւոյ Աբդեխեի. զի լուիցեն զվարդապետութիւն Ադէի առաքելոյ, թէ զիարդ ուսուցանէր և կամ ոյր անուամբ բժշկէր, և կամ որովք զօրութեամբ առնէր նշանս և սքանչելիս։ Քանզի յորժամ բժշկեաց զԱբգար՝ նախարարքն իւր միայն էին որք կային առաջի նորա, որք տեսին զի բանիւ Քրիստոսի բժշկեաց զնա՝ զոր բազում բժիշկք մեծաւ աշխատութեամբ ոչ կարացին բժշկել, և այր մի օտար բժշկեաց զնա միայն բանիւն Քրիստոսի։ Եւ իբրև ժողովեցան ամենայն քաղաքն արք և կանայք ըստ հրամանի թագաւորին և էին անդ, Աւիդայ [2] և Ղաբբու և Խատիէս [3] և Բարքաղաբայ [4] և

1 Անծանօթք են 'ի պատմութեան արքս իշխանաւորք, բայց յետինդ զկնի ուրեմն ասի լինել որդի Զատէի։

2 Տանուտէր տեղւոյն ուր ժողովեալ էր ամբոխն։

3 Անծանօթք մեզ 'ի պատմութեան։

4 Վերոյիշեալն (ծան. 1)։

Ղուբուբնեա[1] և Խոսրոն[2] և Շամիագրամ, հանդերձ այլովք ընկերօք իւրեանց՝ որք իբրև զնոսա էին գլխաւորք և նախարարք Թագաւորին, և ամենայն զօրք նորա և բազում մարդիկ արուեստաւորք, Հրեայք և հեթանոսք, որք էին'ի քաղաքիս յայսմիկ, և օտարք որք յայլոց աշխարհաց, Մծբնացիք և Խառանացիք հանդերձ բնակչօք ամենայն աշխարհին Միջագետաց[3]. եկեալ ժողովեալ կային ամենեքին միախուռն բազում ամբոխ զի լուիցեն վարդապետութեանն Ադէի առաքելոյ. քանզի լուեալ էր նոցա եթէ աշակերտ է նա Յիսուսի՝ որ խաչեցաւն Յերուսաղէմ, և անուամբ նորա առնէ զամենայն նշանս և զմեծամեծ բժշկութիւնս։

Եւ սկսեալ Ադէի ասէ ցնոսա այսպէս. Լուարուք ամենեքին և'ի միտ առէք զոր ինչ ասեմ առաջի ձեր. զի ոչ եթէ բժշկեմ ես իբրև զայլ որ'ի մարդկանէ՝ որք բժշկեն դեղօք ըստ արուեստից մարդկան. այլ աշակերտ եմ ես Յիսուսի Քրիստոսի Ճշմարիտ բժշկին անձանց տառապելոց և փրկիչ ամենայն մարդկան, Որդի Աստուծոյ, որ էջ յերկնից և զգեցաւ մարմին զմարդկութեանս մերում, և ետ զանձն'ի խաչելութիւն փոխանակ ամենայն որդւոց մարդկան. և'ի կախելն իւրում'ի խաչափայտին խաւարեցոյց զարեգակն յերկինս. և իբրև եմուտ'ի գերեզմանն՝ յարուցեալ յերրորդ աւուր էլ'ի գերեզմանէն հանդերձ բազմօք. և որք պահէին զգերեզմանն՝ ոչ տեսին թէ զիարդ էլ'ի գերեզմանէն, այլ զուարթունք երկնից և բազմու-

1 Որ յետոյ Ղբուբնեա գրի, և'ի բնագրին Լաբուբնա, և Ղերուբնա'ի պատմութեան Խորենացւոյ. և է ինքն իսկ հեղինակն կամ հաւաքող թղթոցս և գործոց Թադէի և Աբգարու. զորմէ տես'ի յառաջաբանի մատենիս։

2 Թուի Խոսրանն Արծրունեաց նահապետ, որ տարաւ զգունդն Հայոց նիզակակից Արեւոյ արքայի ընդդէմ Հերովդէի. և որոյ կին Սանոտ՝ սանտու եմուտ Սանատրկոյ քեռորդւոյ Աբգարու։ Թումա Արծրունի Խուրէն գրէ (ըստ մերոց օրինակաց) և ասէ յետ մահուան Աբգարու և Անանուան երթեալ նորա առ Տիբեր և աւարտեալ զՍպանիական պատերազմն, (տ. յէջ 12 ծան. 2) և անտի երթեալ յԵրուսաղէմ առ Հեղինէ տիկին, և անդ վախճանեալ (Խորեն. Բ. իթ. 12)։

3 Քանզի Եդեսիա գլխաւոր էր յայնմ ժամանակի ամենայն քաղաքաց հիւսիսային Միջագետաց, արքայանիստ և դաշնակից Հռովմայեցւոց, 'ի դէպ իսկ էր յաճախել անդր եկաց յայլոց մերձաւոր քաղաքաց։

թիւնք հրեշտակաց լինէին քարոզք և աւետարանիչք յարութեան նորա։ Զի եթէ չէր կամեցեալ՝ ոչ մեռանէր. քանզի տէր է նա կենաց և մահու, և ինքն կամաք զգեցաւ զմարմին մարդկութեանս մերոյ։ Զի նա իսկ է ստեղծիչ մարմնոց և ինքն կամաք իւրովք խոնարհեցաւ ծնանել 'ի կուսէն, և ինքն կամաք իւրովք խոնարհեցաւ 'ի չարչարանս խաչին, և խոնարհեցոյց զմեծութիւն աստուածութեանն իւրոյ՝ այն որ էր բարձրեալ և հաւասար Հօր 'ի սկզբանէ յաւիտեանս. զորմէ խօսեցան խորհրդով մարգարէիցն՝ որ յառաջ քան զմեզ էին, և պատմեցին և ցուցին զկերպարանս ծննդեան նորա և զչարչարանաց և զյարութեան և զվերանալոյ նորա յերկինս առ Հայր իւր, և վասն նստելոյ նորա ընդ աջմէ մեծութեանցն 'ի բարձունս. և ահա երկրպագի յերկնաւորաց և յերկրաւորաց որպէս էր 'ի սկզբանէ և յաւիտեանցն. թէպէտ և տեսանէին զնա իբրև զմարդ, այլ իմաստութիւն և զօրութիւն և իշխանութիւն Աստուծոյ էր. որպէս և ինքն իսկ վկայեաց մեզ. Ահա այսուհետև փառաւորի Որդի մարդոյ, և Աստուած փառաւորի 'ի նմա, և Աստուած փառաւորեսցէ զնա յանձն իւր[1], զօրութեամբ և սքանչելեօք և պատուով որ ընդ աջմէ։ Բայց մարմինք նորա՝ ծիրանիք սուրբ են աստուածութեան նորա, զի նովաւ կարասցուք հայել և տեսանել զանեւևոյթ տերութիւն նորա։ Զսոյն իսկ զայս Քրիստոս քարոզեմք և աւետարանեմք և ընդ նմին զՀայր իւր փառաւորեմք և զսուրբ Հոգին աստուածութեան իւրոյ բարձրացուցանեմք և երկիր պագանեմք. քանզի զայս պատուիրան ընկալաք 'ի նմանէն, մկրտել և սրբել զամենայն զայնոսիկ՝ որք հաւատան յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ Նա և մարգարէքն որք յառաջ քան զմեզն էին այսպէս ասէին, Տէր և Աստուած առաքեաց զմեզ և Որդի նորա[2]։ Եւ եթէ ա-

1 Եթէ արդարև Թադէի են բանքս 'ի լոյս աստուածեղէն շրթանց Քրիստոսի յառաջ քան զգրութիւն աւետարանչին Յովհաննու (ԺԳ. 31, 32) մարթ է և զհետևեալ առդ համարել տերունական պատգամ։ Բայց գուցէ և այս և որ զհետ սորին քարոզութիւն երից անձանց աստուածութեանն՝ 'ի գրչէն յերիւրեալ է յետոյ։

2 Գուցէ վրիպմամբ գրչին գրի առ Որդի, քանզի Եսայեայ մարգարէին է բանս (Խբ. 17) որ ասէ. «Տէր Տէր առաքեաց զիս և Հոգի

սեմ ինչ աւելի որ ոչ գրեալ է 'ի մարգարէս՝ մի՛ ընկալցին զիս Հրեայք որ կան 'ի միջի ձերում և լսեն ըզբանս իմ: և եթէ յիշեմ ես զանուն Քրիստոսի 'ի վերայ ամենայն ախտացելոց և հիւանդացելոց և ոչ նոյն ժամայն բժշկին անուամբն փառաւորելոյն՝ մի՛ հաւատասցեն ինձ որք երկիր պագանեն ձեռագործաց իւեանց. և եթէ գրեալ են 'ի գիրս մարգարէից զոր ինչ ասեմ ես, և կարող եմ ես ցուցանել զզօրութիւն բըժշկութեանց 'ի հիւանդս, մի՛ որ հայեսցի 'ի մեզ երկմիտ[1] հաւատովք, զի քարոզեմք թէ Աստուած խաչեցաւ փոխանակ ամենայն որդւոց մարդկան: Եթէ են որք ոչ կամին հաւանել բանից մերոց այսոցիկ՝ մերձեսցին առ մեզ և յայտնեսցեն մեզ զմիտս իւրեանց. զի ըստ հիւանդացեալ խորհրդոցն իւրեանց դիցուք դեղ բժշկութեան վիրաց նոցա: Թէպէտ և չէիք մերձ 'ի ժամանակի չարչարանացն Քրիստոսի. այլ արեգակն զի խաւարեցաւ տեսէք դուք. այսուհետև ուսարուք և 'ի միտ առէք վասն մեծի դղորդմանն՝ որ եղև 'ի ժամու խաչելութեանն նորա. որոյ թռուցեալ աւետարանն ընդ ամենայն տիեզերս նշանօք և արուեստիւք, զոր առնեն աշակերտք նորա ընկերակիցք մեր յամենայն երկրի, որք են Եբրայեցիք՝ և զլեզու Եբրայեցւոց միայն գիտէին յորում ծնեալն իսկ էին, ահաւասիկ այսօր յամենայն լեզուս խօսին, զի լուիցեն հեռաւորք և հաւատասցեն իբրև զմերձաւորս, թէ նա է որ ետ նոցա լեզու և զիմաստութիւն լսել և խօսել յամենայն լեզուս, որպէս յառաջին ժամանակս խառնակեաց զլեզուս ժպիրհ մարդկան՝ որ 'ի կողմանս յայսոսիկ՝ որ առաջի մեր է[2], և նոյն իսկ է որ ուսուցանէ 'ի ձեռն մեր այսօր զհաւատս Ճշմարտութեան և ստուգութեան՝ տկարօք և տառապելօք, որք 'ի Գալիլեայ Պաղեստինացւոց. սակայն և զիս որ տեսանէքս՝ 'ի Սանիրայ եմ[3], ուստի և Յորդանան գետ ելանէ, և ընտ-

» Նորա » . զոր ոմանք համարին ասացեալ 'ի մարգարէէն յիւր գէմս, այլ շատք ևս 'ի գէմս Քրիստոսի, զոր առաքեաց Հայր՝ Հոգւովն:

1 Ասի սկսանի երկրորդ օրինակ ասորի բնագրին:

2 Ի խառնակութիւն լեզուացն որ 'ի Սենաար ակնարկէ, որ 'ի նոյն 'ի Մեծագեստս էր:

3 Ի բնագրին՝ Պանէաս, քաղաք՝ որ և Կեսարիա Փիլիպպեայ կոչի յաւետարանի (Մատթ. ԺԶ. 13.) 'ի ստորոտս Անեբոյն Լիբանանու,

ըեցայ ես ընդ ընկերակիցս իմ լինել ինձ քարոզիչս[1] աւետարանին. զի սովաւ որոտան ամենայն տիեզերք փառաւորեալ անուամբն Քրիստոսի երկրպագելոյ։

Մի ոք 'ի ձէնջ այսուհետև խստացուսցէ զսիրտ իւր 'ի ստութենէ և մի դերեսցէ զինքն զկնի խորհրդոց կորստական մոլորութեամբ, ոյք լի են յուսահատութեամբ դառն մահուամբ. և մի ըմբռնիք 'ի չար սովորութիւն հեթանոսութեան հարց ձերոց, հեռանալ ձեզ 'ի Աշմարիտ և 'ի ատոյգ կենաց որ 'ի Քրիստոս. քանզի որ հաւանին 'ի նա, նոքա լինին հաւատարիմք առաջի նորա, որոյ իջեալ առ մեզ զթութեամբ իւրով խափանել յերկրէ զզոհս հեթանոսականս և ըզնուէրս կռապաշտութեան. զի մի ևս երկիրպագանիցեն արարածոց, բայց միայն նմա և Հօրն իւրում, հանդերձ սուրբ Հոգւով նորա երկիր պագանեմք[2]։ Այլ ես որպէս հրամայեաց ինձ Տէր իմ՝ քարոզեմ և աւետարանեմ, և զարծաթն նորա արկանեմ 'ի վերայ սեղանոյ աւասիկ առաջի ձեր[3], և զսերմն բանի նորա սերմանեմ յականջս ամենայն ուրուք. և ոյք կամին ընդունել՝ նոցա հատուցումն բարի խոստովանութեանն իւրեանց. և ոյք ոչ հաւանին մեզ՝ զփոշի ոտից մերոց թօթափեմք 'ի վերայ նոցա, որպէս և հրամայեալ է մեզ[4]։

Արդ ապաշխարեցէք այսուհետև, սիրելիք, 'ի չար Ճանապարհաց և յաղտեղի գործոց, և դարձարուք առ Աստուած, բարիոք և ազնիւ կամօք, զի դարձցի առ ձեզ զթութեամբ և ողորմութեամբ իւրով. և մի լինիք որպէս զդարան առաջինս[5] որ անցին. վասն զի խստացուցեալ նոցա զսիրտս իւրեանց յերկիւղէն Աստուծոյ, ընկալանէնոքա զպատուհաս յայտնապէս, զի նոքա խրատեսցին, և ոյք զկնի նոցա գալոց են՝ զարհուրեսցին և երկիցեն։ Բայց զի եկն Տէր մեր յաշխարհս՝ զի ուսուս-

ուսաի բղխեն ակունք ինչ գետոյն Յորդանանու, և Սանիր կոչի այն կողմն լերանցն։

1 Պակասէ ասորի բնագիրն։

2 Վերսին սկսանի ասորի բնագիրն։

3 Մատթ. ԻԵ. 27։

4 Եւ այսոքիկ ըստ աւետարանչացն բանից։

5 Իմա՝ զազգն։

ցէ և յայտնեսցէ մեզ, եթէ կատարած աշխարհի լինի և յարութիւն ամենայն որդւոց մարդկան. և յայնժամ նկարին վարք իւրեանց, և լինին մարմինք նոցա իբրև զմագաղաթ, լի գրով ճշմարտութեամբ. և ոչ ոք է որ ոչ գիտէ դպրութիւն. քանզի ամենայն ոք ընթեռնու[1] զգիր դպրութեան իւրոյ[2], և զհամար գործոց իւրոց 'ի մատունս ձեռաց իւրոց ունի. որպէս զի տգէտք և տխմարք՝ գիտունք և տեղեակք լինին դպրութեան նորոյ և լեզուի նորոյ. և չկամ ոք որ ասիցէ ցընկեր իւր, թէ ընթերցիր ինձ զայս, վասն զի վարդապետութիւն մի և լեզու մի թագաւորէ 'ի վերայ որդւոց մարդկան։ Արդ նկարեսցի այսուհետև հոգս այս առաջի աչաց ձերոց, և մի՛ անցանիցէ 'ի մտաց ձերոց. քանզի թէպէտ և 'ի խորհրդոց ձերոց անցանէ, սակայն 'ի ճշմարտութենէ ոչ անցանէ։ Խնդրեցէք զողորմութիւն Աստուծոյ թողուլ ձեզ զգարշելի ուրացութիւն հեթանոսութեան ձերոյ. զի թողեալ զԱստուած որ արար զձեզ 'ի վերայ երեսաց երկրի, և իջուցանէ զանձրև իւր և ծագէ զարեգակն իւր 'ի վերայ ձեր, և երկիր պագանէք փոխանակ նորա արարածոց նորա։

Այլ կուռք և դրօշեալք պատկերք հեթանոսաց, և ամենայն որ ինչ միանգամ արարածք են՝ յոր յուսացեալ էք և երկիր պագանէք նոցա, եթէ էր 'ի նոսա զգայութիւն իմաստութեան և իմանային, փոխանակ զի դուք երկիր պագանէք և պատուէք զնոսա, նոցա արժան էր շնորհակալ լինել ձեզ՝ զի դրօշեցէք և կազմեցէք զնոսա և հաստատեցէք զնոսա բևեռեալ՝ զի մի՛ շարժեսցին։ Այլ թէ իմանային արդեօք արարածք զպատիւդ ձեր զոր առնէք դոցա, պաղատէին և ասէին ձեզ, թէ մի՛ պագանէք երկիր մեզ ընկերակցաց ձեր, որ իբրև զձեզ ստեղծեալ եմք և 'ի ձէնջ արարեալ. քանզի ոչ եթէ երկրպագեսցին արարածք՝ վասն այնր հաստատեցան, այլ զի երկիր պագանիցեն արարչին իւրեանց և փառաւորեսցեն զայն՝ որ հաստատեացն զնոսա. և որպէս զի ընդ հարկաւ առնեն շնորհք նոցա

1 Յայտն. ի. 12։

2 Պակաւէ յասորին թուղթ մի կամ երկուս և ոչ առղս սակաւս, որպէս կարծէր թարգմանողն անգղիացի։

զժպիրս, սոյնպէս պատրաստեալ է Ճշմարտութիւն նորա վրէժխնդիր լինել անդ ամենայն ուրացողաց։

Այլ զի տեսանեմ ես զքաղաքս զայս զի կարի յոյժ լի է հեթանոսութեամբ ընդդէմ Աստուծոյ[1]. ո՞է այն Նաբոյ՝[2] կուռք արարեալք, որում երկիր պագանէք. ո՞է Բէլդ[3] զոր պատուէքդ. ահաւասիկ են ոմանք 'ի ձէնջ որ երկիր պագանեն Բաթնիքաղայ[4], որպէս ըզխառանացիս դրացիս ձեր, և Թարթայ՝[5] իբրու զԱ-բուդացիս[6]. և արեգական և լուսնի, և Արծուոյ՝[7] իբրև[8] զԱրաբացիս։ Մի՛ պատրիք 'ի նշոյլս լուսոյ, 'ի ծագել արաւսեկին[9]. զի անիծեալ է առաջի Աստուծոյ ամենայն՝ որ երկիր պագանէ արարածոց։ Այլ թէպէտ և իցեն արարածք որ մեծագոյն թուին ձեզ քան զընկերս իւրեանց, սակայն ընկերակիցք են միմեանց՝ որպէս ասացի ձեզ. քանզի ցաւ դառնութեան է այս, որոյ չիք բժշկութիւն, զի երկիր պագանեն ա-

1 Ցիշէ և Խորենացի (Բ. Իէ.) զկուռս զայսոսիկ՝ զորս Աբգար փոխադրեաց այսր յԵդեսիա 'ի Նորոգութեան քաղաքիս, և կոչէ Նաբոգ, Բէլ, Բաթնիքաղ, Թարաթա։ Իսկ Յակոբ Սրձեցի 'ի Ճառի Կործանման կռոց գրեաթէ սովին թղթոցս բանիւ և կարդաւ յիշատակէ զսուսա։

2 Նաբոյ կամ Նաբոգ երևի սեփական դիք լինել Եդեսացւոց, որ և մեծարեալ 'ի Փաղդէացւոց առ հինն, որոց է յոլովից թագաւորաց անուանք այսու հաւէին, Նաբոնոդորոսոր, Նաբոնպալասար, Նաբոնզարդան, և այլն։ Սարէացիք Նաբէ կոչեն զՏրատն մոլորակ և զօր չորեքշաբաթի, բայց Յեդեսիա կարծի զարեգական պաշտօն ընդունել։

3 Մանօթ դիք Բաբելացւոց, որ ստէպ յիշատակի 'ի գիրս մարգարէութեան Դանիէլի։

4 Փոխանակ սորա Սրձեցին կարդէ այլ դիս, և գլխաւոր զԲէլ-Շէմին, Բարշամինա կոչեցեալ ուրեմն առ Խորենացւոյ (Բ, ԺԴ) և նշանակէ Տէր երկնից. իսկ Բէլին կոչէր դիք Լուսնի, և էր իսկ նորա տաճար մեծ 'ի Խառան, կանգուն մնացեալ ցդար Դ, և պատուեալ յուրացողէն Յուլիանոսէ։

5 Թարթա կամ Թարաթա համարի իգական դիք Յանոսի, իբրու Jana, զիցուհի լուսնի կամ Անահիտ, ըստ այլոց Ռէա կամ Կիւբելէ։

6 Ուղղելի Թուի Աբուգացիք կամ լաւ ևս Մաբուգացիք, այսինքն բնակիչք Մմբէճայ կամ Յերապօլեայ. զի այսպէս ցուցանէ Սրձեցին, և յանուն Մաբուգայ (գուցէ նոյն ընդ Նաբուգայ) ասէ դից քաղաք անուանեալ զայն, որպէս և յունական անուն քաղաքիդ նշանակէ։

7 Ի հին պաշտամունս Ասորեստանեայց յաճախ երևին արծուակերպ դիք, որ և Նէսրոխ կարծի։

8 Յօրինակին է։

9 Նշոյլք լուսոյ և Արօսեակն նշանակեն զախտարմոլացն պաշտամունս կամ զԱրէացւոցն աղանդ։

բարեալք արարելոց, և փառաւորեսցեն արարածք զընկերս իւրեանց։ Զի որպէս ոչ են կարող օգնել անձանց իւրեանց, այլ՝ ի զօրութիւն խնամոց դարմանին որ հաստատեաց զնոսա, սոյնպէս ոչ են կարող առնուլ երկրպագութիւն և պատիւ ընդ նմա՝ որ արարն զնոսա. զի հայհոյութիւն է յերկոսին, յարարածս՝ յորժամ երկրպագի նա, և յարարիչն՝ յորժամ հաղորդակից լինին նմա արարածք, որք օտարք են՝ ի բնութենէ էութեան նորա։ Այնուհանդերձ մարգարէութիւն մարգարէից և քարոզութիւն որ զկնի մարգարէից ասացաքս, այս է. զի մի՛ երկրպագեսցեն արարածք ընդ արարչին՝ արարածոց. և մի՛ ևս լծեսցեն որդիք մարդկան՝ ի լուծ հեթանոսական ապականութեան. ոչ եթէ վասն զի երևին արարածք՝ ասեմ թէ մի՛ երկիր պագանիցեն, այլ ամենայն ինչ որ միանգամ հաստատեալ է՝ արարած է, եթէ երևի և եթէ ոչ երևի. վասն զի դառն ամպարշտութիւն է այս՝ անուանել նմա զանուն փառաւորեալ աստուածութեանն։

Զի ոչ եթէ իբրև զձեզդ զարարածսդ քարոզեմք և երկիր պագանեմք, այլ զՏէր արարածոց. բայց շարժումն՝ որ դողացուցանէ զնոսա՝՝ նա վկայէ թէ ամենայն ինչ որ արարած է՝՝ ի զօրութիւն արարչին կախեալ կայ. այն՝ որ էրն յառաջ քան զյաւիտեանս, որոյ ոչ քննի բնութիւն նորա, վասն զի ոչ երևի բնութիւն իւր, և ընդ Հօր իւրում փառաւորի՝ ի բարձրութիւն բարձանց. քանզի Տէր է նա և Աստուած յաւիտենից։

Այս է վարդապետութիւն մեր յամենայն կողմանս աշխարհաց. և այսպէս հրամայեցաւ մեզ քարոզել այնոցիկ ոյք լսեն մեզ. ոչ եթէ բռնադատութեամբ՝ բայց վարդապետութեամբ և ճշմարտութեամբ և զօրութեամբ Աստուծոյ. և նշանք որ լինին յանուն նորա՝ նոքա վկայեն վասն հաւատոց մերոց՝ եթէ ճշմարիտ են և հաւատարիմ։ Հաւանեցարուք այսուհետև բանից մերոց և ընկալարուք զոր ինչ ասացի ձեզ և ասեմ առաջի ձեր. և զի մի՛ խնդրեսցի վրէժ յինէն, յա-

1 Թուի՝ ի սասանութիւնս երկրի ակնարկել, որոյ բազում անգամ հանդիպեալ է յոյժ սաստկութեամբ և՝ ի կողմանս Ասորւոց և Միջագետաց։

Ճախեմ դնեմ առաջի ձեր զգուշութիւն. ընկալարուք զբանս իմ արժանապէս և մի՛ անփոյթ առնէք. դարձարուք հեռացեալք 'ի Տեառնէ և լերուք մերձաւորք Քրիստոսի. և փոխանակ զոհից և նուիրաց մորոսութեան ձերոյ, մատուցէք նմա այսուհետև պատարագս գոհութեան։

Զի՞նչ իցէ արդեօք բագինդ մեծ զոր շինեալ է ձեր 'ի մէջ քաղաքիս, և ոչք երթան և գան առ նա և նուիրեն 'ի վերայ նորա դիւաց և զոհեն 'ի դմա այսոց պըղծոց։ Եթէ գրոց հմուտ չէք, ինքն իսկ բնութեանդ տեսլեամբ իւրով չուսուցանէ՞ զձեզ. զի աչս ունին կուռքդ ձեր և ոչ տեսանեն, և՝ դուք որ զաչսդ ունիք՝ փոխանակ զի ոչ առնոյք 'ի միտ՝ նմանիցէ՞ք նոցա զի ոչ տեսանեն և ոչ լսեն. և տարապարտուց Ճեպեալ ձայնք ձեր յունայնութեան՝ յականջս խլացեալս, ոչ եթէ նոքա մեղադրեն այնու՝ զի ոչ լսեն, քանզի բնութեամբ են խուլ և համր. բայց դուք էք մեղադրելի՝ յորում Ճշմարտութիւնն ծածկեալ է. և ոչ կամիք 'ի միտ առնուլ և ոչ տեսանել, քանզի ոչ թողուն զձեզ մեղքն մոլորութեան որ ծածկեալ ունին զմիտս ձեր, տեսանել ձեզ զլոյսն երկնային՝ որ է հանճար իմաստութեան։ Փախերուք այսուհետև 'ի ստեղծելոց և յարարելոց, որպէս ասացի ձեզ, զի անուամբ միայն կոչին Աստուած և ոչ եթէ բնութեամբ են աստուածք. և մերձեցարուք առ այն՝ որ բնութեամբ է Աստուած իսկզբանէ և յաւիտենից։ Եւ ոչ եթէ արարած է նա որպէս զկուռս ձեր, և ոչ եթէ ստեղծեալ և հաստատեալ է իբրև զպատկերսդ ձեր՝ որով դուքդ պարծիք. զի թէպէտ և զգեցաւ նա զմարմին մեր, այլ Աստուած էր ընդ Հօր իւրում։ բայց արարածք որ շարժեցան 'ի խաչելութեան նորա՝ խռովեցան 'ի չարչարանս մահու նորա, նոքին իսկ վկայեն զի նա է արարիչ արարածոց. զի ոչ եթէ փոխանակ մարդոյ շարժեցաւ երկիր, այլ վասն այնորիկ՝ որ հաստատեալ է զերկիր 'ի վերայ ջուրց. և ոչ եթէ վասն մարդոյ խաւարեցաւ արեգակն յերկինս, այլ փոխանակ այնր որ արար լուսաւորս մեծամեծս. և ոչ եթէ մարդով յա-

1 Վերատին սկսանի սաորին։

բուցեալ արդարոց և սրբոց, այլ այնու՝ որոյ տուեալ խոկզբանէ զիշխանութիւն կենաց և մահու. և ոչ եթէ վասն մարդոյ պատառեցաւ վարագոյր տաճարին ծագէ 'ի ծագ, այլ վասն այնորիկ՝ որ ասացն ցնոսա, թէ ահա թողեալ լիցի տունդ ձեր աւերակ։ Ահաւասիկ թէ չէր ծանուցեալ խաչահանուացն թէ որդի է նա Աստուծոյ, ոչ զաւեր քաղաքին Իւրեանց քարոզէին և ոչ 'ի վերայ անձանց վայ արկանէին. նա և ոչ եթէ կամեցեալ էր նոցա լռել յայնմ խոստովանութենէ՝ թողուին զնոսա ահագին դղորդմունքն որ եղեն յայնմ ժամու[1]։ Ահա այսուհետև և յորդւոց խաչահանուացն դարձան և եղեն քարոզիչք և աւետարանիչք ընդ ընկերակիցս իմ և առաքեալս, յամենայն երկիրն Պաղեստինացւոց և 'ի մէջ Սամարացւոց և յամենայն աշխարհին Փղշտացւոց։ Եւ անարգեալ են կուռք հեթանոսաց, և պատուի խաչն Քրիստոսի, և խոստովանին ամենայն ազգք յԱստուածն՝ որ եղև մարդ[2]. զի եթէ մինչ յերկրի էր Տէր Յիսուս, հաւատացեալ էր ձեր 'ի նա՝ թէ որդի Աստուծոյ է. և յառաջ քան զլսել ձեզ զաւետիս քարոզութեան նորա, գոհացեալ ձեր զնըմանէ՝ թէ Աստուած է, և արդ զի վերացեալ է առ Հայր իւր և տեսէք զնշանսն և զսքանչելիս որ լինին յանուն նորա, և զբան աւետեաց նորա լսէք ականջօք ձեր օք, մի՛ ոք 'ի ձէնջ երկմտիցէ 'ի խորհուրդս իւր. որպէս զի հաստատուն կացցէ առ ձեզ խոստումն օրհնութեան նորա՝ որ առաքեաց առ ձեզ, թէ Երանի՛ է ձեզ զի հաւատացէք յիս մինչև տեսեալ իցէ ձեր զիս. և զի այսպէս հաւատացէք յիս՝ քաղաքն յորում բնակեալ էք դուք՝ օրհնեալ լիցի, և թշնամի մի՛ տիրեսցէ դմա յաւիտեան[3]։ Մի՛ այսուհետև խոտորիք 'ի հաւա-

1 2 Յուցանէն բանքս մեծ յոյժ լինել սասանութեանն երկրի 'ի խաչելութեան Տեառն մերոյ։

2 Բանքս 'ի գէպ գան ոչ յետ ամի՝ այլ յետ ամաց ինչ համբարձմանն Քրիստոսի, յորժամ ընդարձակեալ էր քարոզութիւն աւետարանին։

3 Յիշատակէ զպատասխանին կամ զպատգամն Քրիստոսի առ Աբգար. բայց զի առ Եւսեբեայ և Խորենացւոյ ոչ գտանի յետին բանդ վասն Եդեսիոյ անառ 'ի թշնամեաց մնալոյ, թուեցաւ ոմանց 'ի նոցին իսկ յԵդեսացւոց յարմարեալ զայն. այլ առ Ասորիս՝ անդստին 'ի Ս. Եփրեմայ հետէ յեղյեղի այդ բան իբրու ոչ անյարիր առաջնոց

տոց նորա, զի ահաւասիկ լուարուք և տեսէք զամենայն զոր քարոզեցաք ձեզ, թէ Որդի Երկրպագեալ և Աստուած փառաւորեալ և Թագաւոր յաղթող և զօրութիւն անյաղթ. և հաւատովք նորա կարող էք ստանալ զաչս ճշմարիտ մտաց, և ապա 'ի միտ առնուլ, թէ որ միանգամ երկիր պագանէն արարածոց՝ բարկութիւն սրտմտութեան հասանէ նոցա։

Արդ զամենայն զոր ինչ միանգամ ասեմք առաջի ձեր՝ որպէս ընկալաք մեք 'ի պարգևաց Տեառն՝ ասեմք և ուսուցանեմք ստանալ ձեզ զկեանս ձեր. և մի՛ կորուսանէք զհոգիս ձեր 'ի մոլորութիւն հեթանոսական, քանզի ծագեալ է լոյս երկնային յամենայն աշխարհի. և նա ինքն որ ընտրեացն զՀայրապետսն առաջինս և զարդարսն և զմարգարէսն, որոց խօսեցեալ ընդ նոսա յայտնութեամբ Հոգւոյն սրբոյ, քանզի նա ինքն իսկ է Աստուած հրեշտն խաչահանուացս. և հեթանոսք մոլորեալք՝ նմա պագանեն երկիր, թէպէտ և ոչ գիտեն. քանզի չիք այլ Աստուած ոչ յերկինս և ոչ յերկրի. և ահա ելանէ նմա գոհութիւն 'ի չորից կողմանց երկրի։ Ահա այսուհետև լուան ականջք ձեր զոր ինչ ոչ էր լուեալ ձեր. մի՛ այսուհետև լինիք զլացողք զոր լուայքդ և տեսէքդ. 'ի բաց արարէք 'ի ձէնջ զմիտս ապստամբողս հարցն ձերոց, և ազատեցէք զանձինս ձեր 'ի լծոյ մեղաց, որ թագաւորեալ է 'ի վերայ ձեր նուիրօք և զոհիւք դրօշելոց. և փոյթ լիցի ձեզ յաղագս կենաց ձերոց կորուսելոց, և վասն ընդ վայր խոնարհութեան գլխոյ ձերոյ. և ստացարուք զմիտս նորս և երկիր պագէք արարչին արարածոց, յորում նկարեալ են նկարագիր ճշմարտութեան և ստուգութեան Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն, իբրև հաւատայք և մկրտիք յանուն փառաւորեալ սուրբ Երրորդութեանն[1]։

Այս է վարդապետութիւն մեր և քարոզութիւն. ոչ եթէ բազում իրօք ինչ հաւատարիմ լինի ճշմարտութիւն Քրիստոսի՝ որք կամին հաւանել Քրիստոսի։ Գիւ-

բանից Քրիստոսի. զնոյն և միջին դարուց Բիւզանդացիք աւանդեն, Կեդրենոս, Կ. Պորփիւրոժեն, և այլք։

1 Սրբոյ Երրորդութեանն անուն ոչ թուի 'ի Թադէէ ասացեալ, այն զի և զբնագիրն թարգմանէ Գիւրբդոն «մկրտեցարուք յերրեակ և 'ի փառաւորեալ անուանս»։

տէք դուք զի բազում անգամ կարկեցի զբանս իմ առաջի ձեր, ուսանել ձեզ և 'ի միտ առնուլ զոր ինչ լուայքդ և տեսէք դուք, և մեք ուրախ լիցուք սովիմբ, որպէս հողագործ յօրհնեալ սերմանիս իւր, և Աստուած փառաւորեսցի յապաշխարութեանդ ձերում՝ որ առնա. և յորժամ հաւանեսջիք Ճշմարտութեանն՝ կելով կեցջիք։ Եւ մեք որ յորդորեմքս զձեզ յայս, ոչ զբկիմք յօրհնեալ վարձուց քարոզութեան մերոյ. վասն զի վստահ եմ լինել զձեզ երկիր օրհնեալ ըստ կամաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. վասն այսորիկ փոխանակ զփոշի ոտից մերոց որ ասացաւ մեզ թօթափել 'ի վերայ քաղաքին՝ որ ոչ ընդունին զբանս մեր, ահա թօթափեմք այսօր 'ի դրունս ականջաց ձերոց զպատգամն շրթանց մերոց, զի 'ի նոսին նկարեալ է գալուստն Քրիստոսի՝ որ եղև, և որ պատրաստեալն է լինել. և յարութիւն և կեանք ամենայն որդւոց մարդկան, և որոշումն որ լինի ընդ հաւատացեալս և ընդ անհաւատս, և պատուհաս չարի որ պահեալ է ուրացողաց և որք ոչ գիտեն զԱստուած. և զօրհնեալ խոստումն ուրախութեան՝ զոր պատրաստեալ են ընդունել որք հաւատացին 'ի Քրիստոս և երկիր պագանեն նմա և Հօր իւրոյ բարձրելոյ և խոստովանեսցին 'ի նա և 'ի Հոգին աստուածութեան իւրոյ։ Արդ այսուհետև առ ժամ մի կատարել արժան է մեզ զբանս մեր, և որոյ ընկալեալ զբանն Քրիստոսի մնասցեն առ մեզ և ոչք կամին հաղորդել ընդ մեզ յաղօթս, և ապա երթիցեն 'ի տունս իւրեանց։

Եւ իբրև զայս ասաց, ետես զի բազում մարդիկ քաղաքին մնացին անդէն, և սակաւք էին որ ոչ մնացին յայնմ ժամու. և ուրախ եղև մեծապէս Ադէ առաքեալ. բայց և նոցուն իսկ սակաւուց զկնի սակաւ աւուրց ընկալեալ զբանս նորա՝ և հաւատացեալ յաւետիս քարոզութեանն Քրիստոսի։ Եւ իբրև ասաց Ադէ առաքեալ զայս ամենայն առաջի ամենայն քաղաքին Ուռհայի, և ետես Աբգար թագաւոր թէ ամենայն քաղաքն ուրախ եղև վարդապետութեամբ նորա, արք և կանայք 'ի միասին, և ասեն ցնա. Ճշմարիտ և հաւատարիմ է Քրիստոս որ առաքեաց զքեզ առ մեզ։ Եւ նա իսկ թագաւորն ևս առաւել ուրախ եղեալ յայսմ յոյժ փա-

ռաւորէր զԱստուած. զի որպէս լուեալ էր[1] իւր յաղագս Քրիստոսի՝ նոյնպէս տեսանէ զզօրութիւնս և զզարմանալիս զոր առնէր Աստ առաքեալ անուամբն Քրիստոսի։

Եւ ասէ ցնա Աբգար Թագաւոր, թէ որպէս յղեցի ես առ Քրիստոս 'ի թղթին իմում; և որպէս նա յղեաց առ իս և ընկալայ 'ի քէն ես այսօր, նոյնպէս հաւատամ զամենայն աւուրս կենաց իմոյ, և 'ի նմին կամ ինամ պարծելով. քանզի 'ի միտ առեալ իմ թէ չիք այլ զօրութիւն՝ որ առնի անուամբ իւրով նշանք և ըքանչելիք, բայց միայն զօրութեամբն Քրիստոսի զոր առնես դու մեզ ստուգութեամբ։ Եւ արդ այսուհետև նմա երկիր պագանեմ ես և Մանու որդի իմ[2], և Աբգոստին և Շղամնթ Թագուրհիք։ Եւ արդ ուր և կամիս դու՝ շինեա եկեղեցի ժողովրդանոց որոց և հաւատացին և որք հաւատան բանից քոց. և որպէս հրամայեաց Տէրն քո, և եղիցես պաշտել համարձակութեամբ յամենայն ժամու։ Եւ որք կամին լինել ուսուցիչք և քարոզք աւետարանիս այսորիկ, պարգևս մեծամեծս շնորհեմ նոցա. և այլ ինչ գործ մի՛ լիցի, բայց միայն պաշտօն. և ամենայն ինչ որ պիտոյ է քեզ 'ի պէտս եկեղեցւոյ՝ ես տայց քեզ անհամար. և որպէս բան քո տիրէ և իշխէ 'ի քաղաքիս յայսմիկ, նոյնպէս առանց նուիրակի մնցես առ իս համարձակութեամբ յապարանս պատուոյ թագաւորութեանս իմոյ։

Եւ էջ Աբգար թագաւոր յարքունական ապարանս իւր և ուրախ եղև նա մեծապէս հանդերձ ամենայն իշխանօք իւրովք. Աբգուսաւ[3] և Գարմուսաւ, և Շամշագրաւ և Աբուբեաւ և Մեհրդաթաւ. զամենայն որ միանգամ տեսին աչօք իւրեանց և լուան ականջօք իւ-

1 Բնագիրն յաւելու ըստ Գիւրղոնի «յԱնանայ հաւատարմէն իւրմէ», կամ 'ի դիւանագրէ, զի Tabularius թարգմանէ, որպէս կոչէին առ լատինս դիւանագիրք կամ նշանագիրք։

2 Որպէս այլուր ասացաք հասարակ անուն է այս յոլովից թագաւորաց Եդեսիոյ. Ասորիք երկուս ասեն որդիս լինել Աբգարու յայս անուն. Խորենացի Անանուն կոչէ զորդի և զյաջորդ Աբգարու, որ թուի թիւրեալ յասորւոյն։ Յայլ ինչ ասորի գրուածս Գիւրղոն ընթեռնու և այլ երկուս անուանս որդւոց Աբգարու Սևերոս (Շաւարշ?), և Հերոդ։

3 Որդոով Աբգարայ, յաւելու բնագիրն։

րեանց, և ուրախութեամբ սրտից իւրեանց փառաւոր առնէին զԱստուած, որ դարձոյց զմիտս նոցա առ ինքն։ Եւ իբրև ուրացան նոքա զկրօնս հեթանոսութեանն յորում կային, և խոստովան լինէին յաւետարանն Քրիստոսի, և շինեաց անդ Ադէ զեկեղեցին և մատուցանէին 'ի նմա զուխտս և զպատարագ իւրեանց՝ ինքեանք և բազմութիւն քաղաքին. և անդ փառաւորէին զԱստուած՝ զամենայն աւուրս կենաց իւրեանց։ Եւ մատուցեալ առ Ադէ՝ Աւիդա և Բարքաղաբա որ էին գլխաւորք հրամանատարք քաղաքին, որք զգեցեալ էին զհոյրս արքունական [1], և հարցանէին զնա վասն գալստեանն Քրիստոսի զի պատմեսցէ նոցա, թէ զիա՞րդ իբրև զԱստուած էր նա և երևէր նոցա իբրև զմարդ, կամ ի՞նչ կարող էիք հայել յերեսս նորա։ Եւ նա զամենայն ինչ ցուցանէր և ուսուցանէր և հանդուցանէր զշարժուն միտս նոցա, վասն ամենայնի զոր տեսին աչք նոցա և լուան ականջք նոցա՝ 'ի նմանէ. և զամենայն ասացեալսն մարգարէիցն վասն Քրիստոսի՝ կարգէր առաջի նորա։ Եւ ընդունէին զբանս նորա քաղցրութեամբ և հաւատովք, և ոչ ոք էր որ ընդդէմ դառնայր նորա. քանզի ոչ թողուին առաքինութիւնքն զոր առնէր նա՝ թէ ոք դիմահարիցի նմա։

Ա.յլ Շաւիդա և Աբեդնաբու գլխաւորք քաղաքիս [2] այսորիկ հանդերձ Պերոզիւ և Դանկովաւ [3] ընկերօք իւրեանց՝ իբրև տեսին նոքա զնշանսն զոր առնէր Ադէ առաքեալ, ընթացան նոքա և գլխէին զբագինսն յորոց վերայ զոհէին առաջի Նաբուայ և Բելայ աստուածոց իւրեանց, և զբագինն մեծ [4] որ 'ի մէջ քաղաքին. և աղաղակէին ասելով, թէ Ճշմարիտ աշակերտ է սա վարդապետին մեծի լուսաւորելոյ և փառաւորելոյ՝ զորմէ լսէաք զոր միանգամ առնէր յաշխարհին Պաղեստինացւոց։ Եւ ամենեքին որ հաւատացին 'ի Քրիստոս՝ ընդունէր զնոսա Ադէ առաքեալ և մկրտէր զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ Եւ որք

1 Գիւրբդոն թարգմանէ headband, գլխոյ խաչ, ապարօշ։

2 Բնագիրն ասէ գլխաւորք քահանայից կամ քրմապետք, որ թուի վրիպակալ 'ի հայ գրչէն։

3 Դիւ՝ ընթեռնու Գիւրբդոն։

4 Գիւրբդոն թարգմանէ «բաց 'ի բագնէն մեծէ»։

միանգամ՝ քարից և փայտից երկիր պագանէին՝ գայլին նստէին առ ոտս նորա ուսանել և խրատել 'ի նմանէ, զի հեռասցին 'ի գարշելեացն և 'ի հեթանոսական մոլորութենէն. և Հրեայք գիտակք օրինացն և մարգարէիցն՝ կտաւավաճառք, և նոքա հաւանեալք աշակերտեցան խոստովանելով 'ի Քրիստոս, եթէ նա է որդի Աստուծոյ կենդանւոյ։ Այլ ոչ ինքն Աբգար թագաւոր և ոչ Ադէ առաքեալ նեղէին զոք, թէ բռնադատելով զոք հաւատացէ 'ի Քրիստոս. քանզի առանց բռնութեան ուրուք՝ բռնութիւն նշանացն և աքանչելեացն նեղէր զնոսա հաւատալ 'ի նա. և սիրով ընդունէին զվարդապետութիւն նորա ամենայն աշխարհն Միջագետաց, և ամենայն կողմանք որ շուրջ զնովաւ։

Բայց Ադէ[1] կերպասագործ[2] և խոյրաքանդակ[3] թագաւորին, և Փըղոտ[4] և Բարշղամայ և Բարսեմի, հանդերձ այլովք ընկերօք իւրեանց՝ յարեցան յԱդէ առաքեալ. և ընկալաւ նա զնոսա հաղորդելով ընդ իւր 'ի պաշտօն և 'ի վարդապետութիւն։ Եւ իբրև ընթեռնուին նոքա զՀին կտակարանս և զնորս և զմարգարէական գիրս և զգործս առաքելոց՝[5] ամենայն ժողովրդեանն եկեղեցւոյն. և պատուիրէր նոցա Ադէ, զգուշանալ նոցա յամենայնէ, զի լցին սուրբ մարմնով

1 Ագգէոս ըստ ասորւոյն, տես 'ի ծան. 2 էջ 6։ Այս է Ադդէ հայրապետ զոր ասենք ընդ Աբգարու։

2 Գիւրըգոն թարգմանէ շինող շղթայից կամ քայռից, այլ յիշէ հաւանութեամբ և զՆերպասագործն կոչումն 'ի Խորենացւոյ։

3 Եւ ասա ըստ վերոյգրելոյդ Գիւրըգոն վարսակալաց շինող թարգմանէ, և համարի զնոսրն՝ փակեղն կերպասեայ. բայց զի մերս խոյրաքանդակ ասէ՝ ցուցանէ 'ի վերայ հաստատուն նիւթոյ ածել զկերպասն և զքանդակսն։

4 Սա որ յիշի և 'ի վերջ կոյս գրոցս, և ընկերքն՝ կացին առաջնորդք եկեղեցւոյն Եդեսացւոց մի ըստ միոջէ. զի Բարսեմի եպիսկոպոս յիշի 'ի սկիզբն Բ գարու առ Տրայանոսիւ խոստովանեալ և խաղաղութեամբ հանգուցեալ 'ի Քրիստոս. որոյ վարքն գտանի և 'ի Յայսմաւուրս մեր. և երկարագոյն ևս յասորի գրոց թարգմանեալ է Գիւրըգոնի և հրատարակեալ ընդ թղթոյս Աբգարու։ — Բարշղամա՝ որ զկնի գրի և Աբեղամա՝ յաջորդեաց զՓղոտն. իսկ սա զոր Ասորիքն Պաբուպ կոչեն՝ յաւարտ գրոցս վկայի լինել յաջորդ Ադէի կերպասագործին։

5 Եթէ արդարև Գործք առաքելոց էին (զոր գրեաց Ղուկաս յամին 51) և Նոր կտակարանքն՝ զոր այժմս ունիմք՝ ընթերցեալքդ, յետոյ քան զԹադէի քարոզութիւնն են. որ է ասել՝ թէ գրիչ պատմութեանս կամ այլ ոք յետոյ եմոյծ ասա զբանս զայս, որպէս և զկնի յայտնագոյն ևս նշանակեսցի։

իւրեանց և պարկեշտք հոգւովք, որպէս վայել է մարդոց սրբոց՝ որք կան առաջի սեղանոյ Աստուծոյ։ Եղերուք ասէ հեռանալ՝ի սուտ երդմանէ և յամպարիշտ սպանմանէ և յանօրէն վկայութենէ, որ՝ի շնութիւնս խառնակեալ են, և՝ի կախարդաց, յորոց վերայ չլինի ողորմութիւն. և՝ի խորոց և՝ի կիւսոց և վոհկաց և՝ի բախտից և՝ի ծննդոց, որովք պարծին Քաղդեացիք մոլորականք. և յաստեղագիտութենէ և՝ի մղավանջէից՝[1] յորս յուսացեալ են յիմարեալքն. և՝ի բաց արարէք՝ի ձէնջ զակնառութիւն մեղաց և զկաշառս և զպատարագս, որով պարտաւորին արդարքն, և կուրացուցանեն զաչս առողաց։ Եւ՝ի պաշտամանդ յոր կոչեցարուք՝ մի՛ և ես լեցի ձեզ վաստակ, այլ զի Տէր է հանդիսատ պաշտամանն ձերոյ զամենայն աւուրս կենաց ձերոց. և եղիջիք փոյթք՝ի մկրտել, և մի՛ սիրէք զշահս աշխարհիս այսորիկ. և եղիջիք առնել դատ արդարութեան և ստուգութեան. և մի՛ լինիք դայթակղութիւն կուրաց. զուցէ հայհոյիցի՝ի ձեզ անուն այն՝ որ էրաց զկոչս, որպէս տեսաք մեք։ Ամենայն որ տեսանէ զձեզ այսուհետև.՝ի միտ առցէ թէ կատարիչք էք դուք ամենայնի որոց քարոզէքդ և ուսուցանէք։

Եւ պաշտէին յեկեղեցւոջն զոր շինեաց անդ Ադէ առաքեալ՝ բանիւ և հրամանաւ Աբգարու Թագաւորի. և էին նոքա մատակարարք Թագաւորին և նախարարաց իւրոց՝ի պէտս եկեղեցւոյ և՝ի տուրս աղքատաց։ Այլ ժողովուրդ բազում ժողովէին օր ըստ օրէ և գային յաղօթս և՝ի պաշտօն. և լի էին՝ի հնոց կտակարանաց և՝ի նորոց գրոց. յերրորդութիւն[2],՝ի

1 Ասորի բառ է, մալբուշէ, և նշանակէ գօրի ասաղաց, այսինքն է կամարն կենդանակերպից, զոդիակոս յունարէն ձայնիւ։

2 Կոչումն Երրորդութեան թուի յետոյ յօրինակողացն մուծեալ. բայց՝ի բնագրին յայսմ տեղւոջ Գիւրդոն ընթեռնու բառ մի Տիդոնոն կամ Տիդոնրոն և չիմանայ զվիտս բանին, այլ կարծէ վասն Նորոց կտակարանացն ասացեալ և գուցէ զՏիդէնսարոն նշանակեալ, այսինքն զհամաբարբառ չորից աւետարանաց զբարդրեալն՝ի Տատիանոսէ ասանդաւորէ յԲ գարու, և ասա նեբամուծեալ յանփորձ օրինակողէ, կամ՝ի հեռաւորաց նորին։ Արժան է քննել քաջ զընագիրն, սակայն և այս և որ յետ այսր յիշեալ տօնք և հսկմունք եկեղեցւոյ՝ ցուցանեն զեկամտութիւն բանից։

յարութիւն և 'ի կենդանութիւն մեռելոյ՝ հաւատային. և զվախճանեալս իւրեանց յուսով կենդանութեան թաղէին. և զտօնս եկեղեցւոյ 'ի ժամանակի իւրում ուրախութեամբ կատարէին. զամենայն աւուրս հանապազորդեալս 'ի հսկումն եկեղեցւոյ. և ողորմութիւն առատապէս առնէին առ հիւանդս և առ աղքատս ըստ վարդապետութեանն Ադէի առ նոսա։ Եւ շուրջ զքաղաքաւն շինէին եկեղեցիս և զձեռնադրութիւն քահանայութեան ընդունէին 'ի նմանէ բազումք։ Եւ բազումք յարևելից[1] 'ի նմանութիւն վաճառականաց՝ յիշխանութիւն Հռովմոյ գային, տեսանել զնշանսն՝ զոր առնէր Ադէ առաքեալ. և աշակերտեալքն 'ի նմանէ ընդունէին 'ի նմանէ զձեռնադրութիւն քահանայութեան. և յաշխարհին իւրեանց յԱսորեստանի զդաւառականս իւրեանց աշակերտէին, և տունս աղօթանոցս շինէին 'ի ծածուկ, վասն երկիւղի այնոցիկ՝ զոր երկիր պագանէին կրակի և պատուէին զջուրս։

Բայց Ներսեհ թագաւոր Ասորեստանեայց[2] յորժամ լուաւ զգործսն զոր առնէր Ադէ առաքեալ, յղեաց նա առ Աբգար թագաւոր և ասէ. կամ տուր ածել ինձ զայրդ որ զնշանսդ առնէ առ քեզ, զի տեսից զդա և լուայց զբանս դորա, և կամ տուր գիտել ինձ զամենայն ինչ որ միանգամ արարեալ է դորա 'ի քաղաքիդ քում։ Ապա գրեալ[3] Աբգարու Ներսեհի թա-

1 Յեր սակաւ տողից ցուցանէ զԱսորեստան իմանալ արևելից կողմամբ. և զսա իբրև ուրոյն թագաւորութիւն. տես սատրև։

2 Յիշատակէ զայսոսիկ և Խորենացի, (Բ. ԼԳ.) և ասէ զՆերսեհ լինել որդի Արտաշեսի Պարթևաց արքայի, և կուսակալ կողմանց Բաբելոնի։

3 Թուղթ մի համառօտ Աբգարու առ Ներսեհ գտանի առ Խորենացւոյ (Բ. ԼԳ.) որ յայտ է թէ 'ի նոյն 'ի գիւանաց Եդեսիոյ էառ, և ունի այսպէս. « Աբգար արքայ Հայոց, որդւոյ իմոյ Ներսեհի խընդալ։ Զգիր ողջունի քոյոյ տեսի, և զՊերոզ լուծի 'ի կապանաց, և զնեաս նորա թողի նմա. և եթէ կամ իցէ քեզ կարդեսցես զնա 'ի վերակացութիւն Նինուէի, որպէս և կամիս։ Այլ վասն այնր զի գրեցեր առ իս՝ թէ տուր ածել զայրդ բժիշկ՝ որ զնշանսդ առնէ և քարոզէ այլ Աստուած 'ի վեր քան զհուր և զջուր, զի տեսից և լուայց դմա, նա ոչ էր բժիշկ ըստ արուեստի մարդկան, այլ աշակերտ էր Որդւոյն Աստուծոյ՝ արարչի հրոյ և ջրոյ. և վիճակ հասեալ 'ի կողմանս Հայոց առաքեցաւ։ Բայց յընկերաց նորա դլխաւորաց Սիմոնն անուն՝ նա 'ի

գաւորի Աստուծոյ և իմացուցեալ նմա զամենայն պատմութիւն իրացն՝ զոր արար Աստ առաքեալ իսկզբանէ մինչև ցկատարած. և ոչ եթող ինչ զոր ոչ իմացոյց նմա գրով։ Եւ իբրև լուաւ Ներսէհ զգրեալսն առ նա՝ հիացեալ զարմանայր, և մեծապէս ցանկութեամբ կամէր տեսանել զնա։

Բայց Աբգար թագաւոր քանզի ոչ կարաց անցանել ընդ Հռոովմոց տուն և երթալ 'ի Պաղեստինէ, քանզի կամէր երթալ սատակել զՀրեայս սակս խաչելոյ նոցա զՔրիստոս, գրեաց նա հրովարտակ՝ և ետ տանել առ Տիբերիոս կայսր, յորում գրեալ էր այսպէս. «Աբգար թագաւոր, տեառն իմում Տիբերեայ » կայսեր, խնդալ։ Զի գիտեմ ես թէ ինչ 'ի թագա- » ւորութենէդ քումմէ ոչ ծածկի, գրեցի իմացուցա- » նել ահաւոր մեծութեանդ քում, զի Հրեայք որ ընդ » ձեռամբ քով բնակեալ են 'ի գաւառս Պաղեստի- » նացւոց, ժողովեցան 'ի միասին և խաչեցին զՔրիս- » տոս առանց իրիք յանցանաց մահու, 'ի վերայ մե- » ծամեծ երախտեացն զոր արար առ նոսա՝ նշանս և » սքանչելիս, և առնէր զօրութիւնս մեծամեծս, մին- » չև զմեռեալս անգամ յարուցանէր. և 'ի ժամուն յո- » րում խաչեցին զնա՝ արեգակն խաւարեցաւ և եր-

կողմանս Պարսից առաքեալ է. խնդիր արարեալ լուիցես նմա, յորժամ և հայրն քո Արտաշէս։ Եւ նա բժշկեսցէ զամենայն հիւանդութիւնս և ճանապարհ կենաց ցուցցէ »։

1 Գտանի առ Խորենացւոյ պատճէն թղթոյս սակաւ ինչ այլայլութեամբ. և է այսպէս. « Աբգար արքայ Հայոց տեառն իմում Տիբերի կայսեր Հռովմայեցւոց, խնդալ։ Գիտելով իմ թէ ոչինչ ծածկի 'ի քումմէ թագաւորութենէդ, այլ իբրև զմտերիմ քո աւելի ևս իմացուցանեմ 'ի ձեռն գրոյ. զի Հրեայք որ բնակեալ են 'ի գաւառս Պաղեստինացւոց, ժողովեալ խաչեցին զՔրիստոս, առանց իրիք յանցանաց, 'ի վերայ մեծամեծ երախտեացն՝ զոր արար առ նոսա, նշանս և սքանչելիս, մինչև զմեռեալս անգամ յարուցանել։ Եւ գիտեա զի զօրութիւնքս այս, ոչ են սոսկ մարդոյ՝ այլ Աստուծոյ։ Զի և 'ի ժամանակին յորում խաչեցինն զնա՝ արեգակն խաւարեցաւ և երկիր շարժեալ տատանեցաւ, և ինքն յետ երից աւուրց յարեաւ 'ի մեռելոց և երևեցաւ բազմաց։ Եւ այժմ յամենայն տեղիս անուն նորա 'ի ձեռն աշակերտաց նորա սքանչելիս մեծամեծս կատարէ, որ և առ իս ինքեան եցոյց յայտնապէս։ Եւ արդ այսուհետև տէրութիւնդ քո գիտէ որ ինչ արժան է հրամայել 'ի վերայ ժողովրդեանն Հրէից, որք զայն գործեցին, և գրել ընդ ամենայն տիեզերս՝ զի երկրպագեսցեն Քրիստոսի իբրև Աստուծոյ։ Ողջ լեր »։

» կիր շարժեցաւ, և դողացեալ սասանեցան ամենայն
» արարածք. և իբրև առ 'ի նոցանէն այս իրօք սպա-
» ռեալ տիեզերաց և ամենայն որդիք մարդկան։ Եւ
» արդ այսուհետև թագաւորութիւն քո գիտէ որ ինչ
» արժան է հրամայել 'ի վերայ ժողովրդեանն Հրէից՝
» որք զայնն գործեցին »։

Եւ գրեալ Տիբերիոս կայսեր՝ ետ տանել Աբգարու թագաւորի, և այսպէս գրեաց նմա [1]։

« Զթուղթ մտերմութեան քո ընկալայ և ընթեր-
» ցեալ առաջի իմ զոր ինչ արարին Հրեայքն 'ի խաչե-
» լեալն նա և վասն Պիղատոսի դատաւորի գրեալ. ի-
» մացոյց և ինձ Բղյանոս [2] եպարքոս վասն սորին իրաց
» իսկ այսոցիկ՝ որ գրեալ է քո առ իս։ Այլ զի պա-
» տերազմ Սպանիացւոց [3] կայ առաջի իմ, որ ապրս-
» տամբեցին յինէն 'ի ժամանակի յայսմիկ, վասն այ-
» սորիկ ոչ կարացի խնդրել զվրէժ իրացդ այդոցիկ.
» բայց պատրաստեալ եմ թէ յորժամ լիցի ինձ պա-
» րապ՝ հրամայեցից պատիժս օրինօք 'ի վերայ Հրէից
» անօրինացն որք անցին զօրինօք։ Եւ վասն Պիղա-
» տոսի դատաւորի զոր արարեալ էր իմ անդ՝ առա-
» քեցի նմա փոխանակ, և զնա լուծի թշնամանօք. զի
» անց նա զօրինօք և արար զկամն Հրէից և խաչեաց
» զՔրիստոս յանդիման նոցա. վասն որոյ լեմ թէ և
» ոչ խաչի և մահու արժանի էր, այլ պատուի և եր-
» կրպագութեան և մեծարանաց 'ի նոցանէ արժանի
» էր [4]. և առաւել ևս զի աչօք իւրեանց տեսանէին զա-

1 Այս թուղթ ոչ սակաւ այլաձայնի 'ի պատճէնէն որ առ Խորենացւոյն, և թուի յարմարեալ 'ի պատասխանի երկոցուն թղթոցն Աբգարու միանգամայն, որոց երկրորդն ոչ յիշի ասա, այլ դասնի առ Խորենացւոյ։

2 Յասորին Աբգիանոս ընթեռնու Գիւրդոն և սխալ համարի, որպէս է անշուշտ և 'ի հայումն, որ մերձագոյն է Պլինիոս անուան. սակայն ոչ յիշի յայսմ ժամանակի եպարքոս կամ փոխահիւպատ Ասորւոց այս անուն, և Պլինիոս յետոյ ուրեմն առ Ներոնիս եկաց. իսկ յայսմ ժամանակի կուսակալ կողմանցս էր Վիտելլիոս յիշատակեալ 'ի Տակիտոսէ (Տարեգր. Զ. ԼԲ, ԽԱ.) և յառաջ քան զնա Ելիոս Լամիա. (Նոյն, Զ. ԻԷ.) և դուցէ սա իսկ է յիշեալդ 'ի թղթիս։

3 Տես յէջ 12 ծան. 2։

4 Յառաջնում թղթին Տիբերի առ Աբգար, որ առ Խորենացւոյ, կայսրն երևեցուցանէ զինքն հաւանեալ բանից նորա և արժանի պաշտաման դատեալ զՔրիստոս, բայց ծերակուտին ոչ նոյնպէս. արդ

» մենայն ինչ զոր առնէր նա. բայց դու ըստ մտերմու-
» թեան քում և հաստատուն ուխտիդ քո և հարց
» քոց որ ընդ իս է, բարիոք ալարեր զի գրեցեր առ
» իս զայս »։

Եւ ընկալեալ Աբգարու թագաւորի զԱրտեդիաս[1] զառաքեալ առ նա 'ի Տիբերիայ կայսերէ, և կրկնեալ առաքեաց զնա անդրէն ընծայիւք և պատուով[2] ըստ արժանի այնմ որպէս յղեալն էր զնա։ Եւ գնացեալ նորա յՈւռհայ քաղաքէ և երթեալ 'ի Նութիկոնթայ[3], ուր էրն Կղաւդիոս երկրորդ թագաւորին. և անտի գնացեալ Հոգան յԱրատիկէ[4], քանզի անդ էր Տիբերիոս կայսր. այլ Գայոս[5] պահէր զկողմանս որ շուրջ զկայսերքն էին։ Եւ պատմեալ Աբիսիդեայ առաջի Տիբերեայ կայսեր վասն զօրութեանցն զոր առնէր Աղէ առաքեալ առաջի Աբգարու թագաւորի։ Եւ յորժամ եղև նմա խաղաղութիւն 'ի պատերազմէն՝[6] առաքեաց և սատակեաց զգլխաւորսն 'ի Հրէից որք էին 'ի Պաղեստինէ բազմութիւն յոյժ մարդկան։ Եւ իբրև լուաւ Աբգար թագաւոր զայս՝ ուրախ եղև յոյժ, զի ընկալան Հրեայքն զպատուհասն արժանապէս։

Եւ յետ ամաց յորժամ շինեաց Աղէ առաքեալ զե-

վկայեն Տերտուլիանոս (Ջատագով. Ե), Եւսեբիոս (Եկեղ. Պատմ. Բ. Բ) և այլք, զի Տիբերիոս եկաց մեաց յիւրում հաւանութեան, և հրամայեաց խոշտանգել զՀալածիչս քրիստոնէից։ — Տես 'ի Յաւելուած Ա. զբանս Եւսեբի, որ և 'ի կանոնս Փրոնիկոնին նշանակէ այսպէս. «Տիբերիոս մահ սպառնացաւ որք զքրիստոնէից չար խօսեացին»։

1 Սատրև ստուգագոյն, որպէս և 'ի բնագրին գրի Աբիսիդէս, բայց ոչ առ Խորենացւոյ և ոչ այլուր յիշի դէսպանդ։

2 Գրեալ և թուղթ երկրորդ, զորոյ պատճէն ունի Խորենացի։

3 Գիւրըգոն երկբայութեամբ ընթեռնու Թիֆոնիա. երկոքին ևս անուանքդ անծանօթք են աշխարհագրաց։ Բայց վասն Կղաւդեայ ասի յառաջ քան զկայսրութիւնն բնակել յանեղան և յանծանօթ չէնս։

4 Աբգիկ ըստ Գիւրըգոնի ընթերցուածոյն, զոր մարթ է ասել ընթեռնուլ և Օրտիւգա և համարել զՈրդիւգիա մերձ 'ի Սիրակուսա։ Բայց զի Տիբեր 'ի Կապրէա նստէր և շինեալ էր անդ բաղուստ ամբանոցս, գուցէ մի էր յայնցանէ տեղիս այս։ Իսկ եթէ ըստ խոստման իւրոյ որ 'ի թղթին առ Աբգար՝ երթեալ էր նորա 'ի Սպանիա՝ մարթ էր համարել զդա՝ զԱրագուկա քաղաք Տրաքոնացւոց 'ի նմին աշխարհի. բայց պատմիչք Հռովմայեցւոց ասեն ոչ երթեալ Տիբերի այլուր 'ի կղզւոյ անտի մենարանին բայց երկիցս միայն 'ի Հռովմ կոյս և վաղ ընդ փոյթ դարձ արարեալ։

5 Որ է Կալիգուլա կայսր, թոռն և յաջորդ Տիբերի։

6 Պատերազմն Սպանիացւոց։

կեղեցին Ուռհայի, և կազմեաց զնա ամենայն կազ-
մութեամբ որպէս վայել էր նմա, և աշակերտեալ նո-
ցա անդ բազմութիւն մարդկան 'ի քաղաքին և յայլ
ևս 'ի գեօղս 'ի հեռաւորս և 'ի մերձաւորս. շինեալ
նորա եկեղեցիս և զարդարեալ և կազմեալ և կար-
գեալ 'ի նմա երիցունս և սարկաւագունս և գրակար-
դացս[1], և ուսոյց նոցա զկարգս պաշտաման 'ի նեբքոյ
և արտաքոյ։ Եւ յետ այսր ամենայնի կամեցաւ Ադէ ա-
ռաքեալ (գնալ)[2] 'ի կողմանս արևելից և յերկիրն Ա-
սորեստանի քարոզել և ուսուցանել և անդ զնոր վար-
դապետութիւնն Քրիստոսի, և շինել եկեղեցիս յա-
մենայն գաւառս և 'ի գեօղս 'ի կողմանս արևելից։ Ա-
պա կոչեցեալ նորա զամենայն ժողովուրդս և զիշխանս
որ էին 'ի քաղաքին, և կարգեաց առաջի նոցա 'ի կարգ
եպիսկոպոսութեան յիւրում տեղիսՋ զԱդէ կերպա-
սագործ, և զՓլոտ[3] 'ի կարգ երիցութեան, և զԱ-
շղամայ՝[4] 'ի կարգ սարկաւագութեան։ Եւ մինչդեռ
ժողովեալ էին առ նա նախարարք և գլխաւորք քա-
ղաքին, Բաբքաղաբա որդի Ջատէի, և Մարիհաբ որդի
Բարշամշայ, և Մնակայ որդի Պատրիկայ[5], հանդերձ
այլովք ևս բազում ընկերօք իւրեանց. և ասէ ցնոսա
Ադէ առաքեալ. Գիտէք դուք և վկայէք ինձ ամենե-
քին որ լսէքդ, թէ զամենայն ինչ որ միանգամ քա-
րոզեցի և ուսուցի ձեզ և լուայք յինէն, սոյնպէս վա-
րեցայ 'ի միջի ձերում, և տեսէք դուք զամենայն ըզ-

1 Այս դաս եկեղեցական պաշտօնէից ոչ յիշի այլուր սովին ա-
նուամբ յառաջ քան զայս ժամանակ։

2 Յօր. մերում պակասէ բառս. իսկ ասորի բնագիրն Գիւրըգոնի
օտարանայ այսուհետև 'ի մերոյս և 'ի ծանուցեալ պատմութենէ և-
կեղեցւոյս մերոյ, որ զԹադէոս գիտէ յԵդեսիոյ եկեալ 'ի մեծ Հայս
և անդ նահատակեալ, և 'ի Թղթիս ևս յայսմ ասի յարևելս գնացեալ.
իսկ ասորիդ ասէ. «Յետ այսր ամենայնի ըմբռնեալ Ադէի յախտէ
» հիւանդութեան՝ որով և փոխեցաւ յաշխարհէ ասի». և ասորև
պատմէ զԹաղուսին իսկ. իսկ մեր Թարգմանութիւնս այլազգ ունի՝ որ-
պէս տեսցի. «ապա կոչեցեալ նորա զԱդէոս առաջի ամենայն բազմու-
թեան եկեղեցւոյն, և մօտ մատուցեալ՝ կարգեաց զնա առաջնորդ և
վարիչ»։

3 Ասորին, որ էր 'ի կարգի սարկաւագութեան։

4 Ասորին, որ էր դպիր, յայտ է թէ եկամուտ են յաւելուածքդ։

5 Ասորին, Սենակ որդի Աբիդէայ, և Պերոզ որդի Պապրիկայ. թուի
վրիպեալ հայ գրչին կամ ընդօրինակողն։ Սիննակ ոմն գեսպան Պար-
թևաց յիշի առ Տակիտեայ (Տարեգր. Զ. ԼԱ, ԼԲ)։

գործս իմ։ քանզի այսպէս պատուիրեաց մեզ Քրիս-
տոս, թէ զոր ինչ բանիւ քարոզեմք՝ զնոյն և արդեամբք
կատարեսցուք առաջի ամենայն ժողովրդոցս, և ըստ
կարգաց և օրինաց զոր եդ Տէր մեր աշակերտացն [1]
Յերուսաղէմ, և նովին վարին առաքեալքն և ընկերք
իմ, սոյնպէս և դուք մի՛ փոխիք 'ի նոցանէ և մի՛ խոտո-
րիք յաջ կամ յահեակ. և մի՛ պակասեցուցանէք 'ի
նոցանէ և մի յաւելուք, զոր օրինակ վարեցայ ես 'ի
միջի ձերում և ոչ խոտորեցայ յաջ կամ յահեակ. և
մի՛ պակասեցուցանէք 'ի նոցանէ ինչ, զոր օրինակ և ես
նոքօք վարեցայ 'ի միջի ձերում։ և ոչ փոխեցայ ինչ 'ի
նոցանէ յաջ կամ յահեակ, զի մի՛ օտարացայց 'ի կե-
նացն խոստացելոցն, որ պահեալ են այնոցիկ՝ որ կան
'ի պատուիրանին զոր պատուիրեաց Քրիստոս։ Զգոյշ
լերուք պաշտամանդ՝ զոր ընկալարուք, և ահիւ և եր-
կիւղիւ լիջիք կալ 'ի դմին և պաշտել հանապազ. և մի՛
լինիք արհամարհողք սովորութեամբք, պաշտել հեղ-
գութեամբ ըստ կամաց, այլ մեկնութեամբք գրոց կալ
'ի հաւատս ճշմարտութեան. և օրհնութիւնն Քրիս-
տոսի մի՛ խափանեսցի 'ի բերանոց ձերոց. և տաղտկու-
թիւն 'ի ժամ աղօթից 'ի միտս ձեր մի՛ մերձեսցի։ Զգ-
գոյշ լերուք ճշմարտութեամբ աւանդութեանդ զոր
ըմբռնեցէք, և վարդապետութեանդ՝ զոր ընկալարուք
'ի ժառանգութիւն կենացն՝ զոր աւանդեմ ձեզ։ Բան
զի առաջի բեմին Քրիստոսի խնդրի դա 'ի ձէնջ, յոր-
ժամ առնու համար ընդ հովիւս և ընդ հովուապետս.
և յորժամ առնու զարծաթ իւր 'ի վաճառականաց
իւրոց տոկոսիւք և շահիւք. քանզի որդի թագաւո-
րի է, և երթեալ է առնուլ զթագաւորութիւն և
դառնալ և գալ, և առնել հատուցումն [2] ամենայն որ-
դւոց մարդկան։ Եւ ապա յայնմ ժամանակի նստի
յաթոռ արդարութեան և դատի զմեռեալս և զկեն-
դանիս որպէս և ասացն ցմեզ։ Այն անհերևոյթ խոր-

1 Աստրին. ըստ կարգաց և օրինաց որ եդան յաշակերտացն Յերուսաղէմ. որով իմանայ արդեօք զկարգս և կանոնս առաքելոց որք գտանին 'ի գլուխ կանոնագրոց մերոց, և թարգմանեալ են յասորի գրոց. իսկ յասորի բնագրին 'ի Թադէէ ասի ինքնին շարադրեալ և գործն այն, կամ մասն լինել Վարդապետութեան նորա։

2 Գիւրըգոն թարգմանէ առնել յարութիւն։

հրդոց ձերոց 'ի լուսոյ նորա մի կափուսցի, զի մի բազմասցին գայթակղութիւն ձեր 'ի Հանապարհին՝ յորում չիք գայթակղութիւնք. և ոչ աղտեղի աղտ ունիցիք 'ի շաւիղս նորա։ Եւ եղիջիք 'ի խնդրել զկորուսեալս և այց առնել մոլորելոց, և ուրախ լինել ընդ գրեալսն. դնել կաղանդս բեկելոցն և պահել անաբատ զողջսն. քանզի 'ի ձեռաց ձերոց խնդրին որոջք Քրիստոսի։ Եւ մի ակն ունիք պատուոյ անցաւորի. զի հովիւն որ ակն ունի պատուել 'ի հօտէ իւրմէ՝ չարաչար կորուսանէ զիսաշն իւր։ Բազմասցի հոգաբարձութիւն ձեր առ գառինս անմեղս, զի հրեշտակք նոցա հանապազ տեսանեն զերեսս Հօրն երկնաւորի. և մի լինիք վէմք գայթակղութեան առաջի կուրաց, այլ հարթողք Հանապարհին և անբերեալոյթ շաւղաց 'ի դիժուարին տեղիս 'ի մէջ Հրեից խաչահանուաց և 'ի մէջ հեթանոսաց մոլորելոց. քանզի ընդ այս երկուս կողմանս է ձեզ Հշմարտութիւն հաւատոյդ զոր ունիք։ Եւ յորժամ զայս ամենայն առնէք իբրև դուք լուսակայք, տեսիլդ ձեր հեզ և սգաստ՝ պատերազմի փոխանակ ձեր ընդ այնոսիկ՝ ոյք ատեան զՀշմարտութիւն և սիրեն զստութիւն։ Եւ մի լինիք կռփիչք աղքատաց առաջի մեծատանց[1], և մի խաբիք յաղտեղի խորհուրդս սատանայի, զի մի մերկ գտանիցիք 'ի հաւատոյդ զոր զգեցայքդ[2]։ Զի դիւրին է ուրացութիւն քան զՀաւատս, զոր օրինակ դիւրին են մեղք քան զարդարութիւն։

Զգոյշ լերուք այսուհետև 'ի խաչահանուացն և մի լինիք նոցա սիրելիք, զի մի պարտականք գտանիցիք ընդ նոսա արեանն Քրիստոսի, որպէս լի են ձեռք իւրեանց։ Եւ գիտէք դուք և վկայէք, թէ զամենայն ինչ զոր ասեմք և ուսուցանեմք և գրեալ է 'ի գիրս մարգարէիցն և եղեալ առ նոսա. և վկայեն բանք նոցա վարդապետութեանս մերում։ վասն ծննդեանն Քրիստոսի և վասն դատաստանի, և վասն չարչարանաց և յարութեան, և վերանալոյն և միւսանգամ գալստեանն Քրիստոսի, և ոչ իմանան. և յորժամ մեզ ընդդիմանան՝

1 Ի բնագրին յաւելու, զի զոր ինչ լոր է նոցա աղքատութիւնն իւրեանց։
2 Դարձեալ պակասէ ասորին, զոր նշանակէ և անգղլացի Թարգմանն իբրև թուղթ մի պակասել 'ի բնագրին։

ընդդէմ լինին մարգարէիցն իւրեանց. զի որպէս՝ի կենդանութեան նոցա հալածեցին զնոսա, սոյնպէս և այժմ յետ մահուան նոցա՝ ընդդէմ կռուին Ճշմարտութեանն զոր գրեալ է՝ի մարգարէսն։

Զգոյշ լերուք դարձեալ՝ի հեթանոսաց, որք երկիր պագանեն արեգական և լուսնի և Բելայ և Նաբուայ, հանդերձ այլովքն, որ ինչ յերկինս և յերկրի. զոր անուանեն նոքա աստուածս, որք ստեղծան յարարչէն՝ի սպաս և՝ի պէտս մարդկան, և չեն աստուածք բնութեամբ։ Փախեարուք այսուհետև՝ի նոցանէ, քանզի արարածոց և ստեղծուածոց պագանեն երկիր. և որպէս ասացի յառաջագոյն թէ վասն այնորիկ եկն Տէր յաշխարհ, զի մի՛ և սա մոլորեսցին մարդիկ զհետ մտոտեաց պաշտել զարարածս. վասն զի ակնարկելով արարչին իւրեանց հաստատեցաւ և եղև. և յորժամ կամի՝ լուծանէ և խափանէ զնոսա, և լինին իբրև զչեղեալս։ Քանզի Արարիչն որ արար զարարածս, ազատեաց զորդիս մարդկան՝ի լծոյ ծառայութեան հեթանոսութեան, պաշտել զարարիչն Աստուած։ Քանզի գիտէք ամենեքին, թէ ամենայն որ թողու զթագաւոր և պաշտէ զծառայս նորա, չարաչար մեռցի։ Մի՛ լինիք քննողք աներևութիւն և հարցող ծածկեալ իրի, որ գրեալ է՝ի գիրս սուրբս, որ աւանդեցաւ ձեզ։ Մի՛ պարտապանք բանիւ մարգարէիցն. հաւատացէք և տեսէք զի հոգւով Աստուծոյ են ասացեալքս։ Որ ուրանայ և ոչ հաւատայ բանիւ մարգարէիցն՝ զՈրդի Աստուծոյ ուրանայ և դատապարտեալ կշտամբի. քաւ լիցի ձեզ առնել զայս. քանզի Ճանապարհք Տեառն ուղիղ են և արդարք գնան՝ի նոսա առանց գայթակղութեան, և ուրացողք գայթակղին՝ի նոսա. քանզի ոչ նայեցան աներևոյթ ակամբ մտաց իւրեանց, այլ աշխատեցան զկնի անօգ(ուտ) հարցուածոց և վնասակարաց։

Ցիշեցէք զգրեալսն մարգարէիցն՝ զոր քարոզեցաք ձեզ, զդատաստանս և զսպառնալիս մարգարէիցն, և զբանն Տեառն որ կնքէ զբանս նոցա. և հրով քննին որդիք մարդկան. վասն զի իբրև զհիւրս և զպանդուխտս են, ոչք մեծանան և կանխեն՝ի տունս իւրեանց։ Այսպէս համարեսջիք զանձինս ձեր յաշխարհիս յայսմիկ,

վան զի չուէլոց էք ասի, և երթալ յաշխարհն ուր[1] երթեալ է Որդի, պատրաստեալ է օթեվանս այնոցիկ՝ որ արժանի են նորա։

Թագաւորք աշխարհաց յորժամ կամին ուրեք երթալ, զօրականք նոցա առաջի նոցա երթան և պատրաստեն նոցա օթեվանս ըստ արժանի պատուոյ նոցա. այլ մեր թագաւորն Քրիստոս ինքնին երթեալ և պատրաստեալ է օթեվանս օրհնութեան զինուորաց իւրոց ի ջանեալ 'ի նոսա. զի ոչ եթէ ընդունայն ինչ աբար Աստուած զորդիս մարդկան, այլ զի լիցին երկրաբպագուք և փառաւորիչք աստուածութեան նորա, և աստ և անդ յաւիտեանս յաւիտենից. զի զոր օրինակ ինքն ոչ անցանէ, և փառաւորիչք իւր ոչ անցանեն։ Վասն այսորիկ և մահս իսկ այս որ վարիչ է ամենայն մարդկան, և ընդ լծով նորա հնազանդեալ են արդարք և մեղաւորք 'ի միասին, իբրև զքուն գիշերուոյ համարեսցի սա յաչս ձեր։ Եւ յիշեցէք, զի յորժամ երևեսցի նշան Որդւոյն Աստուծոյ և խափանի մահ վարիչ մարդկան, և սատանայ որ յանցուցանէ զբազում և մարտնչի ընդ Ճշմարիտս՝ զի հեռասցին 'ի Ճշմարտութենէ։ Զի զոր օրինակ հողագործն յորժամ ձեռն արկանէ զմաճով՝ եթէ դառնայ յետս[2], ոչ ուղիղ երթան ակօսքն առաջի նորա. սոյնպէս և դուք որ կոչեցարուք 'ի շնորհս պաշտամանս այսորիկ։ Զգոյշ լերուք, մի՛ շաղապատիցիք յիրս աշխարհիս այսորիկ, զի գուցէ խափանիցիք յոր կոչեցեալ էք։

Բայց զիշխանս և զդատաւորս որք մերձենան 'ի հաւատս յայս, սիրեսջիք զնոսա առանց ակնառութեան. և եթէ մեղանչեն՝ լիջիք յանդիմանել զնոսա Ճշմարտութեամբ։ Դուք ցուցջիք նոցա զհամարձակութիւն ուղղութեան ձերոյ, և նոքա խրատեսցին. զի այլ մի՛ ևս վարեսցին ըստ կամս իւրեանց։ Այն իսկ հոգաբարձութիւն լիցի ձեզ զամենայն աւուրս կենաց ձերոց, զի զհետ գործոց բարեաց եղիջիք ընթանալ, զի այլքն ևս յորդորեսցին 'ի նոյն. քանզի այսու գտանեն զկեանս իւրեանց առաջի Աստուծոյ։

1 Յօրինակին որ։
2 Դուկ. թ. 62։

Բայց զգիրս զոր ընթեռնուցուք յեկեղեցւոջ Ժողովրդեան առաջի. զԱրարածս և զՄարգարէս և զԱւետարան, և զթուղթս Պաւղոսի՝ զոր ետ բերել Սիմոնի Պետրոս 'ի Հռովմ քաղաքէ, և զԳործս Առաքելոցն՝ զոր ետ մեզ բերել Յովհաննէս որդին Զեբեդեայ Եփեսոս քաղաքէ [1]։ Զսոյն իսկ զայս գիրս ընթերցջիք յեկեղեցւոջ Քրիստոսի. և այլ աւելի քան զսոսա մի ընթեռնուցուք. քանզի չիք այլ ինչ յորում գրեալ է զՀնմարտութիւն, բայց 'ի գիրս զոր ընկալարուք հաւատովք՝ յոր կոչեցարուք։ Եւ Տէրս մեր Աբգար թագաւորս և պատուական նախասրարք իւր որք լուան զոր ինչ խօսեցայ ես այսօր առաջի ձեր, բաւական էն լինել ինձ վկայք 'ի կեանս իմ և 'ի մահուան. զի զվարդապետութիւն Տեառն քարոզեցի առաջի ամենեցուն յայտնապէս և պատրաստեալ եմ և այլոց ևս քարոզել. և աւելի քան զբանն Տեառն ոչ ինչ ստացայ յաշխարհիս յայսմիկ. քանզի բանն նորա եղև ինձ բաւական, որով մեծացայ ես և մեծացուցի զբազումս. զի նա եղեցի ինձ ուղեկից 'ի Ճանապարհս՝ յոր երթամ 'ի քարոզութիւն Հնմարտութեան աւետարանին, և 'ի վարդապետութիւն հեթանոսաց առաջի Քրիստոսի, որ առաքեացն զիս գնալ 'ի սմա վասն փրկութեան հեթանոսաց և հաստատութեան եկեղեցւոյ։

* [2] Բայց զայս գիտէք դուք զի ասացի ձեզ յառաջագոյն, թէ ոգիք ամենայն մարդկան որ ելանեն 'ի

1 Այս բանք, որպէս վերագոյնդ յիշեցաք 'ի Ծանօթ. ցուցանեն յետ մահուան Աբգարու և Թադէի գրեալք կամ եկամուտք. զի առ նոքօք և ոչ մի 'ի նորոց կտակարանաց չև ևս էր գրեալ. բայց ըստ աւանդութեան Ասորւոց նոյն ինքն Աբգար զհին կտակարանս տուեալ էր թարգմանել Թադէի կամ աշակերտաց նորա յասորի բարբառ։ Եւ զի աստ 'ի նոր կտակէն ոչ յիշին թուղթքն կաթուղիկեայք և Յայտնութիւնն Յովհաննու, նաև ոչ յանուանէ ամենայն թուղթք Պօղոսի և աւետարանքն, մարթ է կարծել զյօրինուած բանիս 'ի միջոցի անդ ժամանակին՝ յորում չև ևս էին նոքա գրեալք, այլ աւետարանքն երեքին, Գործքն, և ոմանք 'ի թղթոց Պօղոսի. թերևս և ընդ Վարդապետութեան առաքելոցն Թադէի խառնեալ իցէ և վարդապետութիւն Ադդէի, և սորին ևս յաջորդի, որ՝ որպէս վերագոյն ուրեմն Ծանուցաք (էջ 6. Ծան. 2) նոյնպէս Թադէոս, մանաւանդ թէ սա միայն Թադէոս կոչիւր յոմանց Ասորւոց։

2 Այս հատուած բանի ընդ մէջ երկուց աստեղանշանիցդ՝ յայտնապէս իսկ անյարիր և անպատշաճ է կարգի բանիցն, եկամուտ և աղանդաւոր, զի զկայանադրաց իմաստս ընծայէ։ Հաւաստի և այնու

մարմնոյ աստի՝ ոչ մեռանին, այլ կան մնան կենդանի, և ենոցա օթեվանք և բնակութիւնք 'ի հանգստեանն. զի ոչ խափանին միտք և ուշ ոգւոցն, վասն զի նկարագիր անմահին Աստուծոյ նկարեալ է 'ի նմա. զի ոչ եթէ իբրև զմարմինն է նա անզգայ՝ որ ոչ իմանայ, յապականութիւն տգեղութեան որ զնովաւ անկանի. բայց զվարձ հատուցման ոչ կարէ ընդունել առանց նորա. զի ոչ եթէ հոգւոյն միայն է վաստակն, այլ և մարմնոյն յորում բնակեալն էր։ Բայց ապստամբողքն ոչք ոչ ճանաչեն զԱստուած, զղջանան անդ յանօգուտ. բայց դուք որ քրիստոնեայքդ էք, և անուն նորա փառաւորեալ է և թագաւորեալ է 'ի վերայ ձեր, ինքն ուղղէ զձեզ 'ի ճանապարհս ճշմարտութեան, երթալ ձեզ ընդ նա, և ժամանել և հասանել խոստացելոց բարեաց նորա, որ պահի այնոցիկ որ ոչ խոտորին 'ի պատուիրանաց նորա, այլ կան և մնան 'ի կողմանն յոր կոչեցան 'ի Տեառնէ։ *

Եւ զայս բանս ասացեալ նորա, լռեալ դադարեաց Ադէ առաքեալ 'ի խօսելոյ։ Տուեալ պատասխանի Ադէի կերպասագործի թագաւորին և Փլոտայ և Աբշղամայ հանդերձ այլովք ընկերօք իւրեանց, և ասեն ցԱդէ առաքեալ. Վկայ է Քրիստոս որ առաքեաց զքեզ առ մեզ, և ուսուցեր մեզ զհաւատս ճշմարտութեան, և ստացաք զկեանս ստուգութեան. զի որպէս լուաքն 'ի քէն և ընկալաք 'ի ժամանակս ամենայն զոր եղեր դուառ մեզ, սոյնպէս կամք և մնամք զամենայն աւուրս կենաց մերոց. և յերկրպագութենէ կռոցն արարելոցն և հաստատելոց՝ որոց երկիր պագանէին հարքն մեր, հրաժարեմք և ուրանամք [1]. և ընդ Հրեայս խաչահանուն ոչ հաղորդիմք. և զժառանգութիւնս զոր ընկալաք 'ի քէն՝ ոչ թողումք. այլ սովիմք եւ լանեմք յաշխարհէս յայսմանէ. և յաւուրն Տեառն առաջի բեմին արդար դատաւորին, անդ դարձուցուք [2] քեզ զժառանգութիւնս զայս, որպէս ասացեր մեզ։

զի գտանի և ուրոյն գրեալ բանս այս 'ի կանոնագիրս կամ 'ի Ճառընտիրս ուրեք, նա և յասորի գիրս այսպէս ուրոյն գտեալ և թարգմանեալ է ինոյն և Գիւրբդոն, յէջ 108 իւրոց գրոց։

1 Ասի ցվախճան գտանի և յասորի ընագրին։

2 Գիւրբդոն թարգմանէ, «անդ դարձուցէ նա մեզ զժառանգութիւնս զայս, որպէս ասացեր մեզ»։

Իբրև ասացան բանքս այսոքիկ, յարուցեալ Աբգար թագաւոր ինքն և գլխաւորքն և ամենայն նախարարքք թագաւորութեան իւրոյ, և չոգաւ յապարանս իւր. և տրտմեալ էին ամենեքին յաղագս մեկնելոյ նորա և գնալոյ 'ի նոցանէ [1]: Եւ ետ տանել նմա Աբգար կաբասի բազում [2]. և տեսեալ զայն Ադէի, յղեաց առ Աբգար և ասէ. Թէ ոչ 'ի գալստեանն իմում [3] առ քեզ առի ինչ 'ի քէն, և ոչ առնեմ յիս սուտ զպատուէրն Քրիստոսի՝ որ ասացն ցմեզ, Թէ մի՛ առնուցուք ինչ յումեքէ, և մի՛ ստանայցէք ինչ յաշխարհիս յայսմիկ [4]:

Եւ յետ այլ ևս երից աւուրց յորժամ խօսեցաւ զայս ամենայն Ադէ առաքեալ, և լուաւ նա և ընկալաւ զվկայութիւն վարդապետութեան և քարոզութեան իւրոյ առաջի ամենայն նախարարաց և իշխանաց թագաւորին՝ [5] համբարձեալ զձեռս 'ի վեր, եկաց յաղօթս և օրհնեաց զնոսա: Եւ եղեալ գնաց ընդ Արևելս. և յղարկեցին զնա ամենայն բազմութիւն մարդկանն: Եւ էր օրն հինգշաբաթի, որ օր. չորեքտասան էր մարերի ամսոյ [6]: Եւ սուգ մեծ և տրտմութիւն յոյժ եղև ամենայն քաղաքին վասն մեկնելոյ նորա 'ի նոցանէ [7]. և ոչ եթէ քրիստոնէայքն միայն լային, այլ և հեթանոսքն և Հրեայքն որ էին 'ի քաղաքին:

1 Ըստ վերագոյն նշանակիս՝ ասորին ասէ վասն գի մեռանելոյ էր:

2 Ասորին, ապնիա կարասի կամ հանդերձյանս, գի նոգիմբ Ռաղէոցի:

3 Ասորին. 'ի կեանս իմ, Ես ոչ այժմ 'ի մահուանս իմոմ:

4 Ոչ սովին բանից կարգաւ, այլ ըստ այսմ մտաց ասացեալ է Քրիստոսի յառաքելն զաշակերտսն 'ի քարոզութիւն:

5 Յետ այսորիկ ասէ ասորին. հրաժարեաց յաշխարհէ ասպի, այսինքն է մեռաւ. Ես էր օրն հինգշաբաթի, Ես ԺԴ իսր ամսոյ:

6 Ըստ եկեղեցական և քաղաքական պատմութեան Հայոց, զոր ստոյգ համարիմք, Թադէոս առաքեալ մեկնեցաւ յԵդեսիոյ երթալ 'ի Հայս յ'36 ամի հասարակ Թուականութեան փրկչին. և յայնմ ամի ըստ շարժական տումարիս մերոյ ԺԴն մարերի ամսոյ իսկ հանդիպի արդարև յօր հինգշաբաթու, ըստ լատին ամսոյ 'ի 28 օգոստոսի տարւոյն. սակայն և ասա, որպէս և այլուր վերագոյն (էջ 2) ամիսքդ Հայոց և Ասորւոց զուգեալ են ընդ Հռովմայեցւոցն, և 14 մարերի և իսր ամսոյ է 14 ապրիլի, որ արդարև յօր հինգշաբաթի հանդիպի յայնմ ամի: Էին վկայաբանութիւն առաքելոյն Թադէի՝ ասէ նահատակեալ զնա 'ի 23 դեկտեմբերի, յորում աւուր և Յայսմաւուրքս ասեն:

7 Յերեսին ևս տեղիս ասորին ոչ զմեկնելն յիշէ և ոչ զմեռանելն, այլ վասն նորա ասէ:

Սայլ Աբգար Թագաւոր առաւել քան զամենայն ոք տրտմեալ էր վասն գնալոյն նորա. նա և ամենայն պետք Թագաւորութեան նորա էին 'ի տրտմութեան մեծի. և անարգեաց և եթող զպատիւ Թագաւորութեան իւրոյ, և ոչ եկեր և ոչ արբ յաւուր յայնմիկ։ Եւ լալով մեծաւ և արտասուօք յուղարկեաց [1] զնա հանդերձ ամենայն եկեղեցեաւն։ Եւ ամենայն բնակչաց քաղաքին տեսեալ զնա՝ զարմացեալ էին, թէ որքան վշտացեալ էր վասն նորա. զոր օրինակ յուղարկէ ոք զմեռեալ. և բազում պատուով և մեծարանօք և տրտմութեամբ յուղարկեցին զնա։ Եւ նա ել գնաց ընդ արևելս քարոզել զաւետարանն Քրիստոսի։

Բայց Ադէ որ աշակերտեցաւ նմա՝ եղև առաջնորդ և հրամանատար և ժառանգաւոր աթոռոյն Ադէի առաքելոյն, 'ի ձեռնադրութիւն քահանայութեան, զոր ընկալաւ նա 'ի նմանէ առաջի ամենայն ուրուք [2]։ Եւ հնազանդեցան ամենայն Միջագետք և ամենայն կողմանք արևելից ընդ ձեռամբ Ադէի, ըստ վարդապետութեան զոր ընկալաւ յԱդէէ առաքելոյ [3]։ Քանզի

1 Զայս տող Թողու ասորին, և զյետագայն փոխէ, «Բազում պատուով և շքով մեծաւ յուղարկաւորութիւն արար և Թաղեաց զնա, որպէս Թաղեցի մի ոք յիշխանաց. և եդ զնա 'ի շիրմի քանդակելոյ մատամբք, յորում եդեալ լինէին նախորդքն Աբգարու Թագաւորի՝ որք 'ի զարմէն Արիու. անդ հանդոյց զնա կարեկցաբար, բազում սգով և ցաւով։ Եւ ամենայն բազմութիւն եկեղեցւոյն ելանէր անդր ըստ ժամանակս ժամանակս և մատուցանէր աղօթս մտադիւր. և կատարէին ամ յամէ զոր յիշատակի մահուան նորա, որպէս պատուիրեաց և կարգեաց նոցա առնել ինքն իսկ առաքեալն Ադէ, և որպէս հրամայեացն Ագգէոս», որ եղև առաջնորդ և հրամանատար. և այլն։

2 Դարձեալ օտարանայ ասորին, և ասէ. «Եւ ինքն ձեռնադրութեամբն զոր ընկալաւ 'ի նմանէ՝ կացոյց երիցունս և առաջնորդս ընդ ամենայն երկիրս այս Միջագետաց։ Եւ նոքա որպէս զառաքելոյն Ադէի՝ պահէին անվրէպ զբանս նորա, և լսէին և ընդունէին որպէս բարի և հաւատարիմ ժառանգաւորք առաքելոյ փառաւորելոյն Քրիստոսի։ Եւ արծաթ և ոսկի յումեքէ ոչ առնոյր» և այլն։

3 Ի կանոնագիրս՝ յանուանեալ Ա Առաքելական կանոնս այսպէս աւանդի ձեռնադրութիւն ազգաց. «Ընկալաւ ձեռնադրութիւն քահանայութեան յառաքելոյն՝ Ուռհա և ամենայն քաղաքք որ շուրջ » զնովաւ. Մծբին և Արաբիա՝ սահմանակիցք Միջագետաց, Հայք Ա) » և ամենայն հիւսիսի և հարաւ, 'ի Թադէոսէ առաքելոյ Բ), որ է մի » յերկոտասան առաքելոցն. զնեաց անդ եկեղեցիս, և աշակերտեաց » զամենայն կողմանս զայնոսիկ. կարգեաց 'ի նոսա քահանայս և պաշ- » տօնեայս։

» Ընկալաւ ձեռնադրութիւն քահանայութեան յառաքելոյն

յայնմ ժամանակի մայր քաղաքաց եղև Ուռհայ ամենայն աշխարհին կողմանցն արևելից. վասն զի 'ի նա նախ քարոզեցաւ աւետարանն Քրիստոսի, և անդ յառաջ շինեցաւ եկեղեցի. և անտի ընդունէին զձեռնադրութիւն եպիսկոպոսութեան ամենայն արևելք. և հնազանդէին՝ որպէս և հնազանդէին Սդէի առաքելոյ. և լսէին նմա հնազանդութեամբ և ընդունէին զբան նորա ախորժելով։ Եւ լինէին հաւատարիմ և բարիոք ժառանգաւորք վարդապետութեան առաքելոյն Քրիստոսի։ Եւ ոսկի յումեքէ ոչ առնոյր, և ընծայք մեծատանց առ նա ոչ մտանէին. այլ փոխանակ ոսկւոյ և արծաթոյ՝ հաւատացելովք և սրբովք մեծացուցանէր զեկեղեցին Քրիստոսի։ Այլ գլուխք[1] ամենայն արանց և կանանց շքեղք և սգաստք, սուրբք և պարկեշտք էին. և մենացեալ բնակէին ցնծութեամբ առանց աղտոյց, և արթունք և զուարթունք և շքեղք 'ի պաշտաման, և հոգեբարձուք առ աղքատս, և տեսողք հիւանդաց։ Եւ գնացք նոցա էին վայելչութեամբ առաջի Տեառն և մարդկան. զի վարք նոցա գովութեամբ զարդարեալ էին յարտաքնոց. մինչև քուրմք անդամ Նաբուայ և Բէլայ, պատուէին և մեծարէին զնոսա յամենայն ժամ։ Պատուականք էին տեսլեամբք և համարձակք բանիւք և Ճշմարիտ խօսիւք և աղատք

» Պարսք և Պարթևք, ամենայն Ասորեստան և Խուժաստան, և ամենայն որ շուրջ զԲաբելոնիս, մինչև 'ի սահմանս Գդաց, մինչև ցԳովգ » և ցՄագովգն, և այլ աշխարհք որ շուրջ զկողմամբք զայնոքիւկ, » յԱդդէէ կերպասագործէ՝ յաշակերտէ Թադէոսի առաքելոյ Գ), որ » բժշկեաց զԱբգար Թագաւոր Ուրհայի »։

Ա) Այլ օր. « Եւ սահմանակալք Միջագետաց Հայք... հարաւ և որ շուրջ զնովաւ »։

Բ) Այլ օր. « յԱդդէ առաքելոյ որ մի է յ'եօթանասուն և երկուցն »։

Գ) Օր. մի. « Պարսք և Մարք և Պարթևք և ամենայն Խուժաստան, և ամենայն որ շուրջ զնովաւ, և Բաբելոնիս և գիւղք, մինչև 'ի սահմանս Հնդկաց, և մինչև ցԳովգ և Մագովգ. և այլ աշխարհն՝ որ շուրջ զկողմամբքն, և ամենայն Ասորեստան, 'ի սուրբ առաքելոցս յայս՝ 'ի Բարթողոմէոսէ և Յուդայէ և յԱդդէէ »։

1 Անդլիացին դնէ the whole state, ամենայն վիճակ, և 'ի ծանօթութեան համարի վասն ուխտի եկեղեցւոյն ասացեալ։ Եւ յետ այսր գովասանական բանքն սուղ ինչ զանազանին 'ի հայումն, և յերկոսին ևս տուչութիւնս երևի ձեռն օտար, յետ ժամանակի գրեալ, յորում թերևս ոպրդեալ էր թուղութեան 'ի վարս հաւատացելոց։

բարոյիւք. և ընդ լծով ագահութեան ոչ հնազան-
դին, և ընդ մեղադրութեամբ ոչ անկանէին. և ընդ
երկիւղիւ ոչ փակէին. և ամենայն ոք որ տեսանէր զնո-
սա՝ ընթանայր ընդ առաջ նոցա՝ զի հարցանիցէ զող-
ջունէ նոցա, սիրով սրբապէս. քանզի և տեսիլն նոցա
խաղաղութիւն սփռէր 'ի վերայ տեսողաց. և իբրև
զուռկան տարածեալ էին բանք ողջունի իւրեանց 'ի
վերայ ապստամբողաց։ Եւ իբրև մնանէին 'ի գաւիթս
սրբութեան և ՀՀմարտութեան, զի ոչ ոք էր որ տե-
սանէր զնոսա և խորշէր և գարշէր 'ի նոցանէ. քանզի
ոչ ինչ անարժան և անպատեհ գործս գործէին. և
վասն այսորիկ զուարթերեսք էին 'ի քարոզութիւն
վարդապետութեան իւրեանց առ ամենայն ոք. զի զոր
ինչ ասէին և ուսուցանէին և խրատէին զայլս՝ ինքեանք
գործովք ցուցանէին յանձինս իւրեանց։ Եւ լսողքն
յորժամ տեսանէին թէ ըստ խօսիցս իւրեանց գործք
իւրեանց էին, և զոր բանիւքն ասէին՝ զնոյն և ար-
դեամբք կատարէն. ապա այնուհետև առանց աշխա-
տութեան և առանց իրիք պատճառանաց աշակեր-
տէին նոցա մեծապէս հնազանդութեամբ, խոստո-
վանելով 'ի Քրիստոս, և փառաւորէին զԱստուած և
գոհանային ցնծութեամբ, որ դարձոյց զնոսա 'ի մնոտի
մոլորութենէ 'ի լուսաւորութիւն աւետարանին։

Եւ յետ ամաց ինչ մեռաւ Աբգար թագաւոր [1], և
եկաց 'ի թագաւորութեան մի յորդւոց իւրոց, այր
չար և ապստամբող, լի ամենայն անօրէնութեամբ, որ
ատէր զխաղաղութիւն և ոչ ընդունէր զվարդապետու-
թիւն քարոզութեան աւետարանին։ Յղեաց առ Ադէ
եպիսկոպոս [2] մինչդեռ նստէր յեկեղեցւոջ և խօսէր

1 Ըստ պատմութեան ազգիս ոչ յետ ամաց՝ այլ յետ ամսոց ինչ հանդիպի մահ Աբգարու, մինչ չև ընկալեալ զպատասխանի երկրորդ թղթոյն առ Տիբեր. և զի կայսրս մեռաւ 'ի 16 մարտի 37 թուին Քրիստոսի, և Թադէի մեկնեալ էր յԵդեսիոյ յապրիլի նախընթաց ամին, Աբգարու մահ 'ի Ճահ գայ յելս ամին 36։ Այսմ վկայեն ամենայն ժամանակագիրք մեր, և 38 ամ ասեն զժամանակս թագաւորութեան նորա, սկսեալ յերկրորդ ամէ յառաջ քան զթուական Քրիստի։ Եւ դեսացւոց ժամանակագրութիւնն ևս 37 ամ և ամիս մի ասէ զթագաւորութիւն նորա, այլ զսկիզբն անագանէ, որով և զմահն համարի լեալ 'ի 45 թուի Քրիստի։

2 Յաստրին չիք եպիսկոպոս կոչումն։ Իսկ զպատմութիւնս գրեաթէ բառ առ բառ դաղափարէ Խորենացի (Բ, 19)։ Կեդրենոս և Պոր-

զպատգամն գրոց սրբոց յականջս Ժողովրդեանն, և ասէ. Արա՛ ինձ խոյրս ոսկեղէնս զոր օրինակ առնէիր յառաջ հօր իմոյ։ Եւ ոչ առ յանձն Ադէ, առաքեաց անդրէն և ասէ. Ոչ թողում ես զպաշտօնս Քրիստոսի՝ որ աւանդեցաւ ինձ յաշակերտէն յԱդեէ առաքելոյ, և առնեմ խոյրս անիրաւութեան։ Եւ իբրև ետես նա՝ եթէ ոչ հաւանի նա կատարել զկամն նորա, յղեաց և խորտակեաց զարուեստս նորա մինչդեռ նստէր յեկեղեցւոջ և թարգմանէր 'ի մէջ Ժողովրդեանն։ Եւ 'ի մեռանելն իւրում երդմնեցոյց զՓլոտ և զԱբշղամայ, եթէ աստէն իսկ 'ի տանս յայսմիկ ուր մեռանիցի վասն Հնմարտութեանն սորա, դիք զիս և աստէն թաղեցէք։ Եւ որպէս երդմնեցոյց զՓլոտ և զԱբշղամայ, նոյնպէս արարին. թաղեցին զնա անդէն 'ի ներքոյ քան զմիջի դուռն եկեղեցւոյն՝ 'ի միջի ընդ արս և ընդ կանայս։ Եւ եղև սուգ մեծ և դառն յեկեղեցւոջն և յամենայն քաղաքն վասն իրացն եղելոցն. որպէս եղև սուգ և տրտմութիւն յորժամ վախճանեցաւ բարիոք վկայութեամբ Ադէ առաքեալ[1] վարդապետն նորա 'ի ձեռաց ամպարշտաց, 'ի կողմանս Արևելից։

Եւ քանզի իբրև խորտակեցին զոտս նորա՝ վաղվաղակի մեռաւ փութապէս, և ոչ ժամանեաց ձեռնադրել զՓլոտ[2], ապա դնացեալ Փլոտ յԱնտիոք և ին-

փիւրոժէն՝ համարին և զորդին Աբգարու հօրն նման քաջահաւատ, և զթոռնն անհաւատ և հալածիչ քրիստոնէից. որ զանուն ևեթ հաւուն ունէր Աբգար, և ըստ Եղեսացւոց ժամանակագրութեան թագաւորեաց 'ի 65 ամէ փրկչին ց'86. յորում միջոցի պատշաճի նահատակութիւնն Ադէի, ըստ սոցա. որում 'ի դէպ գալ ասէ Գիւրբդոն և զյիշատակարան ամենահին աւետարանի գրելոյ ձեռամբ նորին իսկ Ադդէի յամի Տեառն 78, որպէս յիշէ Ասսեմանի (յԱրևելս. Մատենագ. Բ, 486)։ Բայց ըստ մերոց պատմչաց ոչ յետ բազում ինչ ամաց մահուան Աբգարու եղեալ է նահատակութիւն Ադդէի։ Եւ զի Ադդէոս կոչէն զսա Ասորիք՝ յիշել արժան է զի 'ի վկայաբանութիւնս Թադէի առաքելոյ, 'ի դպրութեան մերում՝ յիշատակի Զաքարիա ոմն աշակերտ նորա, ձեռնադրեալ եպիսկոպոսութիւն 'ի Մեծ Հայս։

1 Ցայս վայր Ասորին, և ոչ յաւելու զվերջին տողդ որ վասն նահատակութեան առաքելոյն յարևելս, ըստ մերոյս պատմութեան։

2 Բազում անգամ յիշատակեալդ և յաջորդ Ադդէի Փլոտ անշուշտ չփոթի ընդ երկրորդի ուրումն, որ թերևս գիւանապետն Եղեսիոյ էր Բուլիքոս անուամբ յիշեալ յԵղեսացւոց ժամանակագրէն, յամի Տեառն 207. և ասի ընդ գործակցի իւրում Բարդէնոսի պահեալ 'ի գիւանս քաղաքին զգործս և զհրովարտակս Աբգարու թագաւորի ժա-

կալեալ անդ զձեռնադրութիւն քահանայութեան 'ի Սրապիոնէ եպիսկոպոսէ յԱնտիոք քաղաքէ[1], որ և ինքն իսկ Սրապիոնն ընկալաւ զձեռնադրութիւն 'ի Զեփիրինոսէ եպիսկոպոսէ 'ի Հռովմ քաղաքէ, որոյ ընկալեալ զքահանայութիւնն 'ի Սիմոնէ Վիմէ, որ ընկալաւ 'ի Տեառնէ. և եղև եպիսկոպոս 'ի Հռովմ քաղաքի. ամն ԻԵ[2], յաւուրս Տիբերիոսի կայսերի. որոյ

մանակին, զոր գրեցին նոտարքն Մար Իսաքոս Բար-Սեմեայ (Մար Իշաք որդի Շամէեայ?), և Կայումաս Բար-Մագարտաա (որդի Մեհրդատայ): — Ասսեմ. Մատեն. Արևել. Ս. 393. — Գիւրդոն 143:

1 Սերապիոնն եպիսկոպոս Անտիոքայ վախճանեալ է յ'211 ամի Քրիստոսի, Զեփիրինոս պապ յամի 218. յայտ ուրեմն է զի բազում բանք և կարգ յաջորդաց Ագդէի և Փլոտայ 'ի բաց անկեալ են ասատնօր՝ մինչև 'ի սկիզբն անդր Գ դարու. յորում Ժամանակի Թուի ինձ ձեռն արկեալ ասորւոյ ուրուք և իւիք իւիք այլայլութեամբք գաղափարեալ զգրուածս Լաբուբնեայ, և զայլոց գիւանագրաց. և յորում զուգակենցաղք դատին Սերապիոնն, Զեփիրինոս և դիւանապետն Բուլիդուոս, յիշեալդ 'ի նախընթաց ծանօթութեան: — Աներկբայ կացուցանէ զայս և վերջաբան վկայաբանութեան Բարսեմեայ եպիսկոպոսի հրատարակեալ 'ի Գիւրդոնէ (71), յորում ըստ սմին օրինակի ասէ զՓլոտ ձեռնադրեալ 'ի Սերապիոնէ, և զնա 'ի Զեփիրինոսէ, իսկ զսա ոչ անընդմէջ 'ի Սիմոնէ Վիմէ՝ այլ 'ի Վիկտորէ, և զսա յԵլեթերիոսէ, և այսպէս մի ըստ միոջէ Թուեալ զքահանայապետս Հռովմայ հանէ 'ի Պետրոս: Թէպէտ և յառաջ քան զՓլոտայ ձեռնադրութեանն յիշատակ՝ տգիտաբար խառնակութեամբ ասէ, «Այս Բարշամիա եպիսկոպոս Եգեսիոյ որ գարձոյց ('ի Քրիստոս) զՇարբելա քրմապետ քաղաքին՝ եկաց յաւուրս Փաբիանոսի եպիսկոպոսի Հռովմայ. և ընկալաւ Բարսեմի զձեռնադրութիւն քահանայութեան յԱբշղամայ, որ եղև եպիսկոպոս Եգեսիոյ, և Աբշղամա ընկալաւ զձեռնադրութիւն 'ի Փլոտայ առաջնոյ»: Հաւատի ուրեմն կարգ առաջնորդաց եկեղեցւոյն Եգեսիոյ այսպէս. Թադէոս առաքեալ, Ագդէ խոյրարարն, Փլոտ կամ Պալուտ Ա., Աբշղամա, Բարսեմի, որ խոստովանեցաւ զՔրիստոս տանջանօք 'ի Լուսիոսէ դատաւորէ յամի Տեառն 106: Իսկ Փաբիանոս պապ Հռովմայ եկաց 130 ամաւք զկնի. Թուի թէ այլ ոմն Բարսեմի եպիսկոպոս էր յայնժամ Եգեսիոյ, որպէս և Պալուտ կամ Փլոտ Բ առ Զեփիրինոսիւ նախորդաւ նորին. զորս շփոթէ ընդ իրար ասորի հաւաքող բանիցս, որպէս և յամենայն իսկ վկայաբանութեանց կատարածս՝ խառնակէ զժամանակագրութիւնն յիշատակաւ իրաց և անձանց տարակայելոց բազում ամաց խարոցաւ, զորս զուգէ միահամուռ:

2 Արդարև ամն 25 եկաց Պետրոս առաքեալ 'ի Հռովմ, բայց ոչ յաւուրս Տիբերի, այլ յետ եօթն ամաց մահուան նորա եկն 'ի կայսերական քաղաքն, ըստ հաստատակեալ աւանդութեան ուղղափառաց: Բայց եթէ 'ի սկզբանէ անտի դլխաւորութեան եկեղեցւոյ կամիցի ոք հաշուել զամսն, յայնժամ աներկբայ յաւուրս Տիբերի լինի կացեալ քահանայապետս, և 25 ամ նորա զուգի 58 կամ 59 ամին Քրիստոսի, յորում թերևս բովանդակէր Լաբուբնիա զղատմութիւնս զայս:

թագաւորեալ անդ ամն երեքտասան[1]։

Որպէս էն աւուրք[2] թագաւորացն և թագաւորութեանն Աբգարու թագաւորի և ամենայն թագաւորաց. զի զամենայն ինչ զոր հրամայէն թագաւորք, և զամենայն ինչ որ միանգամ լինի[3] առաջի նոցա, գրի և դնի 'ի տունս յիշատակաց. այնպէս և յՈւռհայ քաղաքի Ղբրուբնեա՝ որդի Սնակայ, որդւոյ Աբգաշարայ[4] դպրի թագաւորին, գրեաց զամենայն ինչ զոր միանգամ իրք եղեն Ադէի առաքելոյ, իսկզբանէ մինչև ցկատարած. միաբանութեամբ ձեռն արկանելով եւ Սնանայ[5] հաւատարիմ[6] թագաւորին. և եդին 'ի տան յիշատակաց քարտիսից. ուր դնին մատեանք և օրէնք արքունականք. և որք գնեն և վաճառեն և գրին 'ի միջի նոցա մուրհակք հաստատութեան, անդ պահին հաստատութեամբ առանց արհամարհանաց։

Կատարեցաւ Թուղթ Աբգարու թագաւորի և Վարդապետութիւն Ադէի առաքելոյ, 'ի փառս Աստուծոյ[7]։

1 Տիբերիոս թագաւորեաց ընդ բնաւ 23 ամ. բայց ստուգիւ 13 ամ միայն նստաւ 'ի Հռովմ, և 11 'ի Կաբրէա։ Յասորին պակասէ անուն Տիբերիոսայ, վասն որոյ Գիւրըդոն յընդվայր կարծիս լինի 'ի Կլաւդիոս ակնարկել։

2 Սոնրոնիան, ըստ Թարգմանութեան անգղիացւոյն, որ գիւրիմաց ևս է։

3 Խօսէալ լինի, ըստ ասորւոյն։

4 Որպէս և 'ի յառաջաբանիս ծանուցաք Խորենացի 'ի պատմութեանն ասէ Ղէրոբնա որդի Աբգաշարայ, իսկ աստ հայր նորա կոչի Անակ ըստ հայումն և Սենակ ըստ Ասորւոյն, որ հաւանագոյն է. զի անուանգայդ յիշատակի 'և այլուր յառաջագոյն. իսկ Աբգաշարդ որ աստ Աբգաշարագ ասի և հաւ փոխանակ հօր՝ յասորին գրի Էպէպշարդայի։ Յանուանս ասորիս 'ի մեր կամ յայլ լեզուս՝ բազում անգամ Ն և Ր տառք փոխադարձին. որպէս Սանասան և Սարասար որդի Սենեքերիմայ, և այլք. որով Սենակ և Շարագ՝ ըստ լծորդութեան ձայնաւոր տառիցն և Ս և Շ նոյն անուն լինի, և Աբգաշարագն ոչ այլ ինչ նշանակէ՝ բայց որդի Շարագայ կամ Սենակայ). և ըստ այսմ արդարանալ Թուի Խորենացի Աբգաշարագայ որդի ասելով (զոր Աբգաշար գրէ) զդպիրն։

5 Յօրինակին Անա. Ասորին ունի Հանան հաղագային հնչմամբ։

6 Այսպէս Թարգմանի ըստէր ասորի բնագրին, որ նշանակէ և զատենադպիրս, որպէս այլուր յիշեցաք։

7 Ասորին այսպէս ունի զվերջաբանս. «Կատարեցաւ վարդապետութիւն Ադէի առաքելոյ, զոր քարոզեացն յԵդեսիա 'ի հաւատացեալ քաղաքին Աբգարու հաւատացեալ թագաւորի»։ Խորենացի վկայէ, որպէս ծանուցաւ 'ի յառաջաբանիդ, ոչ միայն զգործս Աբգարու այլ և զամենայն եղեալսն առ որդւով նորա և զարարս Սանատրկոյ՝ դրեալ Լաբուբնեայ և եղեալ 'ի դիւանս Եդեսիոյ։

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Ա.

Պատմութիւն վասն թագաւորին Ոչինայի.

Պատմութիւն որ եղև վասն Թադէոսի ըստ այնմ օրինակի էր։ Ի ժամանակի մինչդեռ քարոզէր առաւածպաշտութիւն փրկչին մերոյ և տեառն Յիսուսի Քրիստոսի առ ամենայն մարդիկ, վասն աքանչելի զօրութեանցն զոր գործեաց նա. բայց բիւրք և հազարք յաշխարհաց անտի որ հեռի էին յերկրէ անտէ Հրէաստանի, որ ունէին զաղգի ազգի ցաւս հիւանդութեան ախտից, վասն յուսոյ բժշկութեան գային առ նա, և Աբգար արքայ հեթանոսաց որ յարևելից կողմանէ Եփրատու՝ անուանէր քաջութեամբ, ապականեցաւ մարմին նորա չարաչար ցաւովք՝ որ 'ի մարդկանէ չէր նորա բժշկութիւն։ Եւ իբրև լուաւ և ուսաւ զանունն Յիսուսի, և վասն զօրութեանցն զոր գործէր նա, և առհասարակ ամենայն մարդ վկայէր վասն նորա. ետ տանել առ նմա թուղթ աղօթից 'ի ձեռն ծառայից իւրոց, և աղաչէր գալ և բժշկել զնա 'ի հիւանդութենէ իւրմէ։ Իսկ Փրկիչն մեր յայնմ ժամանակի յորում կոչեաց զնա, ոչ էառ յանձն գնալ, բայց թղթոյ արժանի արար զնա. և խոստացաւ առաքել զմի ոք յաշակերտաց իւրոց բժշկել զհիւանդութիւն նորա, և տալ նմա կեանս և ամենայն մերձակայից նորա. այլ ոչ յամեաց կատարել զխոստումն իւր։ Բայց իբրև յա-

լեաւ 'ի մեռելոց, և վերացաւ ընդ երկինս, Թովմաս առաքեալ մի յերկոտասանից անտի՝ զԹադէոս՝ այն որ 'ի համարոյ եօթանասուն աշակերտացն Քրիստոսի էր, իբրև 'ի զօրութենէ Աստուծոյ առաքեաց զնա ՅՈՒՐՀայ լինել քարոզ և աւետարանիչ Քրիստոսի վարդապետութեան։ Եւ խոստումն Քրիստոսի 'ի ձեռն նորա լցեալ կատարեցաւ։ Ունիս դու քեզ գրով վկայութիւն սոցա, որ առեալ լինին 'ի մատենէ անտի յիշատակաց որ են ՅՈՒՐՀա քաղաքի. զի յոյնմ ժամանակի ցոյն վայր կայր աբգայութիւն նորա անդ 'ի քարտէսս որ կային անդ. զի էր գրեալ 'ի նոսա ամենայն ինչ որ միանգամ գործեցաւ յառաջնոց անտի մինչև ցԱբգար. նա և սոքա մինչև ցայսօր ժամանակի պահեալ գտանին անդ։ Բայց չէք ինչ արգել ասել զնոյն թուղթս զոր առեալ է մեր 'ի տանէ անտի դիւանին. որ ունին օրինակ զայսր բանից որ մեկնեալ են յասորոց լեզուէ 'ի յոյն անդր։

Պատճէն հրովարտակին որ գրեալ է ՅԱբգար յարքայէ առ Յիսուս, և առաքեաց նմա 'ի ձեռն Անանիայ սուրհանդակի յԵրուսաղէմ։ Եւ էր գրեալ հրովարտակն օրինակ զայս։

Աբգար Աբջարայ իշխան աշխարհի առ Յիսուս Փրկիչ և բարերար որ երևեցաւ յաշխարհի Երուսաղեմացւոց, ողջոյն։ Լուեալ է մեր վասն քո, և վասն բժշկութեանդ որ լինի 'ի ձեռս քո առանց դեղոց և արմատոց. զի որպէս ասի տաս դու կուրաց տեսանել, և կաղաց գնալ, զբորոտս սրբես և զայս պիղծս և զդևս հանես, և որ միանգամ չարչարեալ են ընդերկար հիւանդութեամբք՝ բժշկես դու, և զմեռեալս յարուցանես։ Եւ իբրև լուայ վասն քո զայս ամենայն՝ եդի 'ի մտի իմում մի յերկուց. կամ թէ դու Աստուած իցես իջեալ յերկնից և գործես զայդ, և կամ թէ որդի Աստուծոյ իցես և զայդ առնես. արդ վասն այսորիկ գրեցի ես աղաչել զքեզ զի աշխատ լիցիս և եկեսցես առ իս, և բժշկեսցես զհիւանդութիւնս զոր ունիմ ես։ Այլև լուայ զի Հրեայք տրտնջեն զքէն և կամին չարչարել զքեզ. բայց քաղաք մի փոքրիկ և գեղեցիկ է իմ, և բաւական է մեզ երկոցունցս։

Պատասխանի հրովարտակին զոր ինչ գրեցաւ յե-

ըուսաղեմն 'ի ձեռն Անանիայ սուրհանդակի առ Աբգար իշխան աշխարհի.

Երանի՛ քեզ այնմիկ որ հաւատայ յիս՝ իբրև ոչ իցէ տեսեալ զիս, զի գրեալ է վասն իմ այսպէս. զի որք տեսանիցեն զիս ոչ հաւատասցեն յիս, և որք ոչն տեսանիցեն զիս, նոքա հաւատասցեն և կեցցեն։ Իսկ վասն այսր զի գրեցեր դու առ իս գալ ինձ առ քեզ, արժան է ինձ կատարել ասա զամենայն ինչ վասն որոյ առաքեցայ ես. և իբրև կատարեցիս զայս՝ ապա վերացայց առ այն որ առաքեացն զիս։ Եւ յորժամ վերացայց առաքեցիս քեզ մի յաշակերտաց աստի իմոց, զի զցաւս քո բժշկեսցէ և կեանս տացէ քեզ, և որ միանգամ ընդ քեզ են։ Բայց ընդ նոյն թուղթ, զի սոքա ևս մերձաւոր են 'ի լեզու ասորի։ Յետ վերանալոյն Յիսուսի առաքեաց Յուդա Թովմա զԹադէոս առաքեալ մի յեօթանասնից անտի, և իբրև եկն լուծաւ նա առ Տուբիա, որդւոյ Տուբիադայ. և իբրև լու եղև վասն նորա պատմեցին Աբգարու և ասեն. Եթէ եկն առաքեալն Յիսուսի այսր որպէս և յղեաց առ քեզ։ Սկսաւ այնուհետև ինքն Թադէոս բժշկել զամենայն ցաւս և զհիւանդութիւնս զօրութեամբն Աստուծոյ, որպէս զի ամենայն մարդ զարմացեալ լինէր։ Իսկ իբրև լուաւ Աբգար զմեծամեծ սքանչելիսն զոր առնէր և բժշկէր նա. էած զմտաւ եթէ նա իցէ նա, վասն որոյ առաքեաց նա առ Յիսուս և ասէ ցնա, յորժամ վերացայց առաքեցիս առ քեզ մի յաշակերտաց իմոց, զի նա բժշկեսցէ զցաւս քո։ Եւ յղեաց կոչեաց զՏուբիա առ որում իշէաին էր նա, և ասէ ցնա. Լուայ ես եթէ այր մի զօրութեանց եկն եմուտ լուծաւ 'ի տան քում։ արդ ածցես դու զնա առ իս։ Իբրև եկն Տուբիա առ Թադէոս ասէ ցնա. Աբգար ասքայ յղեաց կոչեաց և ասէ ցիս տանել զքեզ առ նա զի բժշկեսցես դու զնա։ Եւ ինքն Թադէոս ասէ. Ես երթայց, քանզի առ նա առաքեալ եմ ես զօրութեամբ, կանխեաց այնուհետև և Տուբիա 'ի վաղիւ անդր և էառ զԹադէոս, և չոգաւ առ Աբգար։ Իսկ իբրև եկին դիպեցան զի կային անդ իշխանքն նորա։ Այն ժամայն մինչդեռ մտանէր նա, տեսիլ մեծ երևեցաւ Աբգարու յերեսն Թադէոսի առաքելոյ. և յորժամ ետես Աբգար զԹադէոս անկաւ

և երկիր եպագ նմա. և զարմացան ամենեքեան որ միանգամ կային անդ, զի նոքա ոչ տեսին զայն տեսիլ, այն որ միայն Աբգարու երևեցաւ։ Եւ նա հարցանէր զԹադէոս եթէ արդարև Ճշմարտիւ աշակերտ իցես դու Յիսուսի որդւոյ Աստուծոյ, այն որ ասացն ցիս եթէ առաքեմ առ քեզ զմի յաշակերտաց իմոց, զի նա բժըշկեսցէ զքեզ և տացէ քեզ կեանս։ Եւ Թադէոս պատասխանի ետ նմա և ասէ. Քանզի մեծապէս հաւատացեր դու այնմ որ առաքեացն զիս, վասն այսորիկ առաքեցայ ես առ քեզ. և դարձեալ եթէ հաւատասցես դու 'ի նա տացին քեզ խնդրուածք սրտի քո։ Ասէ ցնա Աբգար. զի այսպէս ասէ՝ հաւատացի 'ի նա, զի և զՀրէայսն որ 'ի խաչ հանին զնա՝ կամեցայ ես զօրս առնուլ և գալ կոտորել զնոսա, եթէ ոչ էր իմ արգելեալ վասն թագաւորութեան Հռովմայեցւոց։ Ասէ ցնա Թադէոս. Տէր մեր զկամն Հօր իւրոյ կատարեաց, և իբրև կատարեաց վերացաւ նա առ Հայր իւր։ Ասէ Աբգար և ես հաւատացի 'ի նա և 'ի Հայրն նորա։ Ասէ Թադէոս վասն այսորիկ դնեմ ես 'ի վերայ քո զձեռն իմ յանուն նորա։ Եւ իբրև արար նա զայս՝ նոյն ժամայն բժշկեցաւ նա 'ի հիւանդութենէ իւրմէ և 'ի ցաւոց անտի զոր ունէր նա։ Եւ զարմացեալ էր Աբգար զի որպէս լուեալ էր նորա վասն Յիսուսի, զնոյն օրինակ ետես արդեամբք 'ի ձեռն Թադէոսի աշակերտի նորա, զի առանց դեղոց և արմատոց բժշկեաց զնա. բայց ոչ զնա միայն, այլ և զԱբգու զորդի Աբգեայ, զի էր պոտագրոս. զի և նա եմուտ և անկաւ առ ոտս նորա։ Եւ իբրև եկաց յաղօթս 'ի վերայ նորա, բժըշկեցաւ նա։ Եւ զայլս բազումս զքաղաքացիս նոցա բըժշկեաց նա. և առնէր զսքանչելիս մեծամեծս, և քարոզէր զբանն Աստուծոյ։ Յետ այսորիկ ասէ ցնա Աբգար. Դու Թադէոս զօրութեամբ Աստուծոյ զայս առնես և մեք զարմացեալ եմք ընդ այս. այլ հանդերձ այսու ամենայնիւ աղաչեմք զքեզ, զի պատմեսցես դու վասն գալստեանն Քրիստոսի թէ որպէս եղև, և վասն զօրութեան նորա, և թէ որով զօրութեամբ զայս զոր լուայ ես՝ գործէր նա։ Ասէ ցնա Թադէոս. Այժմ լուռ լինիմ։ այլ քանզի քարոզել զբանն Աստուծոյ առաքեցայ ես, առ վաղիւ ժողովեա ինձ զամենայն մարդիկ

քաղաքի քո, և առաջի նոցա քարոզեմ և սերմանեմ 'ի նոսա զբանն կենաց. և վասն գալստեանն Յիսուսի թէ որպէս եղև, վասն առաքելութեան նորա, և վասն որոյ առաքեցաւ նա 'ի հօրէ իւրմէ, և վասն զօրութեան նորա և գործոց իւրոց, և վասն խորհրդոցն զոր խորհեցաւ նա յաշխարհի, և որով զօրութեամբ զայս գործէր նա, և վասն քարոզութեան նորա. և վասն փոքրկութեան և խոնարհութեան նորա, եթէ որպէս խոնարհեցաւ և ամփոփեաց և փոքրկացոյց զանձն իւր, և խաչեցաւ և էջ 'ի դժոխս, և քակեաց զկրՃինն որ յաւիտենից չէր քակեալ, և յարոյց զմեռեալս, և էջ միայն և վերացաւ բազում ժողովրդովք առ հայր իւր։ Հրամայեաց այնուհետև Աբգար եթէ վաղիւ ընդ առաւօտն ժողովեսցին ամենայն մարդիկ քաղաքի իւրոյ, և լուիցեն զքարոզութիւն Թադէոսի։ Եւ յետ այսորիկ հրամայեաց նա տալ նմա ոսկի և արծաթ. բայց նա ոչ էառ և ասէ. Զմերն թողաք, զայլոց զիա՞րդ առցուք։

Յամին երեք հարիւրորդի, քառասներորդի եղև այս։ Բայց զի ոչ տարապարտուց ելին սոքա ամենայն պատգամքք յասորոց անտի 'ի յոյն, այս է, 'ի ժամանակի իւրեանց եղան ասա։

Եւսեբեայ եկեղեց. Պատմ. Գիրք Ա. գլ. ԺԳ։

Երբ որպէս Տիբերիոս իբրև ուսաւ 'ի Պիղատոսէ վասն Քրիստոսի և խռովեցաւ.

Այլ 'ի ժամանակի իբրև անուանեալ լինէր և քարոզեալ լինէր բազմաց սքանչելի յարութիւն փրկչին մերոյ 'ի մեռելոց, և վերանալ նորա ընդ երկինս, ըստ առաջին սովորութեան զոր ունէին իշխանքն հեթանոսաց, զի զամենայն ինչ զոր նոր գործեսցի, եղիցին յուցանել նոքա այնմիկ՝ որ ունիցի զիշխանութիւն թագաւորութեան, զի ինչ մի յայսցանէ որ գործիցի՝ ոչ ծածկեսցի 'ի նմանէն։

Անուանեալ իսկ լինէր ընդ ամենայն Պաղեստին յարութիւն Փրկչին մերոյ որ եղև 'ի մեռելոց։ Պիղատոս այնուհետև Տիբերեայ աղքայի եցոյց վասն նշանացն Տեառն մերոյ, և զի յետ յարութեանն 'ի մեռելոց՝ հաւատարիմ եղև բազմաց եթէ Աստուած է։ Իսկ ինքն Տիբերիոս սինկղիտոսին մատոյց զայս բանս. իսկ ինքն սինկղիտոսն իբրև լուաւ զբանսն արհամարհեաց, զի ոչ քննեցաւ նա նախ 'ի նմանէ ըստ առաջին սովորութեանն որ էր. զի'ի մէջ Հռոմոց ոչ լինէր Աստուած, բայց եթէ 'ի խորհրդենէ և 'ի հրամանէ սինկղիտոսին։ Բայց կարծելով կարծեալ էր եթէ վասն այսր իսկ Ճշմարտիւ, վասն զի չէր պարտ և պատշաճ եթէ իրաւամբք և խորհրդով մարդկան հաստատեսցի կենդանի վարդապետութիւն Աստուծոյ. այլ իբրև մերժեաց զբանն որ մատուցաւ ժողովոյն խորհրդեանն Հռոմայեցւոց վասն փրկչին մերոյ, ինքն Տիբերիոս եկաց ճնաց յառաջին խորհուրդն զոր ունէր, և տգէղ իրս ինչ վասն վարդապետութեան Քրիստոսի ոչ խորհէր նա։ Զայս ինչ ասաց Տերտեղիանոս, այր որ սպառսպուռ տեղեակ էր օրինաց Հռոմոց, որ և այլովք իրօք աքանչելի էր, և 'ի նշանաւոր և 'ի պքանչելի մարդկանէ անտի որ էին 'ի Հռովմ քաղաքի էր նա. զպա-

տասխանին զոր արար նա փոխանակ քրիստոնէից հոռո-
մարէն, և մեկնեցաւ յունարէն, եդ նա 'ի բանս իւր
'ի պատմելն իւրում այսպէս. Աղէ մեք առաքեսցուք
ասէ և 'ի բնութենէ վասն այսց օրինաց. օրէնս հինս
ունիք դուք, եթէ Աստուած 'ի հրամանէ թագաւորի
միայնոյ մի՛ հաստատեսցի, մինչև փորձեալ քննեսցի նա
'ի սինկղիտոսէ։ Մարկոս Աւրելոս այսպէս արար վասն
պատկերի միոյ զԲորոնոս. այս փոխանակ ընդ մեր եղև,
զի առ ձեզ 'ի քննութենէ մարդկան լուեալ լինի աս-
տուածութիւն։ Եւ արդ այսուհետև թէ ոչ լինի հա-
ճոյ Աստուածն մարդոյն, Աստուած լինել նա ոչ կարէ.
և իբրև յայսմանէ մարդոյն արժան է քաւել զԱս-
տուածն։ Արդ Տիբերիոս որ յաւուրս նորա եմուտ յաշ-
խարհ անունն քրիստոնէից, իբրև ցուցին նմա յաշ-
խարհէ անտի Պաղեստինացւոց ուստի սկիզբն եղև զա-
ռաջին այսր վարդապետութեան, և նա եցոյց սինկղի-
տոսին, գիտաց իսկ եթէ հաճոյ եղև նմա այս վարդա-
պետութիւն։ Իսկ սինկղիտոսն, վասն զի ինքն ոչ քըն-
նեաց յառաջագոյն զիրս զայս՝ արհամարհեաց զնոսաւ։
Իսկ նա եկաց մնաց 'ի հրամանի իւրում, և սպանումն
մահու սպառնացաւ նա ամենայնի որ չարախօս կաց-
ցեն զքրիստոնէից. և այն 'ի փութոյ անտի երկնաւոր
տեսչութենէն եղև 'ի սիրտս նորա, զի ցայն ժամ ըս-
կիզբն էր աւետարանին. զի անխափան և անարգել
ընդ ամենայն երկիր ընթացցի վարդապետութիւնն
բանին։

Եւսեբեայ Եկեղեց. Պատմ. Գիրք Բ, գլ. Բ։

Գ.

Սրբոյ առաքելոյն Թադէոսի պատմութիւն յաղագս առաջին գիւտի սուրբ խաչին որ յաշուշրս Յակովբոյ առաքելոյն 'ի ձեռն թագուհւոյն Պատրոնիկեայ, որ էր կին Կղաւդեայ կայսեր Հռովմայ։

Եւ արդ պատմեցից ձեզ վասն սուրբ խաչին՝ որ 'ի ձեռն հաւատացելոց՝ որ իբրև զձեզդ էին՝ եր։ եցաւ աքանչելի զօրութեամբ սուրբ խաչն Քրիստոսի։ Կին ոմն Պատրոնիկէ անուն, Կղաւդիայ կայսր կին, որ եր։ կրոդ էր 'ի Հռոմ Կղաւդիոս յետ Տիբերայ կայսեր. և եղև երթալ Կղաւդէի կայսեր 'ի պատերազմ 'ի Սպանիայ, ոչք ապստամբեցան 'ի նմանէ։ Ընդ ժամանակս ընդ այնոսիկ էր Պետրոս 'ի Հռոմ քաղաքի, որ էր գլուխ աշակերտացն Քրիստոսի. տեսեալ կնոջն Պատրոնիկէ զնշանսն և զաքանչելիսն և զօրութիւնսն՝ զոր առնէր յանուն Յիսուսի Պետրոս, զարմանայր և հաւատայր յԱստուած և արհամարհէր զկուռսն և զնոտի պաշտամունսն՝ որոց երկիր պագանէր. և հաւատաց յԱստուած հայր մեր և 'ի տէր մեր Յիսուս Քրիստոս և 'ի Հոգին սուրբ. և ընդունէր մկրտութիւն և փառաւորէր զԱստուած ընդ քրիստոնեայսն. և պատուէր և մեծարէր զսուրբ առաքեալն Պետրոս, և յօժարութեամբ լսէր նմա։

Եւ յետ այսորիկ կամեցաւ երթալ յԵրուսաղէմ և տեսանել զտեղիսն զայնոսիկ՝ յորս շրջեցաւ Քրիստոս, և արար անդ զօրութիւնս։ Եւ փութապէս գնաց 'ի Հռովմայ և եկն յԵրուսաղէմ, ինքն և երեք որդիք իւր և երկու դստերք. և մինն էր կոյս. այլ ևս քաջմութիւն ընդ իւր, որպէս թագուհւոյ մեծափառութեամբ եկեալ։ Եւ 'ի մտանել նորա յԵրուսաղէմ ելին ընդ առաջ նորա ամենայն քաղաքն և ընկալան զնա մեծաւ պատուով որպէս զդշխոյ և զտիկին Հռոմէա։

ցոց աշխարհին։ Եւ Յակոբոս էր առաջնորդ եկեղեցւոյն Երուսաղէմի. իբրև լուաւ զթագուհւոյն թէ քրիստոսական հաւատոյն է՝ եկն առ թագուհին, որ էր յապարանսն Հերովդէի։ Իբրև ետես կինն զՅակովբոս՝ ուրախ եղև. և ընկալաւ զնա մեծաւ պատուով որպէս զՊետրոսն. և պատմեաց զօրութիւնսն և զբարեշկութիւնսն Քրիստոսի Յակովբոս՝ տիկնոջն. զտեղիսն՝ զոր յայտնեաց զաբանչելիսն Քրիստոս որդին Աստուծոյ։ Եւ ասէ դշխոյն ցՅակովբոս. ցոյց ինձ զԳողգոթայն ուր խաչեցաւն Քրիստոս 'ի Հրէից, և զխաչափայտն զորմէ կախեցաւ Քրիստոս, և զգերեզմանն նորա։ Ասէ ցնա Յակովբոս. այդ ոչ է ընդ մեր իշխանութեամբ, այլ Հրեայքն իշխեն, և ոչ տան երթալ 'ի Գողգոթայն և յարութիւնն, և ոչ զխաչն ցուցանեն մեզ. այլ և հալածեն զմեզ, և 'ի բանդ և 'ի կապանս արկանեն և 'ի նեղութիւնս բազումս կեղեն զմեզ. զի մի՛ քարոզեսցուք զաւետարանն փրկութեան յանուն Քրիստոսի որով փրկեցան տիեզերք։ Իբրև լուաւ զայս թագուհին հրամայեաց կոչել զգլխաւորս Հրէից, զքահանայս և զհրամանատարս, զՅոնիայ որդի Անանիայ և զԳողոզիա որդի Կայափայ, և զՅուդա որդի Արդասողոմայ. և ածեն զնոսա. ասէ ցնոսա տիկինն. Տուք 'ի ձեռս Յակովբայ և ընկերաց իւրոց զԳողգոթայն և զգերեզմանն, և զխաչափայտն Քրիստոսի. և մի՛ ոք իշխեսցէ արգելուլ զդոսա ըստ պաշտաման իւրեանց սպասաւորել տեղեացն սրբութեան։ Եւ զայս ասացեալ ցնոսա՝ յարուցեալ ինքնին և որդիք իւր և դստերք իւր և ոք ընդ նմայն էին տեսանել զտեղիսն սրբութեան. և յանձն առնել Յակովբայ և ոք նորայն էին։ Եւ եկն եմուտ 'ի գերեզմանն հանդերձ ուստերօք և դստերօք իւրովք։ Եւ եգիտ երիս խաչս և ոչ գիտէր ո՞ր էր Քրիստոսին. 'ի նոյն ժամու անկաւ կոյս դուստրն իւր և Եհան զոգին առանց պատճառի իրիք։ Իբրև ետես դշխոյն երթէ մեռաւ դուստրն իւր յանկարծակի առանց վնասու, ամբարձեալ զաչս իւր և ծունր կրկնեալ կայր յաղօթս առ Տէր և ասէր. Քրիստոս Աստուած, որ ետուր զանձն քո 'ի մահ փոխանակ ամենայն արարածոյ, և երեր 'ի խաչ 'ի տեղւոջս յայսոսիկ վասն փրկութեան ամենայն մարդ-

կան. և մեռար և եդար 'ի գերեզմանիս այսմիկ, զի կեցուցես զամենեսեան որք իցեն 'ի գերեզմանս. և յարեար որպէս զԱստուած կենդանարար ամի, և յարութեամբդ քո յարուցեր զբազումս ընդ քեզ. և արդ Տէր Աստուած ամենայնի, լուիցեն հեթանոսք և Հրեայք խաչահանուք, և ոտնհար լինիցին ամենեքեան նոքա ինձ. և հեթանոսք մոլորեալք կռոցն պաշտոնեայք, և երկրպագուք դրօշելոցն՝ յորոց դարձայ ես յաստուածգիտութիւն, այժմ ուրախասցին այսն առնելով զիս, և ասասցեն. այս եղև նմա յաղագս թողլոյ սորա զաստուածսն և խոստովանելոյ զՔրիստոս՝ զոր ոչ գիտէր. և երթեալ պատուել զտեղի խաչելութեանն և զգերեզմանն որպէս Աստուծոյ։ Աղաչեմ զքեզ Քրիստոս փրկիչ աշխարհի, լուր պաղատանաց աղախնոյ քո վասն փառաւորեալ անուանդ քո սրբոյ. մի արդելուր զշնորհս բարերարութեանդ վասն անարժանութեանս իմոյ, որ փոխանակ արարչիդ պաշտեցի զարարածս. այլ վասն փառաց անուանդ քո ցոյց զբաքանչելիս այժմ, և արա առ մեզ զնշանդ քո բարի, զի մի հայհոյեսցի անունդ քո սուրբ 'ի թշնամեաց խաչի քո։ Քրիստոս փրկիչ իմ, մի անտես առներ զյուսացեալքս և զապաւինեալքս 'ի քեզ։

Եւ բազում հառաչանօք և արտասուօք գոչէր առ Տէր, զի արասցէ այցելութիւն որպէս զԱստուած։ Մատուցեալ առ դշխոյն երեց որդին իւր ասէ. Լուր ինձ մայր իմ զոր ասեմն. ինձ այսպէս թուի 'ի խորհուրդս իմ թէ մահս որ յանկարծահաս եղև քեռս իմոյ, ոչ եթէ ընդունայն ինչ եղև մահդ, այլ նորաբանչ և հրաշալի զարմանս զմտաւ ածցես. զի փառաւորեսցի մեծ անունն Քրիստոսի, և ոչ եթէ հայհոյեսցի վասն մահու սորա, որպէս կարծեն չարքն։ Ահաւասիկ մնաք 'ի գերեզմանս և երիս խաչս տեսաք, և ոչ է յայտ եթէ ո՞ր է Քրիստոսին՝ յորոյ վերայ խաչեցաւն և եհեղ ըզսուրբ արիւն իւր, և ո՞ր աւազակացն էն որ ընդ Քրիստոսի խաչեցան 'ի Հրէից. արդ այժմ մահուամբ քեռս իմոյ յայտնի զօրութիւն սուրբ խաչին՝ յորում խաչեցաւ Քրիստոս Աստուած. քանզի ոչ անփոյթ առնէ Քրիստոս վասն այնոցիկ որք հաւատան 'ի նա և խնդրեն զողորմութեան շնորհն։ Յայնժամ թագուհին ընկա-

լաւ զասացեալն յորդւոյն իւրոյ. և հաւատաց եթէ 'ի վերին շնորհացն ազդեցաւ նմա. և փոքր ինչ սթափեցաւ 'ի դառն սգոյն. և մատուցեալ առ զմի 'ի խաչափայտիցն և եդ 'ի վերայ մեռելոյ դստերն իւրոյ. և կացեալ յաղօթս առ Տէր և ասէ. Քրիստոս Փրկիչ աշխարհի, որ ցուցեր զզօրութիւնս և զքանչելիս մեծամեծս 'ի տեղւոջ յայսմիկ, որպէս լուաք և հաւատացաք 'ի քեզ. Յիսուս Փրկիչ և կեցուցիչ, եթէ քո է խաչս այս և 'ի սմա բևեռեցար և տարածեցեր ըզձեռս զամենազօր, յայտնեա զզօրութիւն մեծութեան աստուածութեանդ քո, որ առեր մարմին 'ի սուրբ կուսէն Մարիամայ, և եղեր մարդ և չարչարեցար, և խաչեցար և եդար 'ի գերեզմանս յայսմ և յերրորդ յաւուր յարեար, և յարութիւն պարգևեցեր ազգի մարդկան, և այժմ կենդանացի զդուստրս իմ յանուն քո խաչիդ. և փառաւորեացիս Տէր 'ի դառնալ ոգւոյս սորա առ սա։ Եւ ամաչեսցեն Հրեայք խաչահանունք և հեթանոսք խաւարեալք 'ի Ճշմարիտ լուսոյդ և հաւատացեալք օրհնեսցեն զքեզ Քրիստոս Աստուած որ ես Տէր երկնի և երկրի։

Եւ ասացեալ զաղօթս զայս, լուռ լինէր իբրև ժամ մի. և ոչ ինչ երևէր զօրութիւն խաչին. և 'ի բաց առեալ՝ դնէր զմիւսն, և դարձեալ կայր յաղօթս արտասուօք և հառաչանօք, և ասէր զայս. Տէր Աստուած, որ յակնարկելդ քո արարան արարածք ամենայն երևելիք և աներևոյթք, և հրամանով քով հաստատեալ կան եղեալքս առ 'ի քէն. Աստուած և արարիչ յաւիտենական, որ եկիր 'ի փրկել զտիեզերս ամենայն՝ կամաւոր խաչելութեամբ քո, և կամիս զկեանս ամենայն մարդոյ՝ զի կեցցեն և 'ի գիտութիւն Ճշմարտութեան եկեսցեն, զի դու ես մարդասէր փրկիչ. Քրիստոս յոյս հաւատացելոց, եթէ քո է խաչս՝ յորոյ վերայ հեղեր զսուրբ զարիւնդ քո, յայտնեա զզօրութիւնդ քո և կենդանացո զդուստր իմ որ բազում մեռելոց յարութիւն պարգևեցեր քոյոց հաւատացելոց, վասն անուանդ քո սրբոյ. և լիցի ուրախութիւն հաւատացելոց 'ի ձեռն երևման զքանչելեաց քո. և նկուն լիցին ատելիք Ճշմարտութեանն Հրեայք և հեթանոսք որք ոչ հաւատացին զալստեան քո և կամա-

ւոր չարչարանաց, և 'ի վերայ մեծամեծ սքանչելեաց քոց զոր սովոր ես առնել. և այժմ երևեցիր դատերս իմոյ, և մեք արժանաւոր լիցուք փառաւորել զքեզ Քրիստոս Յիսուս, ամենայն հաւատացելոց յոյս և ապաւէն և օգնական. և Ձնմարտեալք սիրով ընդ ամենայն հաւատացեալս հանցուք օրհնութիւն քում ամենազօր տէրութեանդ։

Եւ ասացեալ նորա զայս լուռ եղեալ իբրև ժամն երկուս, ոչ ինչ ցուցանէր խաչն զզօրութիւն սքանչելեացն որպէս յուսայր Թագուհին 'ի Տէր։ Եւ յետ այսր ամենայնի 'ի բաց առեալ և զայն ևս խաչ 'ի դատերէ իւրմէ, և առեալ զերրորդ խաչն դնէր 'ի վերայ նորա. և մինչդեռ կամէր համբառնալ զձեռս իւր և հայել 'ի բարձունս և բանալ զբերան իւր յաղօթս առ Աստուած որդւովք իւրովք, նոյն ժամայն 'ի մերձենալ խաչին իսկ և իսկ 'ի դիակն, յական թօթափել յանկարծակի դուստր նորա յարեաւ 'ի մեռելոց, և յարուցեալ փառաւորէր և օրհնէր զԱստուած, որով խաչիւն իւրով սրբով կեցոյց զնա։ Իբրև եռես տիկինն եթէ 'ի զօրութենէ խաչին վաղվաղակի յարեաւ դուստր նորա 'ի մեռելոց, զարհուրեալ հիացաւ յոյժ. և անկեալ 'ի վերայ երեսաց իւրոց երկիր պագանէր, և համբուրէր զսուրբ խաչն Քրիստոսի, և գոհանայր 'ի վերայ անպատում սքանչելեացն զոր եցոյց Տէր 'ի ձեռն զօրութեան իւրոյ սուրբ խաչին. և փառաւորէր որդւովքն իւրովք և դստերովքն զՏէր ամենակալ։ Եւ առաւել ևս հաստատէին 'ի հաւատն որ 'ի Քրիստոս Յա և 'ի սուրբ խաչ նորին, թէ արդարև Քրիստոս է որդի Աստուծոյ, և այս խաչս է նորա, որ և կենագործէ զհաւատացեալս իւր նովաւ. և ապաւէն և օգնական և պահապան հաւատացելոց, և յաղթութեաննշանակ ընդդէմ երևելի և աներևոյթ թշնամոյն, որք հակառակին Ձնմարտութեան աւանդից որ 'ի Քրիստոս Յիսուս։ Ասէ ցթագուհին որդին իւր, թէ այսպէս չէր լեալ ոչ էր յայտնեալ զօրութիւն սուրբ խաչին Քրիստոսի, և ոչընչութիւն աւաղակաց խաչին։ Ահա այսուհետև սուրբ խաչն Քրիստոսի մեծասցի, և մեք ուրախասցուք 'ի սքանչելի զօրութիւն նորա. և Քրիստոս Աստուած փառաւորեսցի սովաւ այժմ և յաւիտեանս։

Եւ եւ զխաչն Քրիստոսի 'ի Յակոբոս զի զգուշութեամբ պատուեսցի. և հրամայեաց շինել եկեղեցի 'ի Գողգոթայ ուր խաչեցաւն Քրիստոս, և 'ի գերեզմանին ուր թաղեցաւն. և զամենայն սուրբ տեղիսն պատուեսցեն շինուածովք, զի լինիցին ժողովրդանոցք պաշտամանն, որ օրհնի Քրիստոս 'ի տուէ և 'ի գիշերի։ Եւ տեսեալ դշխոյին զամենայն քաղաքն ժողովեալ 'ի տեսիլ մեծի սքանչելեացն, հրամայեաց դստերն իւրոյ՝ յորոյ վերայ զօրութիւն սուրբ խաչին ցուցաւ, զի առանց սքողելոյ երևեսցի ժողովոյն՝ որ կամէին տեսանել, որպէս զի տեսեալ զնա փառաւորեսցեն զԱստուած 'ի վերայ անպատում սքանչելեացն որ 'ի նմա եցոյց 'ի ձեռն սուրբ խաչին. զի հաւատացեալք ուրախ լինիցին, և թշնամիք խաչին և ատելիք խաչին Քրիստոսին յամօթ լինիցին։ Բայց ժողովք Հրէից և հեթանոսաց ուրացողաց յոյժ տրտմեցան ընդ հրաշագործութիւնն որ եղեն 'ի գալատեան հաւատացեալ դշխոյին. զի տեսանէին զբազումս որ հաւատային 'ի Տէր, և համբաւ նշանացն յամենայն տեղիս պատմէր և մեծանայր անուն Տեառն, և փառաւոր լինէր 'ի վերայ զարմանագործութեանցն։ Եւ եղև խաղաղութիւն մեծ ամենայն եկեղեցւոյն յԵրուսաղէմ, և 'ի քաղաքսն որ շուրջ զնովաւ են. և լուեալ զայս ամենեցուն տային օրհնութիւն Աստուծոյ։

Եւ յետ այսր ամենայնի Ելդշխոյն յԵրուսաղեմ իւրովքն ամենեքեանքն զի երթիցէ 'ի Հռովմ։ և ուր հասանէր 'ի քաղաքսն ամենեքին (գային) 'ի տեսութիւն դստերն իւրոյ յարուցելոյ 'ի մեռելոց, և ուսանէին զսքանչելեացն երևումն 'ի ձեռն սուրբ խաչին Քրիստոսի Աստուծոյ։ Եւ եմուտ 'ի Հռովմ դշխոյն և պատմեաց Կղաւդեայ կայսեր զամենայն եղեալսն յանուն Քրիստոսի 'ի ձեռն սուրբ խաչին զօրութեան, որ երևեցաւ դստեր նորա կուսի յԵրուսաղեմ, մեռանել և յառնել։ Եւ լուեալ կայսերն փառաւորեաց զԱստուած և հրամայեաց զամենայն Հրեայսն հալածել 'ի Հռովմայ։ Պատմէր դշխոյն Պետրոսի զսքանչելիսն որ եղեն. նաև ամենեցուն պատմէր զզօրութիւն սուրբ խաչին Քրիստոսի. և ամենեքեան լուեալ փառաւորէին զԱստուած։

Արդ զամենայն որ պատմեցաւս 'ի միտ առէք և հաւատացէք 'ի Քրիստոս, և ունկնցիք զսուրբ խաչն կենցուցիչ և ապաւէն հաւատացելոց որք յուսան 'ի Քրիստոս։ Եւ Յակովբոս էր առաջնորդ եկեղեցւոյն Երուսաղէմի, որ էր այր հաւատարիմ 'ի Տէր, որ և գրեացն զայս, զոր ետես ինքն և Ծանոյց առաքելոցն, որք էին քարոզք Քրիստոսի, և ընկերք Յակովբայ. նմանապէս և նոքա քարոզեն և ցուցանեն զզօրութիւն և զքանչելիսն որ 'ի Քրիստոս։

Եւ զկնի մահուան Կղաւդեայ և Պատրոնիկեայ Հրրեայքն գրգռեալ 'ի վերայ հաւատացելոցն, և յարուցեալ հալածանս և փախստական արարեալ զհաւատացեալսն. և 'ի նմին ժամու յաղագս սորին պատմութեան առեալ թաղեցին յերկրի տեղւոջ Գագաթանն մինչև ցայս օր. զի յամենեցունց փառաւորեսցի սուրբ Երրորդութիւնն, այժմ և միշտ և յաւիտեանս։

ՃԱՌԸՆՏԻՐ ԳԻՐՔ

ՑԱՆԿ ԱՆՈՒԱՆՑ

Աբաթասղովմ 13. 63
Աբգար 1. 2. 3. 4. (սուէպ)
Աբգաշարագ 51
Աբգասղովմ. տ. Աբաթասղովմ.
Աբգեխա 18
Աբգէ կամ Աբգու 7
Աբգիու 7. 9. 18. 30. 38
Աբգու 58
Աբեգարու 31
Աբեթշէմեա 18
Աբշղամա 32 ծ. 38. 44. 49ծ. 50ծ. 56
Աբուբեա 30
Աբուգացիք 24 ծ.
Ագգէ 6 ծ.
Ագգէոս 7 ծ. 32 ծ. 38 ծ. 46ծ. 49 ծ.
Ագէ (Թագէոս) 6. 7. 8. 9. 11. (սուէպ)
Ագէ եպիսկոպոս 48
Աղի 18
Աղձնիք 2 ծ.
Ամեղոս. տ. Մարկոս
Անակ 51
Անահիտ 24 ծ.
Անան 2. 3. 4. 5. 13. 30 ծ. 51
Անանիա 56. 57. 63
Աննա 51 ծ.
Անտիոք 49. 50
Ապահունիք 2 ծ.
Ասկաղոն 2 ծ.
Ասորեստան 34 ծ. 38
Ասորեստանեայք 35
Ասորիք 2. 34
Արաբացիք 24
Արատիկէ 37
Արատուկա 37 ծ.
Արիու 46 ծ.
Արիստիդէս 37
Արծուիք դիք 24
Արշամ 1 ծ. 4 ծ. 10 ծ.
Արտաշէս Պարթև 34 ծ.
Արտեդիոս 37
Աւագ-այր 1 ծ.
Աւգոստինիա 10
Աւգոստոս կայսր 11 ծ.
Աւեստարանք 43
Աւիդա 18. 31. 38 ծ.
Աւլբինոս 36 ծ.
Աքպար 1 ծ.
Բաբելացիք 24 ծ.
Բաթնիքաղ 24 ծ.
Բարգածան 2 ծ.
Բարգինոս 49 ծ.
Բար-Մագարտատ 50 ծ.
Բարշամիա եպիս. 50 ծ.
Բարշամէա 2 ծ. 38
Բարշղամա 32
Բարսեմի 32. 50 ծ.
Բարքաղաբա 18. 31
Բեթբարա 18
Բեթքուբրին 2
Բեսին 24 ծ.
Բէլ 24. 31. 41
Բէլ-Շէմին 24 ծ.
Բղյանոս 36
Բորոնոս 61
Բուլիդուս 49 ծ. 50 ծ.
Գալիլիա 21
Գամաղիէլ 4
Գայիանէ 11 ծ.
Գայիոս կայսր 37
Գէլասիոս պապ 5 ծ.
Գիւտ Խաչի 12 ծ.

Գոթոդիա 63
Գոդգոթա 13. 63. 67
Գովգ 47 ծ.
Գործք Առաքելոց 43
Գորմու 30
Գուդք 47 ծ.
Դանկով 31
Դաւիթ Անյաղթ 11 ծ.
Դիկու 31 ծ.
Եբրայեցիք 21
Եգեսացիք 6 ծ.
Եգեսիա 1. 2. 6 ծ. 19 ծ. 24 ծ. 30 ծ. և այլն:
Եղեւթերիոս պապ 50 ծ.
Եղեւթրոպոլիս 2
Եղիոս Լամիա 36 ծ.
Եմեսացիք 2 ծ.
Եսայի 5 ծ. 20 ծ.
Երուսաղէմ 13. 17. 19. 39. 56. 57. 62. 63. 67. 68
Եւսեբիոս 4 ծ. 5 ծ. 7 ծ. 27 ծ. 37 ծ.
Եւստորգիոս 2
Եփեսոս 43
Եփրատ 8 ծ. 55
Էփրեմ (Ս.) 27 ծ.
Զատէ 38
Զաքարիա աշակ. Թադէի 49 ծ.
Զեբեդէոս 43
Զեփիրինոս 50
Իպէտաշադդայի 51 ծ.
Թադէոս աշակերտ Ադդէոսի 7 ծ.
Թադէոս առաքեալ (Ղեբէոս) 6 ծ.
Թադէոս Յեսթանանիցի 6 ծ. 7 ծ. 32 ծ. 38. 43 ծ. 45 ծ. 46 ծ. 47 ծ. 50 ծ. 55 ծ. 56. 57. 58. 62. տ. և Ադէ
Թարաթա 24 ծ.
Թարթա 24
Թիկունդա. տ. Նուիթիկոնեա
Թոմիսա առաքեալ 6. 7 ծ. 56. 57
Թոմիսա Արծրունի 12 ծ. 19 ծ.
Իտալիա 17
Լաբուբնա 19 ծ.
Լուսնի դիք 24 ծ.
Լուսիոս 50 ծ.
Խառան 24 ծ.
Խառանացիք 19. 24
Խափէս 18
Խոսրան արծրունի 19 ծ.
Խոսրոն 19
Խուժաստան 47 ծ.
Կալիգուլա 37 ծ.
Կայիափա 13. 63
Կայուսիոս 50 ծ.
Կապրէա կղզի 12 ծ. 37 ծ. 51 ծ.
Կեդրենոս 48 ծ.
Կեսարիա Փիլիպպէայ 21 ծ.
Կղաւդիանոս կայսր 12. 17. 37. 51 ծ. 68
Կղաւդիոս
Հայք 6 ծ. 7 ծ. 8 ծ. 19 ծ. 38 ծ. 45 ծ.
Հայք Ա 46 ծ.
Հայք Մեծ 49 ծ.
Հանան 51 ծ.
Հեղինէ 10 ծ. 16 ծ. 19 ծ.
Հերոդ որդի Աբգարու 30 ծ.
Հերոդէս 13. 19 ծ. 63
Հոռոմք. տ. Հռոմայեցիք
Հռիփսիմէ 11 ծ.
Հռիփսիմեանք 12 ծ.
Հռոմ 12 ծ. 13. 17. 19. 43. 50. 58. 60. 62. 67
Հռոմայեցիք 1. 8. 13. 35. 45 ծ. 60
Հրէայք 13. 19. 21. 36. 37. 40. 44. 56. 63. 64. 65. 67. 68
Ղաբբու 18
Ղեբէոս 6 ծ.
Ղերուբնա 19 ծ.
Ղբուբնեա 51
Ղուբուբնեա 19. 50 ծ.
Ղուկաս 32 ծ. 42 ծ.
Մանու 1 ծ. 30
Մաբուգ 24 ծ.
Մագովգ 47 ծ.
Մանով 1
Մառինոս 2 ծ.
Մարիաբոս 50 ծ.
ՄԱՐԻԱՄ ԿՈՅՍ 65
Մար-Իհաբ 2. 3. 38. 50 ծ.
Մարիոս սպանիացի 12 ծ.
Մարկոս Ամեղոս 61
Մաւսորիոս 2 ծ.
Միխայէլ Ասորի 6 ծ.
Միհրդատ 10. 17
Միջագետք 7 ծ. 21 ծ. 25 ծ. 32. 46
Միջագետք Ասորւոց 1
Մծբին 19. 46 ծ.
Մմբէճ 24 ծ.
Մովսէս Խորենացի (սակայն 'ի ծանոթ.)

Յակովբայ խաչ 11 ծ.
Յակովբոս առաքեալ 13. 16. 17. 62–68
Յակովբ Սրձեցի 24 ծ.
Յանոս 24 ծ.
ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ 4 ծ. 8. 9. 12. 16. 19
Յոնիա 63
Յովհաննէս աւետ. 20 ծ. 43
Յովսեպոս 10 ծ.
Յորդանան 21
Յուդա առաքեալ 47 ծ. 57
Յուդա որդի Աբաթսաղ. 15. 65
Յուլիանոս կայսր 24 ծ.
Յունաց թագաւորութիւն 1
Նաբիք 24 ծ.
Նաբոդ 24 ծ. | Նաբոյ 24. 41. 47 |
Նաբու 31
Նեսրագ 24 ծ.
Նեբսեհ 34. 35
Նինուէ 34 ծ.
Նուիթիկոնիթա 37
Շաղամաթ. տ. Շղամաթէ
Շամշադրամ 2. 3. 18. 19. 30
Շամշէ 30 ծ.
Շարագ 31 ծ.
Շաբբեւա 30 ծ.
Շաբիր 31 ծ.
Շաւիդա 31
Շղամաթէ 10. 17. 30
Որդիւդիա 37 ծ.
Ուշամա 1 ծ. 4 ծ.
Ուռհա 1 ծ. 3. 4. 6. 29. 37. 38. տ. Եդեսիա
Ուքան 4 ծ.
Պալուտ (Փլոտ) 32 ծ. 50 ծ.
Պաղեստին 4. 21. 27. 31. 35. 37. 60. 61
Պաղեստինացիք 3. 7
Պանէաս 21 ծ.
Պասրիկ 38
Պատրոնիկէ 11. 12. 15. 16. 62. 68
Պարթեւք 7 ծ. 10 ծ. 38 ծ. 47 ծ.
Պարսիկք 33 ծ. 47 ծ.
Պաւղոս 43
Պետրոս առաքեալ 12. 43. 50 ծ. 62. 63. 67
Պերոզ 31. 38 ծ.
Պէյթ–Ճէպրին 2 ծ.
Պիզատոս 36. 60
Պլինիոս 36 ծ.
Պորփիւրոժէն 48 ծ.
Ռաբիհաբ 2 ծ.
Ռէա դիք 24 ծ.
Ռուփինոս 2 ծ. 3 ծ.
Սաբէացիք 24 ծ.
Սաբինա 2 ծ. 8 ծ.
Սաբինոս 2
Սահակ Պարթեւ 32 ծ.
Սամարացիք 27
Սամփսիգերամոս 2 ծ.
Սանատրուկ 19 ծ.
Սանիր 21. 22 ծ.
Սանոս 19 ծ.
Սենասար 21 ծ.
Սենակ 38 ծ.
Սենեքերիմ 2 ծ.
Սեւերոս որդի Աբգարու 30 ծ.
Սիմոն Պետրոս 13. 17. 34 ծ.
Սիրակուսա 37 ծ.
Սնակ 38
Սողոմոն եպիս. Ասորի 6 ծ.
Սպանիա 37 ծ.
Սպանիացիք 12. 26. 37 ծ. 19 ծ.
Սարաբոն 2 ծ.
Սրապիոնէ եպիս. 50
Վիկտոր պապ 50 ծ.
Վխտեղիոս 36 ծ.
Տակիտոս 7 ծ. 12 ծ. 36 ծ. 38 ծ.
Տատիանոս 33 ծ.
Տերտուղիանոս 37 ծ. 60
Տիբերիոս 1. 8. 12. 35. 36. 37. 50. 51. 60. 61. 62
Տիգրան 1 ծ.
Տուբիա 7. 57
Տուբիադաս 57 | Տուբիթ 7 |
Տրայիանոս 32 ծ.
Տրաքոնացիք 37 ծ.
Փաբիանոս պապ 50 ծ.
Փիւնիկեցիք 3
Փլոտ կամ Փղոտ 32. 38. 44. 49. 50 ծ.
Փոկրեա 18
Քաղդէացիք 24 ծ. 33
ՔՐԻՍՏՈՍ 17. 18. 19. 31. 39. 65. 66. տ. Յիսուս: